



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 971 -Ա/2

«29» հունիսի 2023 թ.

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ 30 ԿՐԵԴԻՏ ՏՐԱՄԱԴՐՈՂ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄՈԴՈՒԼՆԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի
1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և «Հանրակրթության
մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Գործածության երաշխավորել՝

1) մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող
մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման
դասընթացի մոդուլները՝ համաձայն Հավելվածի:

X 

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: MARTIROSYAN ARTUR 4110790255 * Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

/պարտականությունները կատարող/



Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի հունիսի 29-ի N 971-Ն/2 հրամանի

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ 30 ԿՐԵԴԻՏ ՏՐԱՄԱԴՐՈՂ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(ՄՈՂՈՒԼ)

Համակարգող՝ Վաղինակ Նազարյան

Վանաձոր
2023 թ.



Համաձայն ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին [/https://www.arlis.am/documentView.aspx?docid=160449/](https://www.arlis.am/documentView.aspx?docid=160449) փաստաթղթի 26-րդ հոդվածի/ ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը / 1-ին մասի, առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը;

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (FS&U) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության և դաստիարակության համակարգը վերաիմաստավորել է իր գերակայությունները՝ շեշտադրելով սովորողակենտրոն մոտեցման, սովորողի անձնային ներուժի զարգացման և մասնագիտական դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու հմտությունների ձևավորման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք դիտարկվում է ազատ, կրթված, զարգացած անհատը, որն ընդունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհում, լինել մրցունակ, ինտեգրվել համաշխարհային հանրության մեջ:

Կրթական ոլորտը, արձագանքելով նոր ժամանակների մարտահրավերներին, կարիք ունի նոր մարդու, որն ունակ է ինքնուրույն գործել, ունի սեփական դիրքորոշում, ստեղծագործական մտածողություն և ինքնիրացման կարողություններ:

Վերջին տասնամյակում կրթության և մասնավորապես մանկավարժության ոլորտում կատարված բարեփոխումներն այսօր պահանջում են մանկավարժի այնպիսի պատրաստվածություն, որտեղ կհամակցվեն հին մանկավարժության լավագույն ավանդույթները և նորի առավելությունները: Ըստ այդմ, կրթական ոլորտին անհրաժեշտ են մանկավարժներ, ովքեր բաց են յուրաքանչյուր նորի համար, ընդունակ են արագ հարմարվել մասնագիտական և սոցիալական իրականության բարդ պայմաններին, ինքնուրույն և պատասխանատվությամբ ընդունել որոշումներ, անընդհատ ինքնակատարելագործվել և ինքնակրթվել:

Ազատ ու լայնախոհ, իր գործունեության արդյունքները կանխատեսող և կրթական գործընթացն այդ արդյունքներին համապատասխան մոդելավորող ուսուցիչն առաջադրված խնդիրների իրականացման երաշխիքն է: Դա է պատճառը, որ ներկայումս կտրուկ աճել է բարձր որակավորում ունեցող, ստեղծագործական մտածողությամբ օժտված ուսուցիչների պահանջարկը, ովքեր



ընդունակ են ժամանակակից աշխարհում դաստիարակել ներդաշնակորեն զարգացած և մրցունակ անհատ: Նման խնդիր կարող են լուծել միայն իրապես կոմպետենտ ուսուցիչները, ովքեր ունեն ստեղծագործական և ոչ ստանդարտ մտածելակերպ, ցանկացած բարդ իրավիճակում կարող են վստահ որոշումներ կայացնել, առաջարկել մանկավարժական խնդիրների գրագետ լուծումներ:

Ուստի ներկայումս առավել արդիական է դարձել ուսուցչի մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության ձևավորումը:

Մանկավարժական գործունեությունն ուսուցչից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ բարելավում: Այդ նպատակին է ուղղված **մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող** մանկավարժների հավաստագրման մասնագիտական զարգացման սույն դասընթացը, որը, որպես շարունակական կրթության ապահովման անբաժանելի մաս, կոչված է նպաստելու ներկա կրթական բարեփոխումների իրականացմանը և նրա որակի ու արդյունավետության բարձրացմանը:

Դասընթացը իրականացվելու է համագործակցային, ինտերակտիվ, նախագծային և այլ մեթոդների կիրառմամբ:

Ավարտական հետազոտական աշխատանքը կատարելիս բոլոր մասնակիցները կստանան խորհրդատվություն, խմբային և անհատական աշխատանքների ուղղորդություն, համապատասխան թեմաներ և գրականության ցանկ:

Դասընթացի ժամանակ մասնակիցներին կտրամադրվեն բաշխման նյութեր, որոնք կներառեն դասին ներկայացվող պահանջներ, աշակերտների խոսքային գործունեության գնահատման որակական և քանակական սանդղակներ, դասալսման պահանջներ, սեփական մասնագիտական գործունեությունը վերլուծելու գործիքներ և այլ մշակումներ:

Վերապատրաստման արդյունքում ձևավորվում են հետևյալ կարողությունները.

1. ուսուցման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաներն ուսումնասիրելու, ներդնելու կարողություն,



2. ուսուցման բարենպաստ միջավայր ստեղծելու կարողություն,
3. ժամանակը արդյունավետ օգտագործելու հմտություն,
4. սեփական գործունեության արդյունքները գնահատելու և վերլուծելու կարողություն ,
5. համագործակցության միջոցով միջառարկայական խնդիրներ լուծելու կարողություն,
6. կրթության քաղաքականությանը վերաբերող հայեցակարգերը, տեսությունները և հիմնահարցերը, պետական և առարկայական չափորոշիչները, ծրագրերը համակարգված վերլուծելու կարողություն,
7. Մեփական արժեքային համակարգի նկատմամբ ռեֆլեքսիա,
8. Կրթական ծրագրեր և ուսուցման գործընթաց նախագծելու, պլանավորելու, նախապատրաստելու, կազմակարպելու, իրականացման գործընթացը դեկավարելու, արդյունքները կանխատեսելու և դրված նպատակները իրականացրած լինելու մակարդակը գնահատելու կարողություն,
9. Կրթական գործընթացի մասնակիցների տարբեր կարգավիճակները /այդ թվում ԿԱՊԿՈԻ/ ընկալելու կարողություն,
10. Կրթության համակարգի կառուցվածքը և նպատակը հասկանալու կարողություն,
11. Տարբեր համատեքստում կրթական հետազոտություններ կատարելու կարողություն,
12. Դպրոցի կրթական գործընթացները բարելավելու, արդյունավետությունը բարձրացնելու, նախագծեր դեկավարելու կարողություն,
13. Ուսուցման գործընթացի որակի ապահովման, ուսումնադաստիարակչական գործընթացի դիագնոստիկա և մոնիտորինգ իրականացնելու, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները կանխատեսելու կարողություն:



ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է

Զարգացնել առարկայական և մանկավարժական կարողունակությունները, ապահովել շարունակական մասնագիտական զարգացումը: Նպաստել մանկավարժական և մեթոդական կարողունակությունների (գիտելիք, կարողություն, հմտություն, մասնագիտական որակներ) զարգացմանը՝ հիմնվելով հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչների պահանջների, ծրագրային մոտեցումների, դասավանդման և ուսումնառության, տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա: Հանրակրթական ուսումնական հաստատությունների համար մանկավարժահոգեբանական համակարգված գիտելիքներով օժտված որակյալ մանկավարժների պատրաստումն ու ուսուցման կազմակերպման ձևերի, ուսուցման սկզբունքների, ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների, ուսուցման արդյունքների գնահատման վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիքների փոխանցումն է:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ✓ Ծանոթացնել կրթության բնագավառի և իրենց գործունեությանը վերաբերող օրենսդրական ակտերին,
- ✓ ծանոթացնել նորագույն կրթական տեխնոլոգիաներին, դասավանդման ժամանակակից մեթոդներին և հնարներին, նպաստել դրանց կիրառմանը,
- ✓ ծանոթացնել առարկայի չափորոշիչին և ծրագրին, հիմնավորել ուսուցումը դրանց պահանջներին համապատասխան կազմակերպելու անհրաժեշտությունը,
- ✓ նպաստել ինքնուսուցման և ինքնադրսևորման շարունակական զարգացման գործընթացին,
- ✓ ծանոթացնել գիտամեթոդական գրականությանը, ձևավորել պատկերացումներ ժամանակակից չափորոշչային և ծրագրային



պահանջների վերաբերյալ,

- ✓ ձևավորել դասի պլանավորման և իրականացման գործընթացում ուսումնաօժանդակ, լաբորատոր աշխատանքների ու տեխնիկական միջոցներով կոնկրետ ուսումնական խնդիրներ լուծելու հմտություններ,
- ✓ նպաստել ուսուցման գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հաճախակի կիրառմանը,
- ✓ խթանել ուսումնական և մեթոդական նյութեր մշակելու, դասեր պլանավորելու և վարելու, դասեր վերլուծելու և գնահատելու կարողությունների զարգացումը,
- ✓ զարգացնել ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորման, ինչպես նաև փաստաթղթերի կազմման և մշակման կարողունակությունները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվում է, որ ծրագրի ավարտին մասնակիցը պետք է իմանա՝

- ա) հանրակրթության պետական չափորոշի (ՀՊՉի) և առարկայական հիմնական դրույթները,
 - բ) ուսուցիչներին և սովորողներին ներկայացվող ընդհանրական պահանջները,
 - գ) առարկայական չափորոշիչը, ծրագիրը, դասավանդման մեթոդիկան և գնահատման համակարգը,
 - դ) սովորողի տարիքային և մանկավարժական հոգեբանության առանձնահատկությունները ,
- կարողանա՝**



- ա) ապահովել հարգանքի և փոխըմբռնման վրա հիմնված բարենպաստ կրթական միջավայր, հաստատել հաղորդակցման ազատ ու բարեկիրթ մթնոլորտ սովորողների, նրանց օրինական ներկայացուցիչների (ծնողների, խնամակալների), գործընկերների, պաշտպանելով սովորողի իրավունքները,
- բ) համակարգել, մեկնաբանել, ներկայացնել և վերլուծել տեղեկույթը,
- գ) սովորողների մեջ ձևավորել ուսման նկատմամբ հետաքրքրություն և սովորածը գործնականում կիրառելու հմտություններ,
- դ) նպաստել սովորողների մեջ ինքնակառավարման և նախաձեռնողական կարողությունների զարգացմանը,
- ե) պլանավորել իր գործունեությունը և սահմանել ուսումնական նպատակներ՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները,
- զ) դասավանդման գործընթացում ներառել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին,
- է) կայացնել մանկավարժորեն արդարացի որոշումներ տարբեր իրավիճակներում,
- ը) կիրառել դասավանդման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ՝ ապահովել տարբերակված ուսուցման կազմակերպում,
- թ) կանխատեսել և գնահատել սովորողի և սեփական գործունեությունը, վերլուծել և կատարել անդրադարձ (ռեֆլեքսիա), ապահովել հետադարձ կապ, կիրառել գնահատման տարբեր ձևեր,
- ժ) համագործակցել գործընկերների հետ, կատարել փոխադարձ դասալսումներ, վերլուծել և ընդհանրացնել դրանք՝ փորձի փոխանակման, ներդրման ու տարածման արդյունավետության բարձրացման նպատակով,
- ի) շարունակաբար, այդ թվում՝ ինքնակրթության միջոցով, կատարելագործել իր առարկայական ու մանկավարժական գիտելիքներն ու հմտությունները:



Ծրագրի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.

- գիտականության սկզբունք՝ տվյալ ոլորտում ժամանակակից գիտության նվաճումների ու սոցիալ-մշակութային իրողությունների արտացոլում դասընթացի բովանդակության մեջ,
- հաջորդականության սկզբունք՝ արտահայտվում է դասընթացի բովանդակության մեջ թեմաների հաջորդականությամբ և համակարգվածությամբ,
- բովանդակային և գործընթացային կողմերի համապատասխանության սկզբունք՝ դասընթացի բովանդակության նախագծման ընթացքում հաշվի է առնվել կիրառվող մեթոդների, ձևերի, միջոցների համապատասխանությունը վերապատրաստվողների մասնագիտական փորձին և սոցիալ-մանկավարժական հմտություններին,
- գործնականության սկզբունք՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորման առաջնահերթություն,
- հետադարձ կապի ապահովման սկզբունք:

ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ա/Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի շրջանավարտն ունակ կլինի

Ա1. մեկնաբանելու հանրակրթության կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, ժամանակակից մարտահրավերները, կրթական տեխնոլոգիաները, կրթության որակի առանցքային դրույթները,



Ա2.մեկնաբանելու մանկավարժական գիտության զարգացման արդի ուղղընթացները, հայեցակարգերը, զարգացման փուլերը, կրթության որակի չափանիշները,

Ա3.նկարագրելու ուսուցման սուբյեկտների գործունեության տարիքային զարգացման և անհատական առանձնահատկությունները, նրանց սոցիալականացման օրինաչափությունները և հաղորդակցման ձևերը,

Ա5.դասակարգելու և ընտրելու տվյալ հանրակրթական ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդներ,

Ա6.բացահայտելու և գնահատելու կրթության սուբյեկտների ուսումնաճանաչողական պահանջմունքները,

Ա7. իրականացնելու չափորոշչահեն կրթություն:

Ա8. ներկայացնելու հանրակրթության բովանդակությունը (ուսումնական բնագավառներ), դրա առանձնահատկությունները,

Ա9. թվարկելու և մեկնաբանելու ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենդությունը, նորմատիվ և իրավական ակտերը, կրթության բովանդակությունն արտացոլող փաստաթղթերը (կրթակարգ, չափորոշիչներ, ծրագրեր),

Ա10. ձևակերպելու մանկավարժության և հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, բնութագրել կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա11. քննարկելու երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը:

բ/Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի շրջանավարտն ունակ կլինի.

Բ1.կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը,



Բ2.կիրառելու համագործակցային, փոխներգործուն մեթոդներ ուսուցման գործընթացում, կազմակերպելու ուսումնական գործընթաց,

Բ4. կանխատեսելու ուսուցման գործընթացում ակնկալվող դժվարություններն ու առաջարկելու դրանց հաղթահարման ուղիներ ,

Բ5. կիրառելու մեթոդամանկավարժական հետազոտությունների քանակական և որակական մեթոդներ, տվյալների հավաքագրման և մշակման վիճակագրական մեթոդներ:

Բ6. աշխատելու կրթական փաստաթղթերով (չափորոշիչներ, պլաններ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ),

Բ7.կիրառելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ, նախագծային աշխատանքներ և ներկայացնելու արդյունքները,

Բ8.արդյունավետ հաղորդակցվելու և համագործակցելու ծնողների, գործընկերների և համայնքի հետ երեխաների ուսուցման և դաստիարակության խնդիրները լուծելու նպատակով,

Բ9.մանկավարժական տարբեր իրավիճակներում դրսևորելու մասնագիտական վարպետություն (հասկանալ, գնահատել իրավիճակը և համարժեք լուծումներ գտնել՝ դրսևորելով պատասխանատվություն, տակտ, ապրումակցում և այլն),

Բ10.վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:

գ/Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի շրջանավարտն ունակ կլինի



- Գ1. քննադատաբար վերլուծելու և նորաբանելու ուսումնական գործընթացը, գնահատելու և համակողմանի վերլուծելու մասնագիտական տեղեկությո՜ւր,
- Գ2. նոր և անծանոթ գործնական-մանկավարժական և սոցիալական իրադրություններում օբյեկտիվ և արդյունավետ ելքեր որոնելու ,
- Գ3. ստեղծելու և կառավարելու ուսուցիչ-աշակերտ-ընտանիք համատեղ գործունեության համագործակցային միջավայր,
- Գ4. հանրությանը համակողմանի և փաստարկված ներկայացնելու ու բացատրելու մանկավարժության ոլորտին առնչվող տեղեկատվություն,
- Գ5. պատասխանատվությամբ իրականացնելու մանկավարժի մասնագիտական բարեվարքության կանոններին համապատասխան գործառույթներ,
- Գ6. Օգտվելու տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից, ծրագրերից (Word, Excel, Power Point) պահպանել տեղեկատվական աղբյուրների օգտագործման բարոյական և իրավական նորմերը, ակադեմիական ազնվության չափանիշները,
- Գ7. Օգտվելու տարատեսակ տեղեկատվական աղբյուրներից (գրադարաններ, ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)՝ դրսևորելով տեղեկատվական գրագիտություն (որոնել, ընտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն),
- Գ8. կիրառելու ձեռքբերված գիտելիքները պրակտիկայում, դրանք հիմնավորել և գնահատել, պատրաստել զեկուցումներ, մասնակցել բանավեճերի, նախագծային աշխատանքների, դրսևորելու քննադատական և ստեղծագործական մտածողություն,



Գ9. գործընկերների և շրջապատողների հետ ապահովելու դրական և կայուն սոցիալական փոխազդեցություններ, ընդունել միասնական որոշումներ, պատասխանատվություն կրել թիմային աշխատանքի համար, մասնագիտական գործունեության ընթացքում ապահովել ազգային և համամարդկային արժեքների փոխհարաբերակցությունը,

Գ10. ռեֆլեքսիվ վերաբերմունք դրսևորելու սեփական վարքագծի նկատմամբ:

ՍՏՈՒԳՄԱՆ ՁԵՎԵՐԸ

- Թղթապանակ
- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Տեսաներկայացում /Slideshow/
- Ուսումնական նախագծեր
- Ռեֆերատ
- Էսսե
- Զեկույց
- Ավարտական հետազոտություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

- Միավորային
- Չափանիշային



ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԿՐԵԴԻՏՆԵՐԸ

- **ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**
(3 կրեդիտ - 20 ժամ՝ լսարանային, 70 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)
- **ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ.** Մանկավարժություն (20 ժամ -6 կրեդիտ), Տարիքային զարգացման հոգեբանություն (6 ժամ - 1 կրեդիտ), Գնահատում (8 ժամ - 1 կրեդիտ), Ներառական կրթություն (6 ժամ - 1 կրեդիտ), 21-րդ դարի հմտություններ (10 ժամ-1 կրեդիտ)
(10 կրեդիտ - 50 ժամ՝ լսարանային, 250 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)
- **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**
(10 կրեդիտ - 40 ժամ՝ լսարանային, 260 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)
- **ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ**
(1 կրեդիտ - 5 ժամ՝ լսարանային, 25 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)
- **ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**
(3 կրեդիտ - 5 ժամ՝ լսարանային, 85 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)
- **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ**
(3 կրեդիտ՝ 20 ժամ՝ լսարանային, 70 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստորև ներկայացնում է պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ դասավանդվող բաժինների, բաղադրիչների և առարկաների:

Անունը, ազգանունը, ծննդյան թիվը	Կրթությունը, որ ուսումնական հաստատությունն է ավարտել (որակավորումը)	Մասնագիտական ստաժը	Վերջին 5 տարում վերապատրաստումների՝ որպես վերապատրաստող մասնակցության փորձը ղեկավար և մանկավարժական կադրերի պատրաստման կամ վերապատրաստման ոլորտում	Որպես վերապատրաստող վերապատրաստումների ինչ ծրագրերի է մասնակցել (ծրագրի անվանումը)	Այլ տեղեկություններ
Վաղինակ Նազարյան 1977 թ.	Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի «Ֆիզիկական դաստիարակությունն է բաժին, որակավորումը ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ֆիզդաստիարակության մասնագետ:	21 տարի	1. «Առարկայական ուսուցիչներին մասնագիտական վերապատրաստում» 2. «Փորձարկվող դպրոցների Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մասնագիտական վրապատրաստում» 3. 2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	1. ՀՀ ԿԳՄՍ ԿԾ և ԾԻԳ-ի կողմից իրականացվող «Կրթական բարելավումն է ծրագրի շրջանակներում «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» ուսումնական ոլորտի փորձագետի վերապատրաստում: 2. «Կրթական ոլորտում գենդերային բաղադրիչի ներառում», 3. «Կրթական ոլորտում «Առողջ ապրելակերպը դասընթացի ներառում» 4. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայական ծրագիր /չափորոշիչի կառուցվածքը և կազմելու ձևաչափը (միջազգային	Տպագրված հոդվածների թիվը՝ 15



			փորձագետ Վ. Բրիլլեր) 5. Վերապատրաստման մոդուլների կառուցվածքը և մշակման ձևաչափը» (միջազգային փորձագետ Վ. Բրիլլեր) 6. «Դասավանդման մեթոդաբանություն «Նախագծերի վրա հիմնված ուսուցում»«Կարողությունների հիման վրա կրթություն» «Ուսուցիչների մասնագիտական զարգացում» - (միջազգային փորձագետ Վ. Բրիլլեր) 7. «Առարկայական նյութերի կազմման մեթոդաբանություն» 8. «Zoom հարթակում օնլայն դասի կազմակերպման մեթոդաբանություն» 9. «Ընթացիկ և ձևավորվող գնահատման առանձնահատկությունները» 10. «Բ. Բլումի աստիճանակարգը (տաքսոնոմիա) - կիրառության ձևաչափը»: 11. «Վերջնարդյունքների դերը և նշանակությունը ֆիզիկական կուլտուրայի դասավանդման գործընթացում»	
--	--	--	---	--



Լիլիթ Բաղդասար յան 1982 թ.	ՎՊՄԻ, Մանկա-վարժության ֆակուլտետ, «Տարրական կրթության ման- կավարժություն և մեթոդիկա» մա սնագիտությամբ	16 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2023թ. ապրիլ- Ուսուցչի օգնականների 30- ժամյա վերապատրաստման դասընթաց	ՎՊՀ ERASMUS + PRINTEL նախագծի վերապատրաստման դասընթացներին	—
Գնել Տիգրանյան 1960 թ.	ԵՊՀ. Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, փիլիսոփա	37 տարի	1.2016թ. մարտ- տնօրենների հավակնորդների 90-ժամյա դասընթաց 2.2016թ.ապրիլ-հունիս-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 3.2016թ. հոկտեմբեր- տնօրենների հավակնորդների 90-ժամյա դասընթաց 4.2016թ. հոկտեմբեր-2017թ.հունվար- ներառական կրթության 20 ժամյա դասընթաց /11 խումբ/ 5.2017թ.ապրիլ-մայիս-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 6.2017թ. հոկտեմբեր- տնօրենների հավակնորդների 90-ժամյա դասընթաց 7.2018թ.մարտ-հունիս-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 8.2018թ. օգոստոս- տնօրենների հավակնորդների 90-ժամյա դասընթաց 9.2019թ. մայիս- տնօրենների	1.2008թ.մարտ- Հասարակագիտություն դասավանդող ուսուցիչների 18- ժամյա դասընթաց-ԿԱԻ 2.2009թ ապրիլ-Քաղաքացիական կրթություն-ԿԱԻ 3.2011թ մայիս-Աշակերտների և ծնողների մասնակցությունը դպրոցի կառավարմանը-ԿԱԻ 4.2016թ հունիս-Աղետների ռիսկերի նվազեցումը որպես կրթության բաղադրիչ-ԿԱԻ 5.2016թ օգոստոս-Ներառական կրթություն- վերապատրաստողների վերապատրաստման 30-ժամյա դասընթաց-ԿԱԻ, Հուլիսի կամուրջ 6.2017թ հոկտեմբեր-Ներառական կրթություն ուսուցչի օգնականների վերապատրաստողների վերապատրաստման դասընթաց-	29 հոդված, 3 ուսումնամե- թոդական ձեռնարկ



		հավակնորդների 90-ժամյա դասընթաց 10.2020թ.դեկտեմբեր-տնօրենների հավակնորդների 110-ժամյա դասընթաց 11.2021թ.մայիս-հունիս -տնօրենների հավակնորդների 90-ժամյա դասընթաց 12.2021թ.օգոստոս-սեպտեմբեր- հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-օգոստոս- նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների հավակնորդների 110- ժամյա վերապատրաստման դասընթաց 2022թ.հունիս-հուլիս-ուսումնական հաստատության տնօրենների հավակնորդների 90- ժամյա վերապատրաստման դասընթաց 2023թ. ապրիլ- Ուսուցչի օգնականների 30- ժամյա վերապատրաստման դասընթաց	ԿԱԻ, Հույսի կամուրջ	
--	--	---	---------------------	--



Նունե Տիգրանյան 1969 թ.	Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ Ֆիզմաթ ֆակուլտետ, Ֆիզիկայի բաժին, «Ֆիզիկա» մասնագիտությամ, ֆիզիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ուսուցչի որակավորում	19 տարի	1. 2016թ.ապրիլ-հունիս-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 2. 2016թ. հոկտեմբեր-2017թ.հունվար-«Խոցելի երեխաների սոցիալական ներառում. ներառական կրթության. Կրթություն բոլորի համար» 20 ժամյա դասընթաց /15խումբ/ 3. 2017թ.ապրիլ-մայիս-հերթական ատեստավոր -ման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 4. 2017թ. Հոկտեմբեր - «Ուսուցչի օգնական»-ի վերապատրաստման դասընթաց 5. 2018թ փետրվարի 19-21- «Ուսուցչի օգնական»-ի վերապատրաստման դասընթաց 6. 2018թ.մարտ-հունիս-հերթական ատեստավոր- ման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 7. 2018թ. Հոկտեմբեր-նոյեմբեր- Հանրակրթական դպրոցների մասնագիտաց- ված կրթական աջակցությունների գծով փոխտնօրենների (ՄԿԱ) մաս նագիտական զարգացման 36 ժամյա դասընթաց 8. 2019թ. Օգոստոսի 12-23- «Ընտանեկան միջավայր և համայնքային ծառայություններ	1.2009թ. Հուլիս - ԿԱԻ-ի մարզային մասնաճյուղերի բնագիտական առարկաների մասնագետների վերապատրաստման դասընթաց 2. 2011 մարտ - «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության, «Առաքելություն Արևելք» Հայաստանյան գրասենյակի և ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Ներառական կրթություն» ծրագրով վերապատրաստողների վերապատրաստման 30 ժամյա դասընթաց 3. 2012թ. Սեպտեմբեր - «Հայաստանի մարզագետիների և արտավայրերի կենսաբազմազանության ուսումնասիրություն» /GIZ/ԿԱԻ 4. 2016 օգոստոս - «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման ջրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում	
---------------------------------------	--	----------------	--	---	--



		Հայաստանի երեխաների համարե ծրագիր, Շիրակի մարզի դպրոցների ուսուցչական համակազմի վերապատրաստման 30 ժամյա 5-օրյա դասընթաց /2 խումբ/ 9. 2020թ. Մայիսի 20-22 «Հուլիսի կամուրջն հաշման- դամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի կողմից Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցչի օգնականների համար կազմակերպած «Ներառական կրթության քաղաքականությունն ու գործընթացը ՀՀ-ում», «Ուսուցչի օգնականների գործառույթները» և «Անհատական ուսուցման պլանների գործնական մշակում» թեմաներով 3-օրյա դասընթաց: 10.2021թ.օգոստոս-սեպտեմբեր- հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 11.2022թ.հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 12.2023թ. ապրիլ- Ուսուցչի օգնականների 30- ժամյա վերապատրաստման դասընթաց	ծրագրի շրջանակներում «Ներառական կրթություն. Կրթություն բոլորի համար» վերապատրաստողների վերապատրաստման դասընթաց 5. 2017թ. Հոկտեմբեր-«Ներառական կրթություն» թեմայով ուսուցչի օգնականի վերապատրաստողների վերապատրաստման մոդուլային ուսուցման դասընթաց 6. 2018թ. հունվար - Մեղիագրագիտության վերապատրաստման դասընթաց 7. 2018թ. փետրվար- «Հոգեախտորոշում նկարչական արտթերապիայի միջոցով երեխաների հետ աշխատանքում» թեմայով տեսագործնական դասընթաց 8. 2018թ. հոկտեմբեր - Կանա հոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպված «Մանկական վախերը և դրանց հաղթահարումը» թեմայով տեսագործնական դասընթաց 9. 2018թ. դեկտեմբեր - «GOOGLE-ի կրթական գործիքները ԿԱԻ-ի աշխատակիցների համար	
--	--	--	--	--



				կազմակերպված վերապատրաստման 20-ժամյա դասընթաց 1. 2019թ. ապրիլ - «Microsoft-ի կրթական գործիքները ԿԱԻ-ի աշխատակիցների համար կազմակերպված վերապատրաստման 20-ժամյա դասընթաց 2. 2019թ. մայիս-հունիս- Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու հավակնություն ունեցող անձանց համար ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից իրականացրած 90-ժամյա վերապատրաստման դասընթաց 2019թ. սեպտեմբեր-հոկտեմբեր- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ .Դասավանդի ը, Հայաստան. կրթական հիմնադրամի կողմից իրականացված .Ուսուցիչների ներառող դասավանդման վերապատրաստման և մենթորական կարողությունների	
--	--	--	--	--	--



				զարգացման. ծրագրին, ստացել մենթորի որակավորում	
Զարուհի Վարդանյան 1962 թ.	Կիրովականի պետական ման-կավարժական ինստիտուտ (այժմ ՎՊՀ) «Կենսաբանության և քիմիայի ուսուցչուհի»	36 տարի	2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	ԲՀՀՀ-ի «ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ «051101.01.6-ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ» ծրագրի շրջանակներում «Բարեվարքության գնահատման մեթոդաբանություն և որակի ներքին ապահովում» և «Հետազոտական հմտությունների զարգացում» թեմաներով երկու վերապատրաստումների մասնակից	
Արման Բարսեղյան 1974 թ.	Բարձրագույն ՎՊՄԻ Ֆիզիկա-կան կուլտուրայի ուսուցիչ, մ.գ.թ., դոցենտ	21 տարի	2021թ. օգոստոս-սեպտեմբեր- հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	Կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված ուսուցիչների վերապատրաստմանը վերապատրաստել է ֆիզկուլտուրայի ուսուցիչներին	
Արմանուշ Արամյան	1987-1991թթ. Վանաձորի պե-տական մանկա-վարժական	29 տարի	2018թ. «Ներառական կրթությունը թեմայով ուսուցչի օգնականի	2018թ. «GOOGLE- ի կրթական գործիքները» ԿԱԻ-ի	



1970 թ.	ինստիտուտ, Մանկավարժություն և տարրա-կան ուսուցման մեթոդիկա ֆակուլտետ, Տարրական դասարանների ուսուցչի որակավորում		վերապատրաստման դասընթաց 2016-2018թթ. Հանրակրթական դպրոցի հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 80 ժամյա վերապատրաստման դասընթացներ 2016-2018թթ. «Ներառական կրթություն. Կրթություն բոլորի համար» վերապատրաստման դասընթաց 2016թ. «Աղետների ռիսկների նվազեցումը որպես կրթության բաղադրիչ, ուսումնական նյութերում բաղադրիչի ինտեգրման անհրաժեշտությունը» թեմայով վերապատրաստման դասընթաց 2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	աշխատակիցների համարկազմակերպված վերապատրաստման 20-ժամյա դասընթաց 2018թ. «Առողջ ապրելակերպի և ՄԻԱՎ/ՁԻԱՎ-ի կանխարգելման դասընթացների անցկացման մեթոդաբանության ուսուցանում կրթության ոլորտում» դասընթաց 2016թ. «Ներառական կրթություն. Կրթություն բոլորի համար» թեմայով վերապատրաստողների վերապատրաստման 30- ժամ տևողությամբ մոդուլային ուսուցման դասընթաց 2016թ. «Դիմադրողականության բարձրացումը հարավային Կովկասում երեխայակենտրոն ԱՌՆ- ի միջոցով ծրագրի շրջանակում կազմակերպված Աղետների ռիսկների նվազեցումը որպես կրթության բաղադրիչ, ուսումնական նյութերում բաղադրիչի ինտեգրման անհրաժեշտությունը» թեմայով դասընթաց	
Նեյի Մանուչարյան 1986 թ.	Բարձրագույն, ՎՊՄԻ 2008թ., մաթեմատիկայի ինֆորմատիկայի ուսուցիչ	12	ՎՊՀ դասախոսների վերապատրաստում Moodle և zoom հարթակներում	ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպված Moodle հարթակի կիրառում	



			2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		
Տաթևիկ Տոնոյան 1994 թ.	2012-2016 թթ. ՎՊՀ «Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության)» բակալավրիատ 2016-2018 թթ. «Կրթության կառավարում» մագիստրատուրա 2023-ցայսօր «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի հայցորդ	5 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	2022 թ. «Ռեսուրսների կառավարում» («Կրթության զարգացման և կառավարման» հիմնադրամ) 2020 թ. ԹԻՀԿ Հակակոռուպցիոն դպրոց 2020 թ. Moodle համակարգը որպես հեռավար ուսուցման համապիտանի հարթակ» 2020 թ. «Smart Notebook» 2020 թ. «Աշխատանքային իրավունք» (ՎՊՀ) 2019 թ. «Ակտիվ ուսումնառություն, առանձնահատուկ շեշտադրելով տեխնոլոգիական ընդլայնված համագործակցային ուսումնառությունը» (դասախոսների վերապատրաստում) (ERASMUS+PRINTEL) (ՎՊՀ)	Տպագրված գիտական հոդվածների թիվը՝ 5:



Լուսիկ Վարդանյան 1962թ.	1982-1987 Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ 1993-1998 Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Բանասիրական ֆակուլտետ, Անգլերենի և գերմաներենի ուսուցչի որակավորում ՎՊՀ -ի օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.	28 տարի	2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	BOOST նախագծի շրջանակներում ունեցած վերապատրաստումներ. 1. Փետրվարի 19-23, 2018թ.- Բարսեղնայի պոլիտեխնիկ համալսարան, «Միջազգայնացման ռազմավարական պլանի մշակում» 2. Հունիսի 18-22, 2018 թ.- Լիսաբոնի տեխնիկական համալսարան, «Համալսարանների մարքեթինգային ռազմավարական պլանավորում» 3. Հոկտեմբերի 22-26, 2018թ.- Էստոնիայի տեխնիկական համալսարան, «Միջազգային կրեդիտային շարժունություն» 4. Փետրվարի 18-22, 2018թ.- Ստոքհոլմի թագավորական համալսարան, «Դրամաշնորհային նախագծերի դիմում-հայտերի կազմում» 5. Հունիսի 23-29, 2019թ.- Ռովիբայի և Վերգիլիոսի համալսարան, Իսպանիա, «Միջազգայնացում, միջազգային կրեդիտային շարժունություն» 6. Փետրվարի 23-29, 2020թ.- Ստոքհոլմի թագավորական համալսարան, «Հետազոտության միջազգայնացում, միջազգային	1982-1987 Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ, Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետ 1993-1998 Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, Բանասիրական ֆակուլտետ, Անգլերենի և գերմաներենի ուսուցչի որակավորում ՎՊՀ -ի
---------------------------------------	---	----------------	---	--	--



				հետազոտական դրամաշնորհների հայտադիմումների կազմում:	օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ.
Աննա Պապոյան 1979թ.	Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ. Որակավորում՝ անգլերենի մասնագետ, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով ուսուցիչ: Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան՝ որպես հայցորդ 15.05.2012, 059 որոշմամբ շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 25.02.2016թ. շնորհվել է դոցենտի գիտական կոչում մանկավարժություն մասնագիտությամբ	22 տարի	2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	AISA UK ESOL TRAIN THE TRAINER CERTIFICATION INTERNATIONAL ENGLISH LANGUAGE TEACHING QUALIFICATIONS FRAMEWORK (IELF-QF) REGISTERED CERTIFICATE ID:0121153L3ESOLTOT	—
Մելիսա Սաքանյան 1948թ.	ԵՊՀ մեխմատ ֆակուլտետ Մաթեմատիկոս	50 տարի	2019թ. ՊԴ կազմի վերապատրաստում՝ ինֆորմատիկա, իրավագիտության հիմունքներ, օտար լեզու 2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական	—	Ֆմ.գ.թ., դոցենտ



			ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		
Վանանե Միրզոյան 1978 թ.	ՎՊՄԻ «Նախա-դպրոցական մանկավարժություն և հոգեբա-նություն, անգլե-րեն լեզու» մաս-նագիտությամբ	18 տարի	1. ՎՊՀ պրոֆեսորադասիտական կազմի հոգեբանամանկավարժական վերապատրաստում 2. ՎՊՀ պրոֆեսորադասիտական կազմի վերապատրաստում՝ «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» 3. ՎՊՀ դասախոսների վերապատրաստում «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության –երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» 2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց:	ERASMUS+ "PRINTEL" նախագծի շրջանակներում մասնակցել է «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով	



			2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2023թ. ապրիլ- Ուսուցչի օգնականների 30- ժամյա վերապատրաստման դասընթաց		
Հերմինե Գրիգորյան 1970 թ.	Բարձրագույն, ՎՊՀ, մաթեմատիկայի, ինֆորմատի կայի և հաշվողական տեխնիկայի ուսուցիչ	28 տարի	Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ամենամսյա ուսումնամեթոդական սեմինարներին ավագ դպրոցի ուսուցիչների համար 2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	—	—
Անուշ Գևորգյան 1968 թ.	Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ, միջնակարգ դպրոցի կենսաբանության և քիմիայի ուսուցիչ, Կենսաբանական գիտությունն երիթեկնաձու, դոցենտ	28 տարի	2020թ. - Վերապատրաստում «Գնահատող հետազոտություններ» «Կրթական ծրագրեր և գնահատում» թեմաներով («Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպություն) 2019թ. Ուսուցանող և վերապատրաստող աշխատակազ միշարժունության ծրագիր (Mobileunlimited-2018-1-PT01-KA107- 047 241, Պորտոլի համալսարան (Պորտուգալիա)) 2018թ. Վերապատրաստումներ «Ուսուցչական անձնակազմի զարգացման կենտրոնների ուսումնասիրություն Եվրոպական	—	—



			լավագույն փորձի օրինակով» (ERASMUS +, PRINTeL ծրագիր, Բարսեղունայի Համալսարան (Իսպանիա), Պորտոյի համալսարան (Պորտուգալիա)) 2014-2016թթ. Վերապատրաստումներ «Համալսարանների՝ որպես ցկյանս ուսումնառության հաստատությունների հատուկ դերի ամրապնդում» (TEMPUS, SSRULLI ծրագիր) 2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		
Թադևոս Թադևոսյան 1974 թ.	Բարձրագույն Երևանի Վ. Բյուսովի անվան օտար լեզուներ թի պետական ինստիտուտի ուսուցիչ լեզվի և գրականության ուսուցիչ և լուսավորության համակարգի հոգեբա նի որակավորում	23 տարի	2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	—	—
Լուսիկ Միրաբյան 1968 թ.	Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, տարրական դասարանների ուսուցիչ	31 տարի	Դասավարների վերապատրաստում, 2019-2021թթ. Ֆինանսական կրթությունը դպրոցում, ԿԳՄՄՆ, Կենտրոնական բանկ, ՀՊՄՀ 2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական	1998-2002թթ. IREX տարրական դասարանների ուսուցիչների վերապատրաստում 2000-2004թթ. IREX տնօրենների և փոխտնօրենների	



			ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց <u>2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական</u> <u>ատեստավորման ենթակա</u> <u>ուսուցիչների 110-ժամյա դասընթաց</u>	վերապատրաստում 2002-2005թթ. IREX դասախոսների վերապատրաստում 2006թ. «Կրթության որակ և համապատասխանություն կրթական չափորոշիչներ և ծրագրեր, դասվարների վերապատրաստում	
Մետաքսյա Հակոբյան 1982 թ.	Վանաձորի պետական համալսարան, քիմիայի և բնապահպանության ուսուցչուհի /1999-2004/	17 տարի	1. 2016 թ.-2017թ. Ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթաներ՝ քիմիա առակայից 2. 2016թ. - Ներառական կրթության թեմայով ներառական դասընթացներ՝ Լոռու մարզի մի շարք դպրոցներում 2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	1. Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ , դասընթաց/ ԿՏԱԿ/ 2. Ներառական կրթության թեմայով դասընթաց 3. Բնապահպանական դասընթաց	Ունեմ ուսուցչի 2- րդ աստիճանի որակավորու մ
Կարինե Առուստամյան 1953	ԵՊՀ Բանասեր, ռուսացլեզվի և ռուսգրականության ուսուցիչ	41	2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	-Erasmus+ ծրագրի շրջանակում ԳԴՀ Էռլանգեն-Նյուրնբերգ Ֆրիդրիխ- Ալեկսանդր համալսարան	Բ.գ.թ., դոցենտ-



Արմեն Ծատուրյան 1962թ.	Կիրովականի պետա կան մանկավարժա կան ինստիտուտ. (Ֆիզիկայի բաժին) ՌԴ Սանկտ Պետեր բուրգի Ա. Ի. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի ասպիրանտուրա, 1990թ. շնորհվել է Մանկավարժական գիտությունների թեկ նաճուի գիտական աս տիճան, ՌԴ Սանկտ Պետեր բուրգի Ա. Ի. Գերցենի անվան պե տական մանկավարժա- կան համալ սարանի դոկտորանտուրա, 2013 թ. շնորհվել է մանկավարժա-կան գիտություն ների դոկտորի գիտական աստիճան	38	2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	2014թ. «Արմինֆո ՄՊԸ -ի կողմից կազմակերպված հերթական ատեստավորման ենթակա Ֆիզիկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթաց	
Նաիրա Հարությունյան 1979թ.	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ /կենսաբանության և քիմիայի ուսուցիչ/	20 տարի	«Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» մոդուլային ուսուցման դասընթաց/2016թ./: 2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա	1.«Կրթության որակ և համապատասխանություն ծրագրի շրջանակներում Վանաձորի և Գուգարքի տարածաշրջանի քիմիայի ուսուցիչների վերապատրաստման դասընթաց /2007-2009թթ/: 2. ՎՊՄԻ-ի	



			ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	կողմից հրականացված ավագ դպրոց իրադրությունների վերապատրաստման դասընթաց /2009թ./: 3. «Կրթություն առանց սահմանի» ՀԿ կազմակերպած հերթական ատեստավորման ենթակա քիմիայի ուսուցիչների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթաց /2011թ./:	
Անուշ Եղոյան, 1971 թ.	Բարձրագույն, ՎՊՄԻ, Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ	Գիտական կարծիքի 23 մանկավարժական՝ 11	2017թ-ին «Մանկավարժական խոցելի երեխաների սոցիալական ներառում. երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնումը ծրագրի վերապատրաստող 2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	2017թ-ին «Մանկավարժական խոցելի երեխաների սոցիալական ներառում. երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնումը ծրագրով	Համատեղությամբ՝ Վանաձորի թիվ 19 դպրոցում՝ տնօրեն: Մ.գ.թ., դոցենտ, 17 գիտամանկավարժական հոդվածների հեղինակ:
Լիլիթ Պետրոսյան 1977 թ.	Բարձրագույն, ՎՊՄԻ, Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ	Գիտական կարծիքի 22 մանկավարժական՝ 22	2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա	—	Բ.գ.թ., դոցենտ, 30 գիտամանկավարժական հոդվածների



		կան՝ 8	ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		հեղինակ:
Գայանե Քանարյան 1980թ.	Բարձրագույն, ՎՊՄԻ 1998թ., Ֆիզիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեղինիկայի ուսուցիչ	21 տարի	ՎՊՀ դասախոսների վերապատրաստում ինֆորմատիկա առարկայից 2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	PRINTEL նախագծի շրջանակներում կազմակերպված դասախոսների վերապատրաստման դասընթացներ, CONNECT ծրագրի շրջանակներում՝ DIGITAL TEACHING IN UNIVERSITY ENVIRONMENT online դասընթաց	—
Աղաջանյան Սամվել 1971 թ.	1997-2003 թ. Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Ռուսաստանի պատմության ամբիոնի հայցորդ 1989-1994թ. Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի «Պատմություն» մասնագիտություն:	29 տարի	2021թ.օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	2015թ. Դպրոցի տնօրենի վերապատրաստման և հավաստագրման դասընթաց 2019թ. Դպրոցի տնօրենի վերապատրաստման և հավաստագրման դասընթաց	Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ 15 հոդվածների հեղինակ
Մատինյան Հենրի, 1994թ.	2010-2014 թթ. ՎՊՀ «Պատմություն» մասնագիտության բակալավր 2013-2014 թթ. Ռուսիայի Յաշ քաղաքի Ալ. Իոան Կուզայի անվան	7 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	2022 թ. ապրիլ «ԿԿՓԵՀ Թյունինգ մոդուլային ուսուցման համակարգը», ՎՊՀ 2021-2022 թթ. «Նախագծերի կառավարում», Միջազգային բիզնես ակադեմիա	Տպագրված հոդվածների թիվը՝ 10



	համալսարանի «Միջազգային հարաբերություններ և եվրոպական ուսմունքներ» բաժնի բակալավրիատ /փոխատեղման ծրագիր/ 2014-2016 թթ. ՎՊՀ «Հանրային կառավարում» մասնագիտության մագիստրատուրա 2015-2017 թթ. Լեհաստանի Պոզնան քաղաքի Ադամ Միցկիևիչի անվան համալսարանի «Միջերկրածովյան ուսմունքներ» մասնագիտության մագիստրատուրա ՎՊՀ Պատմության ամբիոնի ասպիրանտ-2019 թ. - ցայսօր			ՎՊՀ 2021 թ. «Օնլայն ուսուցման տեխնոլոգիաներ, Zoom, Moodle հարթակներ»,	
Կարինե Պապիկյան 1961թ.	ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ, ԵՊՀ հասարակական մասնագիտությունների ֆակուլտետ, արվեստագիտության բաժին	39 տարի	1. 2016թ.ապրիլ-հունիս-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 2. 2016թ. հոկտեմբեր-2017թ.հունվար-«Խոցելի երեխաների սոցիալական ներառում. ներառական կրթության. Կրթություն բոլորի համար» 20 ժամյա դասընթաց /15խումբ/ 3. 2017թ.ապրիլ-մայիս-հերթական	08.2016 «Ներառական կրթություն» թեմայով 30-ժամյա վերապատրաստում 2021թ.նոյեմբեր հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա վերապատրաստման դասընթաց	Դոցենտ, Մ.գ. թ.



			ատեստավոր -ման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 4. 2018թ.մարտ-հունիս-հերթական ատեստավոր- ման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 5. 2021թ.օգոստոս-սեպտեմբեր- հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		
Անդրանիկ Սարգսյան 1969թ.	Երևանի պետական ինստիտուտ, Շինարարական իրերի և կոնստ-րուկցիաների արտադրություն մասնագիտությամբ, Շինարար տեխնոլոգ որակավորմամբ	26 տարի	2014թ.ապրիլ-հունիս-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 120-ժամյա դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		Մովսես Խորենացի մեդալակիր
Գագիկ Էմինյան 1981թ.	Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան Պետական Մանկավարժական Ինստիտուտ ՀԱ, Պատմաբան, պատմության և իրավունքի ուսուցիչ	15 տարի	Օգոստոս 2020 «Ֆինանսական կրթությունը դպրոցում ծրագրի շրջանակում «Խնայողությունների խաղ դպրոցում թեմայով 2-օրյա վերապատրաստում: /Վկայագիր/ Օգոստոս 2019թ Ձեռնարկատիրական կրթության դասընթաց: /Վկայագիր01.09.2019/ 15 դեկտեմբեր 2018 «Ֆինանսական կրթությունը դպրոցում ծրագրի շրջանակում «Ֆինանսական կրթության ինտեգրումը հասարակագիտություն առարկայի մեջ թեմայով 5-օրյա վերապատրաստում:	—	—



			/Վկայագիր/ 5 հունիս - 6 հունիս 2018թ. գնումների համակարգողի շարունակական վերապատրաստման դասընթաց: Հավաստագիր N04/003 3 ապրիլ- 30 մայիս 2018թ. մասնակցել է հանրակրթական ուսումնական հաստատության ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստմանը՝ հասարակագիտություն առարկայից: Վկայական N0175 10-26 հոկտեմբեր 2017թ. մասնակցել է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու հավակնություն ուսնեցող անձնաց համար ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի իրականացրած 90-ժամյա վերապատրաստման դասընթացին: Վկայական N 27: 2022թ. հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		
Տաթևիկ Մարտիրոսյան 1980թ.	Վանաձորի պետական համալսարան Օտար լեզուներ Հայաստանի ամերիկյան համալսարան	20 տարի	10.2021 Երեխայի իրավունքների պաշտպանություն, Բրիտանական Խորհուրդ 02.2019 Ուսուցիչ վերապատրաստողների դասընթաց, ՀՀ	08.2016 «Ներառական կրթությունը թեմայով 30-ժամյա վերապատրաստում 10.2017	



	Անգլերենի դասավանդումը որպես օտարլեզու		Բրիտանական Խորհուրդ 03.201 Մենթորների վերապատրաստման դասընթաց, ՀՀ Բրիտանական Խորհուրդ 08. 2016 Ներառական կրթություն թեմայով վերապատրաստողների դասընթաց 06.2016 Հայաստանի Ամերիկյան Համալսարանի՝ ուսուցիչների համար կազմակերպած դասընթացներ 05.13/14/15 Բրիտանական խորհրդի կողմից ուսուցիչների համար կազմակերպված Դասընթացներ 2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2023թ. ապրիլ- Ուսուցչի օգնականների 30- ժամյա վերապատրաստման դասընթաց	«Ուսուցչի օգնականներ թեմայով երկօրյա վերապատրաստում, Դիլիջան	
Հովիկ Մարգարյան 1966թ.	1983-89 թթ. Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) պետական մանկավարժական ինստիտուտի «Ֆիզդաստիարակություններ քաժինը՝ ստանալով ֆիզիկական դաստիարակության ուսուցչի որակավորում:	32 տարի	2008թ. ք. Երևան ԿԱԻ ուսուցիչների վերապատրաստում և մասնակցություն Լոռու մարզի ֆիզկուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման գործընթացներին, 2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	1990-95թթ. ք. Երևան ՀՀ սպ. մարմնամարզու յան մրցավարական հանձնաժողովներ: Սպասարկել եմ ՀՀ առաջնություններ՝ որպես մրցավար: 1992թ. ք. Չեռոքսարի ՌՄՖՍՀ սպ. մարմնամարզության բարձրագույն մրցավարական	2010թ. շնորհվել է ՎՊՀ դոցենտի գիտական կոչման: Հրատարակումներ տասնյակ



				վերապատրաստում: Սպասարկել եմ ՌՍՖՍՀ սպ. մարմնամարզության առաջնությունը: 2002թ. ք. Վանաձոր, «Save the children» շարժունակության զարգացում, 2004թ. ք. Վանաձոր «Հայկական հատուկ Օլիմպիադաներե, 2005թ. ք. Վանաձոր «Հայկական հատուկ Օլիմպիադաներե, 2011թ. ք. Երևան «Մարզիչ-մանկավարժների վերապատրաստման դասընթացներե-72 ժամ, 2018 թ. Moodly, Zoom կրթական ծրագրերի վերապատրաստումներ:	գիտական, մեթոդական հոդված-ներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ ի:
Ժաննա Ալոյան	1.1978 -1983թթ. Երևանի Կ. Մարքսի անվ.պոլիտեխնիկական ինստիտուտ 2.1995– 2001թթ. Դոնի Ռոստովի պե- տական մանկավար ժական համալսարան 3.2003-2008թթ. ԵՊՀ ռուս բանասի- րության ֆակուլտետի ասպիրանտուրա	29 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	1.SUCTI Project Final Conference, Տառազոնա, Իսպանիա 2.Moodle հարթակում երկամսյա դասընթաց 3.Методический семинар и мастер-классы для преподавателей русского языка и литературы/ Русский дом в г. Гюмри	ԲԳԹ. դոցենտ 28 հոդված



Առաքելյան Սվետլանա, 1984թ.	Վ. Բոյունովի անվան պետական համալսարան, ֆրանսերեն լեզու և հոգեբանություն, բանասեր	4 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	-	3 հոդված
Բաբոյան Հերմինե 1982թ.	2004 թ. ավարտել է Վանաձորի պետա կան մանկավարժա կան ինստիտուտի բանասիրական ֆակուլ տետի հայկական բաժինը: 2005-2009 թթ. Սո վորել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրան տուրայում, 2010թ. պաշտպանել թեկնածուական ատենախոսություն սփյուռքահայ գրող Ջահրատի քնարեր գության վերաբերյալ:	13 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	-	Դոցենտ, Մ.գ. թ.
Գևորգյան Ամալյա 1993 թ.	ՎՊՀ , անգլերեն լեզու և գրականություն, մագիստրոս	7 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	-	5 հոդված
Օհանյան Հեղինե 1970 թ.	Մոսկվայի պետական համալսարան, հաշվողական մաթեմտիկայի կիբերնետիկայի բաժին, Տգթ, դոցենտ	25 տարի	2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	-	24 հոդված



Հովհաննիսյան Աննա. 1987թ.	ՎՊՄԻ Կերպարվեստ և գծագրություն մասնագիտություն /բակալավր/ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկ.համալսարան, Կերպարվեստ և գծագրություն/մագիստրատու րա/	35 տարի	2017թ. Լոռու մարզի հանրակրթական դպրոցների կերպարվեստի ուսուցիչների վերապատ- րաստման դասընթացներ (ԿԱԻ Լոռու մասնաճյուղ) 2018 թ.Լոռու մարզի երաժշտական և արվեստի դպրոցների «Կերպարվեստի» ուսուցիչների վերապատրաստման դասընթաց 2022թ.հուլիս-սեպտեմբեր -հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց:	-	9 հոդված
Պապանյան Նելլի, 1952 թ.	Կիրովականի մանկավարժական ինստիտուտ, որակավորումը՝ երաժշտության դասատու, Երևանի պետական կոնսերվատորիայի ՈԲՖ, որակավորումը՝ երաժշտագետ:	49 տարի	2021թ.Լոռու մարզի երաժշտական և արվեստի դպրոցների «Երաժշտության տեսության» ուսուցիչների վերապատրաստման դասընթաց (1 ամիս) 2018 թ.Լոռու մարզի երաժշտական և արվեստի դպրոցների «Երաժշտության տեսության» ուսուցիչների վերապատրաստման դասընթաց (1 ամիս) 2017թ. Լոռու մարզի հանրակրթական դպրոցների երաժշտության ուսուցիչների վերապատ- րաստման դասընթացներ (ԿԱԻ Լոռու մասնաճյուղ), Ազգային ինստիտուտի Լոռու բաժանմունքի կողմից Լոռու մարզի	-	6 հոդված



			հանրակրթական դպրոցների երաժշտության ուսուցիչների վերապատրաստում՝ ատեստավորման համար 2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց		
Ամիրխանյան Արմեն, 1975 թ.	ՎՄԻ, աշխարագետ	20 տարի	2021թ. օգոստոս-սեպտեմբեր-հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց 2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	-	Տպագրված հոդվածների թիվը՝ 2 հոդված
Բաբայան Սոֆյա, 1946թ.	ԵՊՀ, բանասիրական ֆակուլտետ, բանասեր ԲԳԹ, դոցենտ.	49 տարի	2022թ. հուլիս-սեպտեմբեր - հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների 110-ժամյա դասընթաց	-	Տպագրված հոդվածների թիվը՝ 35 հոդված



ԲԱԺԻՆ 1

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (20 ԺԱՄ -6 ԿՐԵԴԻՏ), ՏԱՐԻՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (6 ԺԱՄ-1 ԿՐԵԴԻՏ) ԳՆԱՀԱՏՈՒՄ (8 ԺԱՄ-1 ԿՐԵԴԻՏ), ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (6 ԺԱՄ-1 ԿՐԵԴԻՏ), 21-ՐԴ ԴԱՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (10 ԺԱՄ-1 ԿՐԵԴԻՏ)

(10 կրեդիտ - 50 ժամ՝ լսարանային, 250 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»

(20 ԺԱՄ - 6 ԿՐԵԴԻՏ)

ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Մանկավարժություն» դասընթացի ուսումնասիրումը հնարավորություն է ընձեռում ձեռք բերել գիտելիքներ ուսուցման, դաստիարակության, կրթության, անձի զարգացման և ձևավորման մասին՝ զինելով գործնական կարողություններով ու հմտություններով: Դասընթացում ուսումնասիրվում են ուսուցչի մասնագիտական գործունեության կազմակերպման և իրականացման համար հիմնային և նպատակային նշանակություն ունեցող թեմաներ, այն են.

- Մանկավարժության ընդհանուր հիմունքներ
- Մանկավարժության մեթոդաբանությունը
- Անձի զարգացում և ձևավորում
- Դիդակտիկա
- Ուսուցման մեթոդներ և տեխնոլոգիաներ



- Ուսուցման կազմակերպման ձևեր
- Գիտելիքների ստուգում և գնահատում
- Կրթության բովանդակություն
- Դաստիարակության տեսություն
- Դաստիարակության ընդհանուր համակարգը
- Մանկավարժի պրոֆեսիոգիրը
- Ներառական կրթություն
- Տարիքային զարգացման հոգեբանություն:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆ Է՝

- Հաղորդել մանկավարժական տեսական-մեթոդաբանական գիտելիքներ,
- զարգացնել մանկավարժական մտածողություն և մշակույթ,
- ձևավորել մանկավարժական գործունեության նախապատրաստման, իրականացման; մանկավարժական երևույթների մեկնաբանման; մանկավարժական իրավիճակների իմաստավորման; մանկավարժական խնդիրների լուծման կարողություններ, հմտություններ:

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՑԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մասնագիտական գիտելիք և իմացություն

Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի՝



- մեկնաբանել մանկավարժական գիտության փիլիսոփայական հիմքերը, զարգացման պատմական նախադրյալներն ու փուլերը, մանկավարժության տեղը մարդաբանական գիտությունների համակարգում, ուսումնասիրության օբյեկտը, առարկան, բնութագրել մասնագիտական առանցքային կոմպետենցիաները,
- հիմնավորել մանկավարժության կապն ու փոխառնչություններն այլ գիտությունների հետ, բնութագրել մանկավարժական գիտությունների համակարգը, մանկավարժության հիմնական հասկացությունները,
- վերլուծել անձի զարգացման և սոցիալականացման վրա ազդող գործոնները, տարիքային կենսափուլերի բովանդակությունն ու առանձնահատկությունները,
- մեկնաբանել մանկավարժական գործընթացի բաղադրամասերը և օրինաչափությունները, ՀՀ կրթության համակարգի կառուցվածքը, կրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի բովանդակությունը, հանրակրթության պետական չափորոշչի կառուցվածքը, հանրակրթության տարբեր աստիճաններում սովորողներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը,
- բնութագրել ուսուցման գործընթացի կառուցվածքը, ուսուցման սկզբունքները, տեխնոլոգիաները, մեթոդները, միջոցները, դասերի պլանավորման և կազմակերպման ձևերը, սովորողների ուսումնական արդյունքների վերահսկողության և գնահատման ձևերն ու մեթոդները:

Գործնական մասնագիտական կարողություններ

- կտիրապետի մանկավարժական հետազոտությունների իրականացման տեսական և էմպիրիկ մեթոդներին, կկարողավա մշակել հետազոտության տվյալները,



- կիրականացնի անհատական և խմբային ուսումնառատագրական գործունեություն, կվերլուծի, կհամակարգի, կմեկնաբանի և կամփոփի արդյունքները, կդրսևորի համագործակցային և հաղորդակցական կարողություններ, կմշակի և կկիրառի ուսումնական տեղեկույթը,
- կբնութագրի և կհամեմատի ուսուցման մեթոդների դասակարգման վերաբերյալ գիտական տարբեր տեսակետներ, կհիմնավորի մասնագիտական առարկայի ուսուցման գործընթացում մեթոդների ընտրության և կիրառման նպատակահարմարությունը,
- կկազմի գնահատման սանդղակներ, կսահմանի ըստ միավորների տրվող չափանիշները,
- կվերլուծի մանկավարժական իրավիճակներ, կձևակերպի դրանցում առկա խնդիրները, կկարողանա առաջարկել խնդրի լուծման ուղենիշեր :

Ընդհանրական/ փոխանցելի կարողություններ

- կտիրապետի տեղեկատվական տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու, ուսումնական տեղեկույթի որոնման, համակարգման, համակարգչային միջոցներով ներկայացման կարողությունների, տվյալների մշակման գործիքակազմին, կիրականացնի քննարկումներ և փոխադարձ գնահատում,
- կտիրապետի կրթական գործընթացի սուբյեկտների ուսումնական փոխներգործության ու մանկավարժական հաղորդակցման ձևերին,



➤ կիրականացնի իր կրթական գործունեության վերլուծություն և ինքնագնահատում, կտիրապետի մասնագիտական էթիկայի նորմերին, կկատարի վերլուծություններ, եզրահանգումներ, տրամաբանական դատողություններ, փաստարկում, հիմնավորված ընդհանրացումներ, կարտահայտեի սեփական դիրքորոշումն ու տեսակետը, կտիրապետի գրագետ, արտահայտիչ խոսքի:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- Ա1.** Ներկայացնելու հանրակրթության բովանդակությունը (ուսումնական բնագավառներ), դրա առանձնահատկությունները,
- Ա3.** Թվարկելու և մեկնաբանելու ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը, կրթության բովանդակությունն արտացոլող փաստաթղթերը (կրթակարգ, չափորոշիչներ, ծրագրեր),
- Ա4.** Ձևակերպելու մանկավարժության և հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, բնութագրել կրթական նոր տեխնոլոգիաները,
- Ա6.** Քննարկելու երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբե-րությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը:
- Բ1.** Աշխատելու կրթական փաստաթղթերով (չափորոշիչներ, պլաններ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ էլեկտրոնային տեղեկատվական այլ աղբյուրներ),
- Բ3.** կիրառելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ, նախագծային, հետազոտական աշխատանքներ և ներկայացնելու արդյունքները,
- Բ4.** արդյունավետ հաղորդակցվելու և համագործակցելու ծնողների, գործընկերների և համայնքի հետ երեխաների ուսուցման և դաստիարակության խնդիրները լուծելու նպատակով,



Բ5. մանկավարժական տարբեր իրավիճակներում դրսևորելու մասնագիտական վարպետություն (հասկանալ, գնահատել իրավիճակը և համարժեք լուծումներ գտնել՝ դրսևորելով պատասխանատվություն, տակտ, ապրումակցում և այլն),

Բ6. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ
		Ը ն դ հ .	Տ ե ս .	Գ ո թ .		
1	Մանկավարժություն	20	10	12	Օգնել ապագա ուսուցիչներին ձեռք բերել ու մանկավարժական տեսական գիտելիքներ և ձևավորել անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:	Մասնակիցները կկարողանան՝ Ուսումնադաստիարակչական գործընթացում հետևողականորեն կիրառել մանկավարժամեթոդական գիտելիքները:
2	Դաս 1. Մանկավարժություն օբյեկտը, առարկան և խնդիրները	2	1	1	Խորացնել և կատարելագործել . Մանկավարժություն յան վերաբերյալ տեսական	Մասնակիցները կիմանան . Մանկավարժություն ծագումն ու զարգացումը, օբյեկտը, առարկան, խնդիրները Մասնակիցները կկարողանան . Մեկնաբանել մանկավարժական



	«Գործնական աշխատանք Մանկավարժական հիմնական հասկացությունները, գիտահետազոտական մեթոդները				գիտելիքները	հետազոտությունների մեթոդաբանական հիմքը, գիտամանկավարժական հետազոտության մեթոդների ընդհանուր բնութագիրը, մեթոդների դասակարգումն ըստ բովանդակության և ձևի:
3	Դաս 2. Անձնավորություն յան զարգացման գործընթացը Գործնական աշխատանք «2արգացում» և «Դաստիարակություն» հասկացությունների բնորոշումը:	2	1	2	Խորացնել և կատարելագործել. Անձի ձևավորման և զարգացման գործունեության մասին գիտելիքները:	Մասնակիցները կիմանան. Ժառանգականություն, միջավայր, դաստիարակություն հասկացությունների էությունը: Անձ, անհատ, անձնավորություն հասկացությունների էությունը: Դպրոցականների տարիքային զարգացման առանձնահատկությունները: Մասնակիցները կկարողանան. Կառուցել անձի զարգացման ճանապարհային քարտեզը:
4	Դաս 3. Դաստիարակություն նպատակի հիմնախնդիրը մանկավարժություն յան մեջ Գործնական աշխատանք Դաստիարակություն յան	2	1	1	Խորացնել և կատարելագործել. Դաստիարակություն նպատակի և հիմնախնդրի մասին գիտելիքները	Մասնակիցները կիմանան. Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման մասին: Ինքնադաստիարակության և վերադաստիարակության մասին: Մասնակիցները կկարողանան. Ներկայացնել դաստիարակության դերը և տեղը անձի ձևավորման գործունեության



	հիմնախնդիր ընթերցում					համակարգում, միջավայրի դերը անձի ձևավորման գործում:
5	Դաս 4. Ուսուցման գործընթացի էությունը, սկզբունքներ ը Գործնական աշխատանք. Ուսուցման տեսություն մեթոդաբանա կան հիմքը	2	1	1	Խորացնել և կատարելագործ ել. Ուսուցման գործընթացի էություն, սկզբունքներ ի, ինչպես և ուսուցման տեսությամբ մեթոդաբանա կան հիմքերի մասին գիտելիքները	Մասնակցները կիմանան. Ուսուցման գործընթացի հիմնական օրինակափոխ ությունները: Մասնակցները կկարողանան. Տարբերակել ուսուցման սկզբունքներ և կանոնները: Ներկայացնել գիտակցությամբ, ակտիվությամբ և ինքնուրույն ությամբ, համակարգված ությամբ և հաջորդական ությամբ սկզբունք ներ, գիտելիքներ ի կայունությամբ սկզբունքներ, մատչելիությամբ սկզբունքներ ուսուցման սկզբունքներ ի միասնությամբ ունենալ:
6	Դաս 5. Ուսուցման մեթոդները և տեխնոլոգիան երը Գործնական աշխատանք Հասկացողությ ուն ուսուցման մեթոդներ ի	2	1	1	Խորացնել և կատարելագործ ել. Ուսուցման մեթոդներ ի և տեխնոլոգիան երի գիտնական ոցը:	Մասնակցները կիմանան. Ուսուցման ժամանակակից մեթոդներ ի և տեխնոլոգիան երի կիրառման ընթացակարգը: Պրոբլեմային ուսուցման առանձնահատկ ությունները, քայլեր, նախագծ ային մեթոդներ ը և այլն: Գիտամանկավար ժական հետազոտ ություններ ի



	մասին :					մեթոդներին կատարելագործման ուղիները : Մասնակիցները կկարողանան . Գործնականում կիրառել . • յուրացված մեթոդները և տեխնոլոգիաները • գիտելիքներին ստուգման և գնահատման մեթոդները
7	Դաս 6. Ուսուցման կազմակերպման ձևերը Գործնական աշխատանք Դասընդերպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև:	2	1	1	Խորացնել և կատարելագործել . Ուսուցման կազմակերպման մեթոդաբանությունը յուրև	Մասնակիցները կիմանան . Ուսուցման կազմակերպման ձևերի մասին, նրանց պատմական զարգացումը : Դասերի տիպաբանությունը և կառուցվածքը : Մասնակիցները կկարողանան . Նախապատրաստել և պլանավորել դասը : Իրականացնել թեմատիկ պլանավորում, կազմակերպել ուսումնական էքսկուրսիաներ, ուսումնադաստիարակչական այլ միջոցառումներ :
8	Դաս 7. Դաստիարակություն թյան գործընթացի էությունը Գործնական աշխատանք Դաստիարակություն թյան տեսությունը և դրա դերը	2	1	1	Խորացնել և կատարելագործել . Դաստիարակություն թյան գործընթացի հիմնական օրինակափուն թյուններին մասին	Մասնակիցները կիմանան . Ընդհանուր հասկացողությունը և դաստիարակություն մեթոդներին, հնարներին և միջոցներին մասին : Մասնակիցները կկարողանան . Ներկայացնել դաստիարակչական գործընթացի արդյունավետություն թյան բարձրացման ուղիները :



	մանկավարժական գիտություն բաղկացուցիչ մաս				գիտելիքները	
9	Դաս 8. Դաստիարակություն սկզբունքները Գործնական աշխատանք Դաստիարակչական աշխատանքներ կազմակերպում	2	1	1	Խորացնել և կատարելագործել . Դաստիարակություն գործընթացի 2 արժիշ նվերի մասին գիտելիքները :	Մասնակիցները կիմանան . Դաստիարակություն կազմակերպման հիմնական սկզբունքները : Մասնակիցները կկարողանան . Գործնական մեկնաբանել դաստիարակություն գործընթացի սկզբունքները՝ փոխադարձ կապերի հիման վրա:
10	Դաս 9. Դաստիարակություն մեթոդները Գործնական աշխատանք Բարոյական դաստիարակություն	2	1	1	Խորացնել և կատարելագործել . Դաստիարակություն մեթոդների վերաբերյալ գիտելիքները	Մասնակիցները կիմանան . Դաստիարակություն մեթոդներ կիրառման արդյունավետություն պայմանները : Մասնակիցները կկարողանան . Հիմնավորված ընտրել և հետևողականորեն կիրառել դաստիարակություն մեթոդներ :
11	Դաս 10. Դպրոցի կառավարման հիմունքներ Գործնական աշխատանք	2	1	1	Խորացնել և կատարելագործել . Կրթություն	Մասնակիցները կիմանան . Դպրոցում ունեմանադաստիարակչական աշխատանքի էությունը



	Ուսուցիչը դպրոցի կառավարման համակարգում մ:				Ժողովրդավար կառավարման ն դեկավարման մասին իմացություն մակարդակը	դեկավարման մասին: Մասնակիցները կկարողանան. Դասրանի, դասադրոցի դեկավարման գործընթացում ապահովել ժողովրդավարական սկզբունքների կիրառումը:
12	Ամփոփիչ ստուգում (Խորացնել մանկավարժա մեթոդական, ճանաչողակա ն հմտություն ներ, գործնական կարողություն ներ)	2		2		

«ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

(6 ԺԱՄ-1 ԿՐԵԴԻՏ)

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմա 1. Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում



Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկություններն ու դինամիկան կրտսեր, միջին և ավագ դպրոցական տարիքներում. 2 դասաժամ՝ 1 ժամ տեսական, 1 ժամ գործնական պարապմունքներ:

Թեմա 2. Ուսումնական հետաքրքրություններ

Սովորողների ուսումնական հետաքրքրությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունների ներկայացում, հետաքրքրությունների խթանման ու զարգացման ուղիների քննարկում. 1 դասաժամ՝ 1 ժամ տեսական:

Թեմա 3. Ուսումնառության ոճեր

Երեխաների սովորելու առանձնահատկությունների՝ ուսումնառության ոճերի ներկայացում և դրանց համապատասխան ուսումնառության գործընթացի կազմակերպման ձևերի քննարկում. 2 դասաժամ՝ 1 ժամ տեսական, 1 ժամ գործնական պարապմունքներ:

Թեմա 4. Արդյունավետ կառավարում և հաղորդակցություն

Դասարանի արդյունավետ կառավարման վարքի ձևեր, հաղորդակցման մեխանիզմներ, հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորման սկզբունքներ. 1 դասաժամ՝ 1 ժամ տեսական:

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԹՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուսուցիչը բնութագրում է սովորողների հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում և կարողանում է այդ առանձնահատկությունների հաշվառմամբ իրականացնել արդյունավետ դասավանդում, ուսուցիչը ներկայացնում է սովորողների ուսումնական հետաքրքրությունների ձևավորման տարիքային առանձնահատկությունները և կիրառում է դրանց բացահայտմանն ու զարգացմանն ուղղված մեթոդներ, ուսուցիչը ծանոթ է սովորողների ուսումնառության ոճերին և դրանց համապատասխան ուսումնառության գործընթացը կառուցելու ձևերին ու միջոցներին:



Ուսուցիչը կարողանում է պլանավորել դասարանն արդյունավետ կառավարելու, դրական հոգեբանական մթնոլորտ ապահովելու և սովորողների հետ արդյունավետ հաղորդակցվելու գործողություններ:

Գործնական աշխատանքի նկարագիրը

Գործնական պարապմունքները (ինչպես նաև դասախոսությունները) պետք է ունենան ինտերակտիվ բնույթ, կիրառվեն դասավանդման և ուսուցման ակտիվ մեթոդներ: Վերոնշյալ կարողությունները կարելի է ձևավորել աշխատանքի կազմակերպման՝ անհատական, զույգային և խմբային ձևերի կիրառմամբ:

Թեմա 1. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ.

Ա) սովորողների զարգացման տարիքային շրջանների հոգեբանական բնութագրերի կազմում՝ աղյուսակների տեսքով,

բ) տարիքային շրջանների համեմատական վերլուծություն՝ Վենի դիագրամ, T-աձև աղյուսակ և այլն,

գ) հոգեկան գործընթացների և նրանց առանձնահատկություններին համապատասխան դասավանդման մոտեցումների խմբային մշակում և ներկայացում:

Թեմա 2. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ.

Ա) սովորողների ուսումնական հետաքրքրությունները բացահայտող հարցարանի կազմում,

բ) տարիքային տարբեր շրջաններում սովորողների ուսումնական հետաքրքրությունները խթանող մոտեցումների խմբային մշակում և ներկայացում:

Թեմա 3. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ.

Ա) սովորողների ուսումնառության ոճերի բացահայտման ուղիներ և մեթոդներ, թեստային աշխատանք,



բ) ուսումնառության ոճերին համապատասխան ուսումնական կոնկրետ հանձնարարությունների և առաջադրանքների կազմում և ներկայացում, աշխատանք գույգերով:

Թեմա 4. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ.

Ա) դասարանն արդյունավետ կառավարելու մոդելների ստեղծում՝ խմբային աշխատանք,

բ) խնդրահարույց իրավիճակների և դրանց հաղթահարման տարբերակների ներկայացում արդյունավետ հաղորդակցման մոտեցումներին համապատասխան՝ անհատական աշխատանք: Հոգեբանական ունկնդրման և խորհրդատվության քայլաշարի մշակում սովորողների համար:

գ) Դասարանում հոգեբանական մթնոլորտի բարելավման գործողությունների պլանի մշակում՝ խմբային աշխատանք:

«ՏԱՐԻՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ
		Ընդհ.	Տես.	Գործն.		
1	Գործնական պարապմունքները (ինչպես նաև դասախոսությունները) պետք է ունենան ինտերակտիվ բնույթ, կիրառվեն դասավանդման և ուսուցման ակտիվ մեթոդներ: Վերոնշյալ կարողությունները կարելի է ձևավորել աշխատանքի կազմակերպման՝ անհատական, գույգային և խմբային ձևերի	6	4	2	Բարձրացնել մասնակիցների գիտելիքները սովորողների տարիքային առանձնահատկությունների, փոխհարաբերությունների, հասարակական ակտիվության և ինքնագիտակցության մասին	Ուսուցիչը բնութագրում է սովորողների հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում և կարողանում է այդ առանձնահատկությունների հաշվառմամբ իրականացնել արդյունավետ դասավանդում, ուսուցիչը ներկայացնում է սովորողների ուսումնական հետաքրքրությունների



	կիրառմամբ:					ձևավորման տարիքային առանձնահատկությունները և կիրառում է դրանց բացահայտմանն ու զարգացմանն ուղղված մեթոդներ, ուսուցիչը ծանոթ է սովորողների ուսումնառության ոճերին և դրանց համապատասխան ուսումնառության գործընթացը կառուցելու ձևերին ու միջոցներին: Ուսուցիչը կարողանում է պլանավորել դասարանն արդյունավետ կառավարելու, դրական հոգեբանական մթնոլորտ ապահովելու և սովորողների հետ արդյունավետ հաղորդակցվելու գործողություններ:
	Դաս 1. Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջաններում Սովորողի հոգեկան զարգացման առանձնահատկություններն ու դինամիկան կրտսեր, միջին և ավագ դպրոցական տարիքներում. Գործնական աշխատանք Թեմա 1. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ. Ա) սովորողների զարգացման տարիքային շրջանների հոգեբանական բնութագրերի կազմում՝ աղյուսակների տեսքով,	2	1	1	Խորացնել և կատարելագործել կրտսեր, միջին և ավագ դպրոցական տարիքի աշակերտների տարիքային առանձնահատկությունների, իմացական գործընթացների մասին մասնակիցների գիտելիքները	Մասնակիցները կիմանան՝ դպրոցականների տարիքային փուլերը, տարիքային և իմացական գործընթացների զարգացման առանձնահատկությունները՝ Մասնակիցները կկարողանան՝ կազմել սովորողի հոգեբանական բնութագիրը, կազմել Վենի դիագրամ Մասնակիցները կտիրապետեն հոգեկան գործընթացների և նրանց առանձնահատկություններին համապատասխան դասավանդման մոտեցումներին



բ) տարիքային շրջանների համեմատական վերլուծություն՝ Վենի դիագրամ, T-աձև աղյուսակ և այլն, գ) հոգեկան գործընթացների և նրանց առանձնահատկություններին համապատասխան դասավանդման մոտեցումների խմբային մշակում և ներկայացում:					
Դաս 2. Ուսումնական հետաքրքրություններ Սովորողների ուսումնական հետաքրքրությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունների ներկայացում, հետաքրքրությունների խթանման ու զարգացման ուղիների քննարկում Գործնական աշխատանք Թեմա 2. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ. Ա) սովորողների ուսումնական հետաքրքրությունները բացահայտող հարցարանի կազմում, բ) տարիքային տարբեր շրջաններում սովորողների ուսումնական հետաքրքրությունները խթանող մոտեցումների խմբային մշակում և ներկայացում:	1	1		Խորացնել և կատարելագործել աշակերտների ուսումնական հետաքրքրությունների շրջանակների ընդլայնման, ուսումնական դրդապատճառների վերաբերյալ մասնակիցների գիտելիքները	Մասնակիցները կիմանան սովորողների ուսումնական գործունեության առանձնահատկությունները, հետաքրքրությունների խթանման եղանակները Մասնակիցները կկարողանան համաեմատել, վերլուծել և համադրել սովորողների ուսումնական առանձնահատկությունները Մասնակիցները կտիրապետեն սովորողների ուսումնական հետաքրքրությունները խթանող մոտեցումներին
Դաս 3. Ուսումնառության ոճեր	2	1	1	Խորացնել և կատարելագործել	Մասնակիցները կիմանան



Երեխաների սովորելու առանձնահատկությունների՝ ուսումնառության ոճերի ներկայացում և դրանց համապատասխան ուսումնառության գործընթացի կազմակերպման ձևերի քննարկում Գործնական աշխատանք Թեմա 3. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ. Ա) սովորողների ուսումնառության ոճերի բացահայտման ուղիներ և մեթոդներ, թեստային աշխատանք, բ) ուսումնառության ոճերին համապատասխան ուսումնական կոնկրետ հանձնարարությունների և առաջադրանքների կազմում և ներկայացում, աշխատանք զույգերով:				ուսումնական ոճերի վերաբերյալ մասնակիցների գիտելիքները	սովորողների ուսումնական ոճերը Մասնակիցները կկարողանան ձեռք բերված գիտելիքների վերլուծություն և համադրություն կատարելու միջոցով իրականացնել ուսուցման ակտիվ գործընթաց՝ հաշվի առնելով սովորողների ուսումնական ոճերը Մասնակիցները կտիրապետեն ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերին
Դաս 4. Արդյունավետ կառավարում և հաղորդակցություն Դասարանի արդյունավետ կառավարման վարքի ձևեր, հաղորդակցման մեխանիզմներ, հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորման սկզբունքներ Գործնական աշխատանք	1	1		Խորացնել և կատարելագործել հաղորդակցման տարիքային առանձնահատկությունների, հոգեբանական մթնոլորտի ձևավորման վերաբերյալ մասնակիցների գիտելիքները	Մասնակիցները կիմանան դասարանի արդյունավետ կառավարման վարքի ձևերը, հաղորդակցման մեխանիզմները, հոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորման սկզբունքները Մասնակիցները կկարողանան



Թեմա 4. Գործնական աշխատանքի առաջարկվող տարբերակներ. Ա) դասարանն արդյունավետ կառավարելու մոդելների ստեղծում՝ խմբային աշխատանք, բ) խնդրահարույց իրավիճակների և դրանց հաղթահարման տարբերակների ներկայացում արդյունավետ հաղորդակցման մոտեցումներին համապատասխան՝ անհատական աշխատանք: Հոգեբանական ունկնդրման և խորհրդատվության քայլաշարի մշակում սովորողների համար: գ) Դասարանում հոգեբանական մթնոլորտի բարելավման գործողությունների պլանի մշակում՝ խմբային աշխատանք:					ձեռք բերված գիտելիքների կիրառել դասարանի արդյունավետ կառավարման գործընթացում, զարգացնել սովորողների հաղորդակցական հմտությունները Մասնակիցները կտիրապետեն դասարանի հոգեբանական մթնոլորտի ձևավորման սկզբունքներին
--	--	--	--	--	---

«ՀԱՍՏՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՈՒՄ»
(6 ԺԱՄ- 1 ԿՐԵԴԻՏ)

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1) Ներառական կրթության փաստաքննություն: Ներառական կրթության իրավական կարգավորումներ:



Երեխաների ու նրանց կրթական կարիքների բազմազանությունը: Սովորողների կրթական կարիքների բացահայտում և գնահատում:

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներ:

Ներառող դասավանդում, ռազմավարություններ, մեթոդներ, մոտեցումներ

Կրթական ծրագրերի հարմարեցումներ, տարբերակված ուսուցում, անհատական ուսուցման պլանավորում:

Համագործակցությունն ու փոխհարաբերությունները ներառական կրթության համատեքստում:

Իրավիճակների լուծումներ (ինքնուրույն աշխատանք):

Բաժնի ուսումնառության վերջնարդյունքները

1) Ուսուցիչը կկարողանա՝

ա) մեկնաբանել ներառական կրթության կարևորությունը մարդու իրավունքների տեսանկյունից,

բ) թվարկել ներառական կրթության դրական կողմերը և հիմնական սկզբունքները,

գ) ներկայացնել ներառական կրթության համատեքստում ընդունելի բառապաշարը,

դ) թվարկել ներառական կրթության կազմակերպումը կարգավորող իրավական ակտերի հիմնական դրույթները,

ե) ընդունել և արժևորել սովորողների բազմազանությունը,

զ) համարել սովորողների տարբերությունը որպես ռեսուրս և արժեք,

է) թվարկել ներառական կրթության համատեքստում հաճախ հանդիպող բազմազանության տեսակները,

ը) ճանաչել հաճախ հանդիպող կրթական կարիքների առանձնահատկությունները,



թ) բացահայտել եւ ճանաչել սովորողների կրթական կարիքները,

ժ) վերհանել կրթության գործընթացում երեխայի լիարժեք մասնակցության սահմանափակումները և դրանց հաղթահարմանը խթանող գործոնները,

ի) կիրառել դպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմը,

իա) ներկայացնել ՀՀ-ում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման եռաստիճան համակարգը,

իբ) տարբերակել դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացները,

իգ) սահմանել երեխային, ծնողին, մանկավարժին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակները,

իդ) ճանաչել սովորողների ուսումնառության ոճերը և կիրառել համապատասխան ռազմավարություններ,

իե) ընտրել ու կիրառել դասավանդման համապատասխան մեթոդներ և ռազմավարություններ՝ ելնելով սովորողների կրթական կարիքներից ու առանձնահատկություններից,

իզ) կիրառել դասավանդման Ուսումնառության համընդհանուր ձևավորման մոտեցումները,

իէ) կիրառել սովորողների ներգրավման բազմազանության ձևեր,

իը) պլանավորել դասն այնպես, որ բոլոր սովորողները դասի տարբեր փուլերում մասնակցություն ունենան,

իթ) իրականացնել համատեղ դասավանդում,



իժ) թվարկել համատեղ դասավանդման մոդելները, բաղադրիչները, ինչպես նաև ներկայացնել արդյունավետ համատեղ դասավանդման քայլերը,

իլ) սահմանել Անհատական ուսուցման պլան հասկացությունը (այսուհետ՝ ԼԼՈւՊ),

լա) նկարագրել, թե ինչպիսի հարմարեցումներ են անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար,

լբ) կատարել հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներ ըստ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի,

լգ) նկարագրել սովորողի ԱՌԻ-Պ-ի մշակման գործընթացի հիմնական քայլերը,

լդ) սահմանել երեխայի անհատական կրթական նպատակներ,

լե) մեկնաբանել ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության կարևորությունը,

լզ) նշել կրթության գործընթացի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնակիցների համագործակցության շրջանակը,

լէ) թվարկել ուսուցիչների, աջակցող մասնագետների, ընտանիքների անդամների ու երեխայի կրթության հետ առնչվող այլ շահառուների հետ՝ երեխաների արդյունավետ ուսումնառության խոչընդոտները հաղթահարելու համագործակցության ուղիներ,

լը) ներկայացնել ընտանիքին երեխայի ուսումնառության հարցերում ակտիվ ներգրավելու ռազմավարություններ:

«ՀԱՄԱԸՆԴՆԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ



Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ
		Ընդհ.	Տես.	Գործն.		
	Ներառական կրթություն	6	3	3	Բաձրացնել մասնակիցների գիտելիքները համընդհանուր ներառական կրթության և մանկավարժահոգեբանական ջակջության տրամադրամն վերաբերյալ	Մասնակիցները կկարողանան՝ Կազմել ԱՈԻՊ և ՄԱԾԱՊ և կիրառել դրանք ուսուցման գործընթացում
1	Թեմա 1. Ներառական կրթության փաստահենք ընկալումը: Ներառական կրթության օրենսդրական հիմքերն ու համընդհանուր սկզբունքները: «Ներառական կրթության» հասկացությունը, - ներառական կրթության նպատակը, գաղափարախոսության հիմնական սկզբունքները, - ՀՀ-ում անցում համընդհանուր ներառական կրթության - ներառական կրթության հռչակումը՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովում, - հաշմանդամության սոցիալական մոդելը և նրա	1	0.5	0.5	Խորացնել և կատարելագործել ներառական կրթության, նրա նպատակների, գաղափարախոսական հիմնական սկզբունքների, բոլորի համար կրթության իրավունքի հասանելիության, սոցիալական մոդելի մասին մասնակիցների գիտելիքները, արժևորել դրանք և ձևավորել համապատասխան հմտություններ և վարքագիծ:	Մասնակիցները կլիմանան՝ «Ներառական կրթության» հասկացությունը, գաղափարախոսության հիմնական սկզբունքները, յուրաքանչյուր երեխայի կրթական իրավունքը, սոցիալական մոդելը և ուսումնառության արդյունքի նկատմամբ հոգածությունը: Մասնակիցները կկարողանան՝ ներկայացնել համընդհանուր ներառական առանձնահատկությունները, առանձնացնել նրա նպատակները և գաղափարախոսական դրույթները, կիրառել դրանք ուսուցման գործընթացում: Կազմել ԿԱՊԿՈԻ սովորողների հոգածության սխեմատիկ մոդելը, մշակել միջավայրային, մեթոդական, ծրագրային փոփոխությունների և հարմարեցումների պլան:



	եությունը, ԿԱՊԿՈՒ սովորողի ուսումնառության արդյունքի նկատմամբ հոգածությունը Գործնական աշխատանք Թեմա 2: «Ներառական կրթության առանձնահատկությունները Անհատական, զույգերով և խմբերով թեմայի դիտարկումներ, քննարկումներ, արդյունքների ներկայացում՝ կարճ ելույթով, իրավիճակների ստեղծում և նկարագրում (առարկայական ժամերին), դերային խաղ, դեպքի ուսումնասիրում և այլն:					
3	Թեմա 3. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ. Աջակցություն բոլոր աշակերտներին՝ հիմնված բարձր ակնկալիքների եվ ձեռքբերումների հնարավորության վրա: 3.1. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների եռաստիճան համակարգը: 3.2. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական	1	0.5	0.5		Մասնակիցները կիմանան և կկարողանան՝ - Ներկայացնել ՀՀ-ում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման եռաստիճան համակարգը, - Տարբերակել դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներում կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացները, - Սահմանել երեխային, ծնողին, մանկավարժին տրամադրվող



աջակցության ծառայությունների տրամադրումը դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներում: 3.3 Երեխային, ծնողին/ խնամակալին, մանկավարժին (ուսուցիչ, ուսուցչի օգնական, աջակցող մասնագետ) տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները: Գործնական աշխատանք Թեմա: «Ի՞նչ է անհրաժեշտ երեխային: Անհատական, գույգերով և խմբերով թեմայի դիտարկումներ, քննարկումներ, արդյունքների ներկայացում՝ գծապատկերով, իրավիճակների ստեղծում և նկարագրում (առարկայական ժամերին), դերային խաղ, դեպքի ուսումնասիրում և այլն:					մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տեսակները:
Թեմա 4. Ներառող դասավանդում. Ռազմավարություններ, մեթոդներ, մոտեցումներ 4.1. Ներառական կրթության համատեքստում կիրառվող դասավանդման մեթոդներ ու ռազմավարություններ.	1	0.5	1		Մասնակիցները կիմանան և կկարողանան՝ • Ճանաչել սովորողների ուսումնառության ոճերը և զարգացնել համապատասխան ռազմավարություններ՝ սովորողին դարձնելով անկախ ուսումնառող: • Ընտրել ու կիրառել դասավանդման



Ուսումնառության համընդհանուր ձևավորում 4.2. Ներառական կրթության համատեքստում կիրառվող դասավանդման մեթոդներ ու ռազմավարություններ. Համատեղ դասավանդում Գործնական աշխատանք Թեմա: «Ներառական կրթության համատեքստում կիրառվող դասավանդման մեթոդներ ու ռազմավարություններ: Անհատական, գույգերով և խմբերով թեմայի դիտարկումներ, քննարկումներ, արդյունքների ներկայացում՝ գծապատկերով, իրավիճակների ստեղծում և նկարագրում (առարկայական ժամերին), դերային խաղ, դեպքի ուսումնասիրում և այլն:					համապատասխան մեթոդներ ռազմավարություններ՝ ելնելով սովորողների կրթական կարիքներից առանձնահատկություներից: Կիրառել դասավանդման բազմազան ռազմավարություններ, մասնավորապես՝ ուսումնառության համընդհանուր ձևավորման մոտեցումները:
5. Կրթական ծրագրերի հարմարեցումներ, անհատականացում եւ անհատական ուսուցման պլանավորում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական առաջընթացի գնահատում	1	1.5	1		Մասնակիցները կիմանան և կկարողանան՝ - սահմանել Անհատական ուսուցման պլան հասկացությունը (այսուհետ՝ ԱՈւՊ), - նկարագրել, թե ինչպիսի հարմարեցումներ են անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման գործընթացը արդյունավետ



5.1. ԱՌՈՊ-ի լրացումը՝ համաձայն մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի 5.2 ԱՌՈՊ-ը մշակումը՝ որպես համագործակցային գործընթաց. Դերեր և պարտականություններ Գործնական աշխատանք Թեմա: «ԱՌՈՊ-ի մշակման մասնակիցների դերերն ու պարտականությունները:					կազմակերպելու համար, կատարել հանրակրթական առարկայական ծրագրերի հարմարեցումներ ըստ սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի: • նկարագրել սովորողի ԱՌՈՊ-ի մշակման գործընթացը՝ նշելով, որ այն հիմնվում է հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի, ինչպես նաև երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների վրա
--	--	--	--	--	---

«ԳՆԱՀԱՏՈՒՄ»
(8 ԺԱՄ- 1 ԿՐԵԴԻՏ)

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման, նպատակները, սկզբունքները, ձևերն ու տեսակները:
- Բնութագրող և միավորային գնահատում, միավորային սանդղակ, բնութագրիչները, գրանցումը և հաշվառումը:
- Առաջադրանքների բարդության աստիճանի բնութագրիչները:
- Առաջադրանքների տեսակները՝ ըստ բարդության աստիճանի:
- Ուսումնական նախագծերի գնահատման սկզբունքները:



- Գնահատման հարցաշարերի կազմման սկզբունքները, հատկորոշիչները:
- Հայտորոշիչ գնահատում, նպատակը, սկզբունքները, տեսակները և գործիքներ
- Ձևավորող գնահատում, նպատակը, սկզբունքները, տեսակները և գործիքներ
- Ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող) նպատակը, սկզբունքները, տեսակները և գործիքներ:
- Տվյալ առարկայի դաշտում ձևավորող գնահատման գործիքների տեղայնացում:
- Գնահատման նյութերի՝ առաջադրանքների, ռուբրիկների մշակում:

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1) Ուսուցիչը կկարողանա՝

- ա) ներկայացնել սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման համակարգի հիմնական առանցքային սկզբունքները,
- բ) ներկայացնել ուսումնական առաջադիմության գնահատման, նպատակները, սկզբունքները, ձևերն ու տեսակները,
- գ) ներկայացնել հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատման (միավորային 1-10 և բնութագրող) բնութագրիչները,
- դ) կազմել տարբեր աստիճանի բարդության առաջադրանքներ՝ ըստ համապատասխան բնութագրիչների,
- ե) կազմել գնահատման հարցաշարեր ըստ հատկորոշիչների,
- զ) ներկայացնել ձևավորող գնահատման տեսակներն ու գործիքները և տեղայնացնել դրանք առարկայական դաշտում,
- է) կազմել ձևավորող գնահատման գործիքներ և ռուբրիկներ՝ ըստ նպատակի,



«ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ
		Ընդհ.	Տես.	Գործ.		
1	Գնահատում	8	4	4	Զարգացնել մասնակիցների գիտելիքները գնահատման, նրա նպատակների, ձևերի, տեսակների, ԿԱՊԿՈՒ սովորողների առանձնահատկությունների վերաբերյալ	Մասնակիցները կկարողանան՝ կիրառել գնահատման տարբեր տեսակներ և ձևեր ուսուցման գործընթացում, կազմել գնահատման սանդղակներ և թեստեր
2	Դաս 1. Գնահատում Գնահատում հասկացությունը Գործնական աշխատանք Գործնական օրինակներով հիմնավորել Հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները գնահատման գործընթացում	2	1	1	Խորացնել և կատարելագործել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ գիտելիքները	Մասնակիցները կիմանան՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման էության և բովանդակության էությունը: Մասնակիցները կկարողանան՝ Գործնականում կիրառել սովորողների գնահատման երեք տեսակները. 1) հայտորոշիչ գնահատում, 2) ձևավորող գնահատում, 3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):



3	Դաս 2. Հայտորոշիչ գնահատում, Գործնական աշխատանք պլանավորել ուսուցման և ուսումնառության գործընթաց, ընտրել ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ	2	1	1	Խորացնել և կատարելագործել հայտորոշիչ գնահատման վերաբերյալ գիտելիքները	Մասնակիցները կիմանան՝ հայտորոշիչ գնահատման բաղադրիչները, էությունը և բովանդակությունը: Մասնակիցները կկարողանան՝ ընտրել հայտորոշիչ գնահատման ձևը՝ 1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք. 2) բանավոր հարցում. 3) բաց հարցերով քննարկում. 4) այլ:
4	Դաս 3. Ձևավորող գնահատում Գործնական աշխատանք Խմբային աշխատանքի միջոցով ներկայացնել 1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի տեսակները. 2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապի օրինակներ. 3) սովորողի կողմից ինքնագնահատման և	2	1	1	Խորացնել և կատարելագործել Ձևավորող գնահատման էության և բովանդակության վերաբերյալ գիտելիքները	Մասնակիցները կիմանան՝ ձևավորող գնահատման, որպես ուսումնական գործընթացի բաղադրիչի մասին, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումներն ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման նպատակով Մասնակիցները կկարողանան՝ ձևավորող գնահատման համար կիրառել հետևյալ ձևերը. 1) գրավոր կարճ հարցում (թեստ). 2) բանավոր հարցում.



	ինքնավերլուծության հմտությունների տարատեսակներ:					3) գրավոր աշխատանք. 4) գործնական (լաբորատոր) աշխատանք. 5) տնային աշխատանք. 6) նախագծային աշխատանք. 7) քննարկում, բանավեճ. 8) այլ:
5	Դաս 4.: Ամփոփիչ /միավորային /գնահատում - Ամփոփիչ /միավորային/ գնահատման նպատակը, ձևերը, տեսակները: - Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) սովորողի միավորային գնահատման առանձնահատկությունները: Գործնական աշխատանք Թեմա՝ Ամփոփիչ միավորային գնահատման կիրառումն ուսուցման գործընթացում: Անհատական, զույգերով և խմբերով թեմայի դիտարկումներ սանդղակով,	2	1	1	Խորացնել և կատարելագործել ամփոփիչ գնահատման, նրա ձևերի, տեսակների, ԿԱՊԿՈՒ սովորողների գնահատման առանձնահատկությունների մասին մասնակիցների գիտելիքները, արժևորել դրանք և ձևավորել համապատասխան հմտություններ և վարքագիծ:	Մասնակիցները կիմանան՝ ամփոփիչ միավորային գնահատման ձևերի և տեսակների, ԿԱՊԿՈՒ սովորողների գնահատման մասին: Մասնակիցները կկարողանան՝ Ձեռք բերած գիտելիքները համեմատել, վերլուծել, համադրել և դրանք կիրառել ուսուցման գործընթացում, կազմել գնահատման սանդղակներ, թեստեր, հարցաշարեր և այլն: Գործնականում ամփոփիչ գնահատումն իրականացնել հետևյալ ձևերով՝ 1) թեստ. 2) բանավոր հարցում. 3) գրավոր աշխատանք. 4) գործնական (լաբորատոր) աշխատանք. 5) նախագծային աշխատանք.



քննարկումներ, արդյունքների ներկայացում, իրավիճակների ստեղծում և նկարագրում (առարկայական ժամերին), դերային խաղ, դեպքի ուսումնասիրում և այլն:					6) այլ:
---	--	--	--	--	---------

«21-ՐԴ ԴԱՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (10 ԺԱՄ- 1 ԿՐԵԴԻՏ)

Բաժնի բովանդակությունը

21-րդ դարի հմտություններ

- քննադատական մտածողություն,
- ստեղծարարություն,
- համագործակցություն,
- հաղորդակցում, տեղեկատվական գրագիտություն, մեղիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն,
- ճկունություն, առաջնորդում, նախաձեռնողականություն, արդյունավետություն,
- սոցիալական հմտությունների խթանում.

Բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.

ա. ուսուցիչը կարողանում է տալ ընդարձակ պատասխան պահանջող հարցեր, որոնք ենթադրում են տրամաբանական հիմնավորում, բացատրություն կամ ընդհանրացում կամ ունեն ավելի քան մեկ ճիշտ պատասխան.

բ. ուսուցիչը կարողանում է տալ առաջադրանքներ, որոնք սովորողներից պահանջում են վերլուծել նյութը՝ ի հակադրություն տեղեկատվությունը պարզապես ստանալու կամ մեխանիկորեն հիշելու.

գ. ուսուցիչը կարողանում է տալ առաջադրանքներ, որոնք սովորողներին խրախուսում են հանդես բերել նախաձեռնողականություն, ձևավորել սեփական կարծիք, ձևակերպել նոր գաղափարներ.



դ.ուսուցիչը կարողանում է տալ առաջադրանքներ, որոնք պահանջում են սովորողների համատեղ աշխատանք՝ ձևավորելով համագործակցային միջավայր և զարգացնելով խմբում աշխատելու՝ սովորողների հմտությունները.

ե.ուսուցիչը կարողանում է դասի ընթացքում սովորողներին ընձեռել հնարավորություն՝ ներկայացնելու իրենց աշխատանքը՝ օգտագործելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաները և զարգացնելով հաղորդակցման և ներկայացման հմտությունները.

զ. ուսուցիչը կարողանում է տալ առաջադրանքներ, որոնք սովորողներից պահանջում են փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը տարբեր աղբյուրներից, գնահատել տեղեկատվության աղբյուրի ստույգությունը.

է.ուսուցիչը կարողանում է ուսուցանել սովորողներին ընդարձակ պատասխան պահանջող հարցեր տալ:

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ
		Ընդհ.	Տես.	Գործ.		
1	21-րդ դարի հմտություններ	10	4	6	Կատարելագործել ուսուցչի ուսումնադաստիարակչական գործընթացում 21-րդ դարի հմտությունների կիրառման գործիքակազմը	Մասնակիցները կկարողանան՝ Հետևողականորեն կիրառել 21-րդ դարի հմտությունները:
2	Դաս 1. 21-րդ դարի հմտությունների էությունը և բովանդակությունը -քննադատական մտածողություն զարգացման անհրաժեշտությունը, «Գործնական աշխատանք Թիմային քննարկում՝ ուսումնադաստիարակչական	2	1	1	Խորացնել և կատարելագործել. 21-րդ դարի հմտությունների համակարգի մասին իմացությունը:	Մասնակիցները կիմանան. 21-րդ դարի հմտությունների համակարգը Մասնակիցները կկարողանան. տալ ընդարձակ պատասխան պահանջող հարցեր, որոնք ենթադրում են տրամաբանական հիմնավորում, բացատրություն կամ ընդհանրացում կամ ունեն ավելի քան մեկ ճիշտ պատասխան.



	գործընթացում սովորողների քննադատական մտածողություն զարգացման մանկավարժական պայմանները:					
3	Դաս 2. Ստեղծարարություն - Ստեղծարարությունը որպես ինքնաարտահայտում և արժեք Գործնական աշխատանք – Ստեղծարարության գնահատման և արժևորման ռուբրիկների կազմում	3	1	1	Խորացնել և կատարելագործել. ստեղծարարության դրդապատճառները	Մասնակիցները կիմանան. Ստեղծարարության գնահատման մեխանիզմները և առանձնահատկությունները Մասնակիցները կկարողանան. ուսուցիչը կարողանում է տալ առաջադրանքներ, որոնք սովորողներին խրախուսում են հանդես բերել նախաձեռնողականություն, ձևավորել սեփական կարծիք, ձևակերպել նոր գաղափարներ.
4	Դաս 3. Համագործակցություն Համագործակցային ուսուցման էությունը, բովանդակությունը և առանձնահատկությունները Գործնական աշխատանք Համագործակցային ուսուցման հենքի վրա դասերի պլանավորման առանձնահատկությունները	2	1	1	Խորացնել և կատարելագործել. համագործակցային ուսուցման գործընթացի կատարելագործման առանձնահատկությունները:	Մասնակիցները կիմանան. Համագործակցային ուսուցման վրա հիմնված դասերի պլանավորման և իրականացման առանձնահատկությունները Մասնակիցները կկարողանան. ուսուցիչը կարողանում է տալ առաջադրանքներ, որոնք պահանջում են սովորողների համատեղ աշխատանք՝ ձևավորելով համագործակցային միջավայր և զարգացնելով խմբում աշխատելու՝ սովորողների հմտությունները.
5	Դաս 4. Հաղորդակցում, տեղեկատվական գրագիտություն, մեդիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն:	2	1	1	Խորացնել և կատարելագործել. Հաղորդակցման, տեղեկատվական	Մասնակիցները կիմանան. S2S գործիքների անվտանգ և արդյունավետ կիրառելիության, ռեսուրսների ճիշտ կառավարման առանձնահատկությունները՝



	Գործնական աշխատանք. ՏՀՏ հաղորդակցման հմտությունները, տեղեկատվության հավաստիության գնահատման մեխանիզմները				գրագիտության, մեդիագրագիտություն, ՏՀՏ տարբեր տեխնոլոգիաների կիրառման հմտությունները:	դասալսականալորման գործընթացում: Մասնակիցները կկարողանան. ուսուցիչը կարողանում է դասի ընթացքում սովորողներին ընձեռել հնարավորություն՝ ներկայացնելու իրենց աշխատանքը՝ օգտագործելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաները և զարգացնելով հաղորդակցման և ներկայացման հմտությունները. տալ առաջադրանքներ, որոնք սովորողներից պահանջում են փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը տարբեր աղբյուրներից, գնահատել տեղեկատվության աղբյուրի ստույգությունը.
6	Դաս 5. Ճկունություն, առաջնորդում, նախաձեռնողականություն, արդյունավետություն Գործնական աշխատանք Դասալսականալորման և դասավանդման մեթոդամանկավարժական (պրակտիկ) կարողությունների և հմտությունների խթանման, ռեսուրսների կառավարում մասնագիտական գործունեություն:	1		1	Խորացնել և կատարելագործել. ուսուցիչների նախաձեռնողականությա ն ճկունության և առաջնորդության կարողունակությունները	Մասնակիցները կիմանան. մեթոդամանկավարժական (պրակտիկ) կարողությունների և ռեսուրսների կառավարման մասնագիտական գործունեության ձևերը Մասնակիցները կկարողանան. Տալ առաջադրանքներ, որոնք սովորողներից պահանջում են վերլուծել նյութը՝ ի հակադրություն տեղեկատվությունը պարզապես ստանալու կամ մեխանիկորեն հիշելու
7	Դաս 6. Սոցիալական հմտությունների խթանում Գործնական աշխատանք	1		1	Խորացնել և կատարելագործել. ուսուցիչների	Մասնակիցները կիմանան. 21-րդ դարի հմտությունների խթանման և ռեսուրսների կառավարման մասին



Սոցիալական հմտությունների և ներառականության ապահովում մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները դասի պլանավորման գործընթացում				սոցիալական կարողունակությունների ընդլայնումը	Մասնակիցները կկարողանան. ուսուցիչը կարողանում է ուսուցանել սովորողներին ընդարձակ պատասխան պահանջող հարցեր տալ:
--	--	--	--	--	--

ԲԱԺԻՆ 2

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ»

(20 ԺԱՄ- 3 ԿԵԴԻՏ)

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ
		Ընդհ.	Տես.	Գործ.		
1	Մանկավարժական պրակտիկա	20		20	Խորացնել և կատարելագործել մանկավարժամեթոդական տեսական գիտելիքները, կատարելագործել կարողությունները և հմտությունները՝ ձևավորելով մանկավարժական կոմպետենցիաներ:	Մասնակիցները կկարողանան՝ գործնականում կիրառել մանկավարժական տեսական գիտելիքները, մանկավարժամեթոդական կարողությունները և հմտությունները:
	Դաս 1. Թեմատիկ պլանավորումը, էությունը և բովանդակությունը	1		1		Մասնակիցները կկարողանան՝ իրականացնել դասավանդած առարկայի թեմատիկ պլանավորում այն դասարանների համար, որտեղ իրականացնելու է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ



					ուսումնական տարվա դասաբաշխման:
2	Դաս 2. Դասի պլանավորումը	2		2	Մասնակիցները կկարողանան՝ իրականացնել դասավանդած առարկայի դասերի պլանավորում (գրավոր) այն դասարանների համար, որտեղ իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ համաձայն Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխման և իր կողմից մշակված թեմատիկ պլանի:
3	Դաս 3. Ուսուցման և դաստիարակության գործընթացի կազմակերպումը	2		2	Մասնակիցները կկարողանան՝ իրականացնել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը դասերի և արտադասարանական աշխատանքների ընթացքում՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:
4	Դաս 4. Էլեկտրոնային մատյան, էությունը և գործածության կարգը	2		2	Մասնակիցները կկարողանան՝ կատարել գրանցումներ Էլեկտրոնային մատյանում՝ սահմանված կարգով և ժամկետում:
5	Դաս 5. Համակցված և հեռավար դասերի անցկացումը	2		2	Մասնակիցները կկարողանան՝ ԴԿՏՀ-ում իրականացնել համակցված և հեռավար ուսուցում:
6	Դաս 6. Ուսուցման մեթոդները և տեխնոլոգիաները:	2		2	Մասնակիցները կկարողանան՝ կիրառել դասավանդման ժամանակակից և արդյունավետ մեթոդներ, այդ թվում՝ տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաներ:
7	Դաս 7. Գնահատում.	2		2	Մասնակիցները կկարողանան՝ գործնականում կիրառել հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ(միավորային) գնահատում,



	Հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ:				իրականացնել սովորողների առաջադիմության մշտադիտարկում և գնահատում, առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում և ըստ անհրաժեշտության աջակցության տրամադրում:
8	Դաս 8. ՀՊՉն և դասին ներկայացվող վերջնարդյունքները	2		2	Մասնակիցները կկարողանան՝ գործնականում ապահովել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքները և առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքները, հմտությունները առնվազն պարտադիր նվազագույն պահանջներին համապատասխան՝ նպաստելով սովորողների դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանը:
9	Դաս 8. ԱՌԻՊ-ների կազմումը և վարումը	1		1	Մասնակիցները կկարողանան - կազմել և վարել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՌԻՊ-ներ, - գործնականում մասնակցել ԿԱՄԿՌԻ սովորողների հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան կրթության կազմակերպմանը՝ ըստ կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՌԻՊ-ի:
10	Դաս 10. Մշտադիտարկումն ուսումնական գործընթացում	1		1	Մասնակիցները կկարողանան իրականացնել դիտարկում, սովորողների առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում, մասնակցել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմանը:
11	Դաս 11. Ուսումնադաստիարակչական աշխատանքների	1		1	Մասնակիցները կկարողանան՝ սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական



	կազմակերպումը				կարողությունները:
12	Դաս 12. Մասնագիտական գիտելիքների կատարելագործումը	1		1	Մասնակիցները կկարողանան հետևողականորեն կատարելագործել իրենց առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ:
13	Դաս 13. Սովորողների կարիքի գնահատումը և այլընտրանքային ծրագրերի մշակումը	1		1	Մասնակիցները կկարողանան իրականացնել սովորողի (այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ) կրթության որակի ապահովմանն ուղղված այլընտրանքային ծրագրային, մեթոդամանկավարժական աշխատանքներ՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարողությունները, առանձնահատկություններն ու հետաքրքրությունները:

ԲԱԺԻՆ 3

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ» (5 ԺԱՄ- 1 ԿՐԵԴԻՏ)

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմա 1. Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցների իրավունքների ու պարտականությունների ներկայացում

Թեմա 2. Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման սկզբունքները, հիմնական բաժինների ընդհանրական բովանդակության ներկայացում

Թեմա 3. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման, կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները



Թեմա 4. Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնային պարտականությունները

ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուսուցիչը կարողանում է պաշտպանել իր և սովորողների իրավունքները, ուսուցիչը կարողանում է ներկայացնել հանրակրթության պետական չափորոշիչի կառուցվածքային գլխավոր բաղադրիչները և դրանց միջև առկա փոխադարձ կապերը, ուսուցիչը կարողանում է ներկայացնել ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները, ուսուցիչը կարողանում է ներկայացնել ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունները:

Գործնական աշխատանքի նկարագիրը

Վերապատրաստվող ուսուցիչների մոտ ձևավորել վերոնշյալ կարողությունները խմբային աշխատանքի միջոցով (օրինակ՝ «Խճանկարե, «Ապագայի անիվե, «Գաղափարների քարտեզագրում և այլ մեթոդներով):

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Հ/Հ	ԹԵՄԱՆ	ԺԱՄԱՔԱՆԱԿԸ			ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ	ՄՏՈՒԳՄԱՆ ՁևԸ
		Ընդհ.	Տես.	Գործն.			
1	Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցների իրավունքների ու պարտականությունների ներկայացում -ուսուցիչը և հաստատության տնօրենը, -ուսուցիչը և մանկավարժական մյուս	1	1		Ծանոթացնել ՈԻՍՈՒԳՅԻ, հաստատության տնօրենի մանկավարժական մյուս աշխատողների, սովորողի ծնողի, հաստատության խորհրդակցական մարմինների գործառնություններին,	Մասնակիցները կիմանան -Իրենց իրավունքները -Իրենց պարտականությունները -Սովորողների իրավունքները -Կրթական գործընթացի մյուս մասնակիցների	



	աշխատողները, - ուսուցիչը և սովորողը, - ուսուցիչը և սովորողի ծնողը, - հաստատության խորհրդակցական մարմինները, - կանանց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրները: Նորմատիվ ակտեր. ՀՀ Սահմանադրություն, “Կրթության մասին” “Հանրակրթության մասին” “ՀՀ Աշխատանքային օրենսգիրք” “Հանրակրթության պետական չափորոշիչ” “ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն” այլ իրավական ակտեր				իրավունքներին և պարտականություններին	գործառույթները Մասնակիցները կկարողանան պաշտպանել -Իրենց իրավունքները -Սովորողների իրավունքները -Պաշտպանել կրթական գործընթացի մյուս մասնակիցների իրավունքները	
2	Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման սկզբունքները, հիմնական բաժինների ընդհանրական բովանդակության ներկայացում -Հանրակրթական պետական չափորոշիչի բովանդակությունը, պահանջներն ու սկզբունքները -Միջնակարգ, տարրական և հիմնական ծրագրերի շրջանավարտին ներկայացվող պահանջները -Միջնակարգ, տարրական և հիմնական ծրագրերի շրջանավարտի	1	1		• Ծանոթացնել -Հանրակրթության պետական չափորոշիչի կառուցվածքին, բովանդակությանը, բաժիններին, պահանջներին, գնահատման կարգին, հենքային ուսումնական պլանին, ուսումնական բնագավառներին	Մասնակիցները կիմանան -Հանրակրթական հիմնական ծրագրերի (տարրական, հիմնական և միջնակարգ) չափորոշչային պահանջներն ու դրույթները -Ըստ կրթական ծրագրերի շրջանավարտին ներկայացվող պահանջներն ու ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները -Չափորոշչով սահմանված	



	ուսումնառության վերջնարդյունքները ներկայացվող պահանջները -Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլան -Հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչ Նորմատիվ ակտեր. ՀՀ Սահմանադրություն, «Հանրակրթության մասին» “Հանրակրթության պետական չափորոշիչ”					հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության բաղադրիչների կիրառման կարգը Մասնակիցները կկարողանան -Կիրառել չափորոշչով սահմանված պահանջները -Իրականացնել ուսումնառության արդյունքների գնահատումը -Իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը	
3	Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման, կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման հիմնական գործընթացները -Նախաատեստացիոն վերապատրաստման սկզբունքներն ու պահանջները -Ուսուցչի ատեստավորման կարգը -Կամավոր ատեստավորման պահանջները -Տարակարգի շնորհման գործընթացը և	2	1	1	• Ծանոթացնել Նախաատեստացիոն վերապատրաստման կարգին և սկզբունքներին -Կամավոր ատեստավորման և տարակարգի շնորհման գործընթացին	Մասնակիցները կիմանան -Նախաատեստացիոն վերապատրաստման ներկայացվող պահանջները -Ուսուցչի ատեստավորման սկզբունքը և պահանջները -Կամավոր ատեստավորման պահանջները -Հավելավճար ստանալու կարգը Մասնակիցները կկարողանան	Գործնական աշխատանք՝ Քննարկել ատեստավորման և կամավոր ատեստավորման, տարակարգի շնորհման խնդիրները



	ուսուցչի հավելվածար ստանալու սկզբունքը Նորմատիվ ակտեր. ՀՀ Սահմանադրություն «Հանրակրթության մասին» “Աշխատանքային օրենսգիրք” “Հանրակրթության պետական չափորոշիչ” “ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունն ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն” այլ իրավական ակտեր					-Ատեստավորվել, կամավորության սկզբունքով մասնակցել կամավորատեստավորման գործընթացին և ստանալ տարակարգ	
4	Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնային պարտականությունները -Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիրը -Ուսուցչի աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը, նրա աշխատանքային իրավունքների պաշտպանությունը Նորմատիվ ակտեր. ՀՀ Սահմանադրություն, «Հանրակրթության մասին» “Աշխատանքային օրենսգիրք”	1	1		• Ծանոթացնել - Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին -Աշխատանքի ընդունման կարգին, իրավունքներին, աշխատանքային փոխհարաբերություններին	Մասնակիցները կիմանան -Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագիրը, գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի ընդունման և ազատման սկզբունքները Մասնակիցները կկարողանան -Պաշտպանել իրենց իրավունքները, հստակեցնել իրենց աշխատանքային գործառույթները և կարգավորել աշխատանքային հարաբերությունները	



«Երեխայի իրավունքների մասին» “ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունն ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրու- թյուն” “Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգ” այլ իրավական ակտեր						
---	--	--	--	--	--	--

ԲԱԺԻՆ 4

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ» (5 ԺԱՄ 3 ԿՐԵԴԻՏ)

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հետազոտական աշխատանքը շարադրվում է տպագիր, որի ծավալը կարող է տատանվել 15-20 էջի սահմաններում, տառատեսակը՝ Unicode, տառաչափը՝ 12, տողերի միջակայքը՝ 1,5:

Այն ունի հետևյալ կառուցվածքը.

Ա) Տիտղոսաթերթ

բ) Բովանդակություն



զ) Ներածություն, որում պետք է հիմնավորվի ընտրված թեմայի կարևորությունը, հստակ ձևակերպվի աշխատանքի նպատակը: Տեքստը շարադրելիս անհրաժեշտ է հղում կատարել այն աղբյուրներին, որոնցից փոխառնվել են օգտագործած նյութերը:

դ) Պարագրաֆներ/մասեր

ե) Եզրակացություններ, առաջարկություններ

զ) Օգտագործված գրականության ցանկ

Հետազոտական աշխատանքի առաջարկվող թեմաներ

1) Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան,

2) Ուսուցչի կողմից հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման ապահովումը սովորողների կողմից,

3) Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը,

4) Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում,

5) Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում,

6) Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը առարկայի դասավանդման ընթացքում,

7) Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում,



8) Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում,

9) Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,

10) Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդափափորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:

Ուսուցչի կողմից ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարման անհրաժեշտությունը:

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿԸ/ՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ	ՍՏՈՒ Գ ՄԱՆ ՁԵՎԸ
	Հետազոտական աշխատանք	5	2	3	Ներկայացնել մասնագիտական ոլորտին առնչվող հիմնահարց և հիմնավորել լուծման եղանակները	Մասնակիցները կիմանան՝ - Հետազոտական աշխատանքի ուղղությունները, թեմայի ընտրության մեխանիզմները Մասնակիցները կկարողանան՝ - Օգտվել համապատասխան գրական և տեղեկատվական աղբյուրներից, պատրաստել իրենց աշխատանք և ներկայացնել պաշտպանության	
1.	Հետազոտական աշխատանքի կառուցվածքը թեմայի ընտրությունը, արդիականությունը, տեսական և գործնական					Մասնակիցները կիմանան՝ - Արդիական թեմայի ընտրության օրինաչափությունները, Մասնակիցները կկարողանան՝ - Աշխատանքի կատարման ընթացքում ճիշտ ձևավորել	



	նշանակությունը, • նպատակի և խնդիրների ձևավորումը, մեթոդների և գրական աղբյուրների ընտրությունը					հետազոտության նպատակը, խնդիրները և արդյունավետ ընտրել մեթոդները և կիրառվող միջոցները	
2.	Հետազոտական աշխատանքի կառուցվածքը, ձևավորումը և բովանդակության մշակումը					Մասնակիցները կիմանան՝ հետազոտական աշխատանքի ձևավորման և բովանդակության մշակման սկզբունքները	
3.	Աշխատանքի նախապատ- րաստումը պաշտպանության և պաշտ- պանության ընթացակարգը					Մասնակիցները կկարողանան՝ ներկայացնել իրենց աշխատանքը	
4.	Հետազոտական աշխատանք կատարող ուսուցչի գիտական էթիկայի մասին					Մասնակիցները կկարողանան՝ Հետազոտական աշխատանքի պատրաստման ընթացքում պահպանել գիտական էթիկան	

ԲԱԺԻՆ 5.

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ (20 ԺԱՄ- 1 ԿՐԵԴԻՏ)

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Վերապատրաստվողներն ունեն ՏՀՏ անհրաժեշտ նախնական գիտելիքներ)



Թեմա 1. Ուսուցման կառավարման համակարգերի (LMS) ֆունկցիոնալ հնարավորությունները և այդ միջավայրի կիրառումը էլեկտրոնային դասընթացի ստեղծման, կազմակերպման և կառավարման գործընթացում - 5 ժամ

Թեմա 2. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային մատյան - 5 ժամ

Թեմա 3. Թվային առաջադրանքների ստեղծումը ուսուցման կառավարման համակարգերի թվային գործիքների միջոցով - 4 ժամ

Թեմա 4. Առցանց գրատախտակի գործիքակազմը - 2 ժամ

Թեմա 5. Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները - 3 ժամ

Թեմա 6. «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում» Բաժնի ամփոփում - 1 ժամ

Բաժնի ուսումնասիրության վերջնարդյունքները

Ուսուցիչը կկարողանա՝

ա) ուսուցման կառավարման համակարգում ստեղծել դասարան, ընդգրկել աշակերտներ, տալ հանձնարարություններ, կատարել գրառումներ, ներբեռնել ֆայլեր, համօգտագործել ֆայլերը, ստեղծել թվային առաջադրանքներ և գնահատման ռուբրիկներ, կազմակերպել համաժամանակյա հանդիպումներ, օգտվել օրացույցից,

բ) լրացնել էլեկտրոնային մատյանը,

գ) կիրառել անցանց գրատախտակի գործիքակազմը, կիսել և համօգտագործել այն,

դ) օգտվել ԿԳՄՄՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում, վերբեռնել ֆայլեր, օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, շնորհանդեսներ, տեսանյութեր, խմբագրել, կիսել և համօգտագործել դրանք:



**«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ**

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ
		Ընդհ.	Տես.	Գործն.		
1.	«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում»	20	7	13	• ուսուցիչների մասնագիտական աճն ու զարգացումը տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում նպատակային և ակտիվորեն կիրառելու ուղղությամբ, • ուսուցիչների փորձի փոխանակումը, • ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացում ուսուցիչների՝ ՏՀՏ-ների կիրառման հմտությունների ձևավորման միջոցով, • ուսուցիչներին ծանոթացնել ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին, մեթոդներին և ձևերին, կառավարման տարբեր համակարգերին և դրանց գործառնական հնարավորություններին, կրթական կայքերին,	Մասնակիցները կիմանան՝ • ուսուցման կառավարման համակարգերը և դրանց ընձեռած հնարավորությունները, • էլեկտրոնային դասընթացների ստեղծումը, ուսուցման գործընթացի կազմակերպումն ու կառավարումը ուսուցման կառավարման համակարգերում, • ուսումնական նյութերի և այլ մոդուլների տեղակայումը դասընթացում, • թվային առաջադրանքների ստեղծման հնարավորություններն ու ձևերը տարբեր միջավայրերում, • էլեկտրոնային գրատախտակի տեսակները, աշխատանքային սկզբունքները, անհրաժեշտ պայմանները, կրթական կայքերը Մասնակիցները կտիրապետեն՝ • ուսուցման կառավարման համակարգերում դասընթացների ստեղծման, ուսուցման կազմակերպման և կառավարման գործընթացների գործիքակազմի կիրառմանը, • առաջադրանքների ստեղծման



				• գործնական առաջադրանքների միջոցով նպաստել ուսուցիչների գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը, • ուսուցիչների մոտ ձևավորել ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմամբ տարբեր խնդիրներ լուծելու հմտություններ:	մեթոդաբանությանը, • ուսումնական գործընթացում էլեկտրոնային գրատախտակի կիրառման եղանակներին և հիմնական գործիքակազմին, ուսուցման նորագույն մեթոդներին ու հնարներին, • Կրթական կայքերի առանձնահատկություններին, Մասնակիցները կկարողանան՝ • տարբեր միջավայրերում ստեղծել և տեղադրել ուսումնական նյութեր, մոդուլներ, առաջադրանքներ, ստեղծել դասարաններ կամ խմբեր, դրանցում ներգրավել սովորողներին և իրականացնել դասեր, քննարկումներ և այլն, • թվային գործիքների միջոցով ստեղծել թվային առաջադրանքներ և դրանք կիրառել ուսուցման գործընթացում: • էլեկտրոնային գրատախտակը արդյունավետ կիրառել ուսուցման գործընթացում • օգտվել նշված կայքերի ընձեռած հնարավորություններից, • քննարկել նշված թեմաների շրջանակում ներկայացված առաջադրանքներ՝ դուրս բերելով ավելի արդյունավետ լուծումներ, • վերլուծել ուսուցման կառավարման էլեկտրոնային տարբեր համակարգերի առավելություններն ու թերությունները՝ դրանք ուսուցման գործընթացում նպատակային և արդյունավետ կիրառելու համար:
--	--	--	--	---	--



2.1	- Ուսուցման կառավարման համակարգերի (LMS) ֆունկցիոնալ հնարավորությունները և այդ միջավայրի կիրառումը Էլեկտրոնային դասընթացի ստեղծման, կազմակերպման և կառավարման գործընթացում (MS teams, Google classroom, Moodle, LMS): - Էլեկտրոնային դասընթացների ստեղծումը, ուսուցման գործընթացի կազմակերպումն ու կառավարումը ուսուցման կառավարման համակարգերում (MS teams, Google classroom, Moodle, LMS) - Ուսումնական	5	2	3	• Ծանոթացնել ուսուցման կառավարման համակարգերին և դրանց առանձնահատկություններին, • ուսումնասիրել MS teams-ի ֆունկցիոնալ հնարավորությունները և գործիքակազմը • ուսումնասիրել Google classroom -ի ֆունկցիոնալ հնարավորությունները, գործիքակազմը • ծանոթացնել հեռավար ուսուցման Moodle, LMS համակարգերին, դրանց ընձեռած հնարավորություններին,	Մասնակիցները կիմանան՝ ուսուցման կառավարման համակարգերը և դրանց ընձեռած հնարավորությունները, Մասնակիցները կտիրապետեն՝ ուսուցման կառավարման համակարգերում դասընթացների ստեղծման, ուսուցման կազմակերպման և կառավարման գործընթացների գործիքակազմի կիրառմանը, Մասնակիցները կկարողանան՝ նշված միջավայրերում ստեղծել և տեղադրել ուսումնական նյութեր, մոդուլներ, առաջադրանքներ, ստեղծել դասարաններ կամ խմբեր, դրանցում ներգրավել սովորողներին և իրականացնել դասեր, քննարկումներ և այլն, կառավարել փոքր խմբերի աշխատանքները
-----	---	---	---	---	---	--



	նյութերի և այլ մոդուլների տեղակայումը դասընթացում: Գործնական աշխատանք MS teams, Google classroom, Moodle, միջավայրերում ստեղծել և տեղադրել ուսումնական նյութեր, մոդուլներ, առաջադրանքներ, ստեղծել դասարաններ կամ խմբեր, դրանցում ներգրավել սովորողներին:					
2.2	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային մատյան Գործնական աշխատանք Ուսումնասիրել կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, մուտք	5	2	3	Ծանոթացնել կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և էլեկտրոնային մատյանի հետ:	Մասնակիցները կիմանան՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և էլեկտրոնային մատյանի հետ աշխատանքի սկզբունքները Մասնակիցները կտիրապետեն՝ էլեկտրոնային մատյանում գնահատման ձևերին, սկզբունքներին, գործիքակազմին, Մասնակիցները կկարողանան՝ Կատարել գնահատում էլեկտրոնային մատյանում:



	գործել էլեկտրոնային մատյան, ծանոթանալ գործիքակազմին, կատարել գնահատում:					
2.3	Թվային առաջադրանքների ստեղծումը ուսուցման կառավարման համակարգերի թվային գործիքների միջոցով (LearningApps, Google Forms, Socrative, Trello, Mentimeter) Գործնական աշխատանք Տարբեր (LearningApps, GoogleForms, Socrative) միջավայրերում ստեղծել փոքրածավալ առաջադրանքներ:	4	1	3	Ծանոթացնել տարբեր միջավայրերում թվային գործիքների միջոցով թվային առաջադրանքների ստեղծման մեթոդաբանությանն ու ձևերին	Մասնակիցները կիմանան՝ թվային առաջադրանքների ստեղծման հնարավորություններն ու ձևերը տարբեր միջավայրերում, Մասնակիցները կտիրապետեն՝ առաջադրանքների ստեղծման մեթոդաբանությանը, Մասնակիցները կկարողանան՝ թվային գործիքների միջոցով ստեղծել թվային առաջադրանքներ և դրանք կիրառել ուսուցման գործընթացում:
2.4	Առցանց գրատախտակի գործիքակազմ: Գործնական աշխատանք կիրառել առցանց գրատախտակի գործիքակազմը, կիսել և համոզագործել այն	2		2	Ծանոթացնել առցանց գրատախտակի, նրա գործիքակազմի, կիրառման եղանակների հետ:	Մասնակիցները կիմանան՝ Առցանց գրատախտակի աշխատանքային սկզբունքները, գործիքակազմը, կիրառման եղանակները Մասնակիցները կտիրապետեն՝ ուսումնական գործընթացում առցանց գրատախտակի կիրառման եղանակներին և հիմնական գործիքակազմին,



	Առցանց գրատախտակի գործիքակազմի կիրառմամբ ստեղծել առաջադրանքներ և նշել դրա առանձնահատկությունները և սահմանափակումները կոնկրետ առարկայի կամ թեմայի շրջանակում (յուրաքանչյուր մասնակից իր կողմից դասավանդվող առարկայի շրջանակում), կիսել և համօգտագործել գրատախտակը					Մասնակիցները կկարողանան՝ առցանց գրատախտակը արդյունավետ կիրառել ուսուցման գործընթացում:
2.5	Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները (www.armedu.am , www.imdproc.am , https://escs.am/am https://learning.armedu.a	3	2	1	Ծանոթացնել ՀՀ-ում պաշտոնական կրթական կայքերին և դրանց ընձեռած հնարավորություններին	Մասնակիցները կիմանան՝ կրթական կայքերը և կկարողանան օգտվել նշված կայքերի ընձեռած հնարավորություններից: Մասնակիցները կկարողանան՝ օգտվել ԿԳՄՄՆ կայքից, ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում, օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից:



	https://hy.khanacademy.org, https://www.ktak.am/ https://kznakhimnadram.blogspot.com) Գործնական աշխատանք Ցույց տալ հայկական կրթական կայքերի գործառնական նշանակությունը կոնկրետ օրինակների միջոցով (Օրինակ, ներկայացնել դասի պլան, որտեղ կիրառվում են հայկական կրթական կայքերի ռեսուրսները կամ դասընթացը, մոդուլը ստեղծված է հայկական կրթական միջավայրերում (www.imdproc.am, https://learning.armedu.am/ և այլ))					
2.6	«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը	1		1	Գնահատել մասնակիցների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները թեստային աշխատանքի միջոցով:	Մասնակիցները ձեռք կբերեն համապատասխան կրեդիտ:



ուսումնական գործընթացումե բաժնի ամփոփում և ամփոփիչ գնահատում				Կազմել հաշվետվություն թեստային աշխատանքի արդյունքների վերաբերյալ:	
---	--	--	--	---	--

ԲԱԺՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Վերապատրաստվողները չունեն S2S անհրաժեշտ նախնական գիտելիքներ)

Թեմա 1. Էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում - 5 ժամ

Թեմա 2. Ամպային տեխնոլոգիաների գործիքակազմը - 5 ժամ

Թեմա 3. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային մատյան - 5 ժամ

Թեմա 4. Կրթական կայքերը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները - 4 ժամ

Թեմա 5. «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացումե բաժնի ամփոփում - 1 ժամ

Բաժնի ուսումնաստության վերջնարդյունքները

Ուսուցիչը կկարողանա՝

ա) լրացնել էլեկտրոնային մատյանը,

բ) ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր, պատասխանել նամակին, վերահասցեավորել նամակը, գտնել նամակը փոստի մեջ, գտնել ուղարկած նամակը,

գ) ամպային տարածքում ստեղծել թղթապանակներ, փաստաթղթեր, էլեկտրոնային աղյուսակներ, շնորհանդեսներ, կիսել և համօգտագործել դրանք, կարգավորել համօգտագործման հնարավորությունները,

դ) օգտվել «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքից, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ՊՈԱԿ-ի () պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում, վերբեռնել ֆայլեր,

ե) օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, շնորհանդեսներ, տեսանյութեր, խմբագրել, կիսվել և համօգտագործել դրանք:



Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ
		Ընդհ.	Տես.	Գործն.		
2.	«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում»	20	7	13	• ուսուցիչների մասնագիտական աճն ու զարգացումը տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում նպատակային և ակտիվորեն կիրառելու ուղղությամբ, • ուսուցիչների փորձի փոխանակումը, • ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացում ուսուցիչների՝ ՏՀՏ-ների կիրառման հմտությունների ձևավորման միջոցով, • ուսուցիչներին ծանոթացնել ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին, մեթոդներին և ձևերին, կառավարման տարբեր համակարգերին և դրանց գործառնական հնարավորություններին, կրթական	Մասնակիցները կիմանան՝ • էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում, • ամպային տեխնոլոգիաների կիրառում • էլեկտրոնային մատյանի լրացում • կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները • ուսումնական նյութերի և այլ մոդուլների տեղակայումը դասընթացում՝ Մասնակիցները կսիրապետեն՝ • էլեկտրոնային փոստի ստեղծմանը և վարմանը, • ամպային տեխնոլոգիաների կիրառմանը, • Կրթական կայքերի առանձնահատկություններին, • էլեկտրոնային մատյանի լրացմանը Մասնակիցները կկարողանան՝ • լրացնել էլեկտրոնային մատյանը • ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր, պատասխանել նամակին, վերահասցեավորել նամակը, գտնել նամակը փոսի մեջ, գտնել ուղարկած նամակը, • ամպային տարածքում ստեղծել թղթապանակներ, փաստաթղթեր,



					կայքերին, • գործնական առաջադրանքների միջոցով նպաստել ուսուցիչների գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը, • ուսուցիչների մոտ ձևավորել ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմամբ տարբեր խնդիրներ լուծելու հմտություններ:	Էլեկտրոնային աղյուսակներ, շնորհանդեսներ, կիսել և համոզագործել դրանք, կարգավորել համոզագործման հնարավորությունները, • օգտվել նշված կայքերի ընձեռած հնարավորություններից, • օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, շնորհանդեսներ, տեսանյութեր, խմբագրել, կիսվել և համոզագործել դրանք
2.1	Էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում Գործնական աշխատանք Ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր, պատասխանել նամակին, վերահասցեավորել նամակը, գտնել նամակը փոստի մեջ, գտնել ուղարկած նամակը,	5	1	4	• Ծանոթացնել էլեկտրոնային փոստերի տեսակների հետ • Ծանոթացնել էլեկտրոնային փոստի ստեղծմանը • ուսումնասիրել էլեկտրոնային փոստերի ֆունկցիոնալ հնարավորությունները, գործիքակազմը • ուսումնասիրել էլեկտրոնային փոստի մեջ նամակների որոնումը, վերահասցեավորումը,	Մասնակիցները կիմանան տարբեր տեսակի էլեկտրոնային փոստերի ստեղծումը և վարումը, Մասնակիցները կտիրապետեն էլեկտրոնային փոստերի ֆունկցիոնալ հնարավորություններին և գործիքակազմին Մասնակիցները կկարողանան՝ ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր, պատասխանել նամակին, վերահասցեավորել նամակը, գտնել նամակը փոստի մեջ, գտնել ուղարկած նամակը:



2.2	Ամպային տեխնոլոգիաների գործիքակազմը Գործնական աշխատանք Ամպային տարածքում ստեղծել թղթապանակներ, փաստաթղթեր, էլեկտրոնային աղյուսակներ, շնորհանդեսներ, կիսել և համոզագործել դրանք, կարգավորել համոզագործման հնարավորությունները	5	2	3	- Ծանոթացնել ամպային տարածքում թղթապանակների, փաստաթղթերի, էլեկտրոնային աղյուսակների, շնորհանդեսների ստեղծմանը - Ծանոթացնել ֆայլերի համոզագործման հնարավորությունների	Մասնակիցները կիմանան՝ ամպային տարածքում աշխատանքի հնարավորությունները Մասնակիցները կտիրապետեն՝ ամպային տարածքում աշխատանքի սկզբունքներին Մասնակիցները կկարողանան՝ ամպային տարածքում ստեղծել թղթապանակներ, փաստաթղթեր և կարգավորել համոզագործման հնարավորությունները:
2.3	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային մատյան Գործնական աշխատանք Ուսումնասիրել կրթության կառավարման տեղեկատվական	5	2	3	Ծանոթացնել կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և էլեկտրոնային մատյանի հետ:	Մասնակիցները կիմանան՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և էլեկտրոնային մատյանի հետ աշխատանքի սկզբունքները Մասնակիցները կտիրապետեն՝ էլեկտրոնային մատյանում գնահատման ձևերին, սկզբունքներին, գործիքակազմին, Մասնակիցները կկարողանան՝ Կատարել գնահատում էլեկտրոնային մատյանում:



	համակարգը, մուտք գործել էլեկտրոնային մատյան, ծանոթանալ գործիքակազմին, կատարել գնահատում:					
2.4	Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները (www.armedu.am , www.imdproc.am , https://escs.am/am , https://learning.armedu.am/ , https://hy.khanacademy.org , https://www.ktak.am/ , https://kznakhimnadram.blogspot.com) Գործնական աշխատանք Առցանց կրթական կայքերի գործիքներ միջոցով կազմակերպել	4	2	2	Ծանոթացնել ՀՀ-ում պաշտոնական կրթական կայքերին և դրանց ընձեռած հնարավորություններին	Մասնակիցները կիմանան՝ կրթական կայքերը և կկարողանան օգտվել նշված կայքերի ընձեռած հնարավորություններից: Մասնակիցները կկարողանան՝ օգտվել «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքից, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը ՊՈԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում, վերբեռնել ֆայլեր:



	ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, շնորհադեսներ, տեսանյութեր, խմբագրել, կիսվել և համօգտագործել դրանք:					
2.5	«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում և բաժնի ամփոփում և ամփոփիչ գնահատում	1		1	- Գնահատել մասնակիցների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները թեստային աշխատանքի միջոցով: - Կազմել հաշվետվություն թեստային աշխատանքի արդյունքների վերաբերյալ:	Մասնակիցները ձեռք կբերեն համապատասխան կրեդիտ:

Բաժնի բովանդակությունը

(Վերապատրաստվողները չունեն S2S բավարար նախնական գիտելիքներ)



Թեմա 1. Տեքստային խմբագրիչի գործիքակազմը - 4 ժամ

Թեմա 2. Շնորհադեսների ստեղծում և խմբագրում - 4 ժամ

Թեմա 3. Էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում - 4 ժամ

Թեմա 4. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային մատյան - 5 ժամ

Թեմա 5. Կրթական կայքերը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները - 2 ժամ

Թեմա 6. «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում և բաժնի ամփոփում -1 ժամ

Բաժնի ուսումնառության վերջնարդյունքները

Ուսուցիչը կկարողանա՝

ա) լրացնել էլեկտրոնային մատյանը,

բ) տեքստային խմբագրիչում հավաքել և ձևավորել տեքստեր, ստեղծել աղյուսակներ, փնտրել և փոխարինել տեքստը, ստեղծել ավտոմատ ցանկեր,

գ) ստեղծել շնորհանդեսներ, ձևավորել դրանք, տեղադրել նկարներ և տեքստեր, ստեղծել հիպերհղումներ, անիմացիաներ, ստեղծել ցանակացած ուղղությամբ անիմացիոն շարժում, տեղադրել գործողության (Action Buttons) կոճակներ,

դ) ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր,

ե) օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը,

զ) օգտվել պաշարների շտեմարանից և ԿԶՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ ինֆորմացիան:

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ	ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔԸ
-----	------	-----------	---------------



		Ընդհ. .	Տես.	Գործն.		
1.	«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում»	20	7	13	• ուսուցիչների մասնագիտական աճն ու զարգացումը տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում նպատակային և ակտիվորեն կիրառելու ուղղությամբ, • ուսուցիչների փորձի փոխանակումը, • ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացում ուսուցիչների՝ ՏՀՏ-ների կիրառման հմտությունների ձևավորման միջոցով, • ուսուցիչներին ծանոթացնել ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին, մեթոդներին և ձևերին, կառավարման տարբեր համակարգերին և դրանց գործառնական հնարավորություններին, կրթական կայքերին, • գործնական առաջադրանքների միջոցով նպաստել ուսուցիչների գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանը, • ուսուցիչների մոտ ձևավորել	Մասնակիցները կիմանան՝ • տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում և խմբագրում, ավտոմատ ցանկերի ստեղծում • աղյուսակների և շնորհանդեսների ստեղծում, • էլեկտրոնային մատյանի լրացում • կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները • էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում • ուսումնական նյութերի և այլ մոդուլների տեղակայումը դասընթացում” Մասնակիցները կտիրապետեն՝ • էլեկտրոնային փոստի ստեղծմանը և վարմանը, • տեքստային խմբագրիչում աշխատանքի սկզբունքներին, • շնորհանդեսների ճիշտ ստեղծմանն ու ձևավորմանը • Կրթական կայքերի առանձնահատկություններին, • էլեկտրոնային մատյանի լրացմանը Մասնակիցները կկարողանան՝ • լրացնել էլեկտրոնային մատյանը



					ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմամբ տարբեր խնդիրներ լուծելու հմտություններ:	• ստեղծել էլեկտրոնային փոստ, վերահասցեավորել նամակը • տեքստային խմբագրիչում հավաքել և ձևավորել տեքստեր, ստեղծել աղյուսակներ, շնորհանդեսներ, հիպերհղումներ, անիմացիաներ, էլեկտրոնային աղյուսակներ • օգտվել կրթական կայքերի ընձեռած հնարավորություններից, • օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ, կիսվել և համօգտագործել դրանք
2.1	Տեքստային խմբագրիչի Գործիքակազմը Գործնական աշխատանք Տեքստային խմբագրիչում տեքստի հավաքում և ձևավորում, աղյուսակների ստեղծում, տեքստի փնտրում և փոխարինում, ստեղծում ավտոմատ ցանկերի ստեղծում	4	2	2	• ծանոթացնել տեքստային խմբագրիչի գործիքակազմին և աշխատանքի սկզբունքներին	Մասնակիցները կիմանան՝ տեքստային խմբագրիչի աշխատանքի սկզբունքները և գործիքակազմը Մասնակիցները կտիրապետեն՝ տեքստային խմբագրիչի աշխատանքի սկզբունքներին և գործիքակազմին Մասնակիցները կկարողանան՝ հավաքել և ձևավորել տեքստեր, ստեղծել աղյուսակներ, փնտրել և փոխարինել տեքստեր, ստեղծել ավտոմատ ցանկեր
2.2	Շնորհանդեսների ստեղծում և խմբագրում Գործնական աշխատանք	4	1	3	• Ծանոթացնել շնորհանդեսների ստեղծման, ձևավորման, անիմացիաների ստեղծման	Մասնակիցները կիմանան՝ շնորհանդեսների ստեղծման և ձևավորման աշխատանքի սկզբունքները և



	Շնորհանդեսների ստեղծում, ձևավորում, նկարների և տեքստեր տեղադրում, հիպերհղումների և անիմացիաների ստեղծում, ցանակացած ուղղությամբ անիմացիոն շարժումների ստեղծում, գործողության (Action Buttons) կոճակների տեղադրում				աշխատանքի սկզբունքներին	գործիքակազմը Մասնակիցները կտիրապետեն՝ շնորհանդեսների ստեղծման և ձևավորման հնարավորություններին Մասնակիցները կկարողանան՝ ստեղծել և ձևավորել շնորհանդեսներ, տեղադրել նկարներ և տեքստեր, ստեղծել հիպերհղումներ, անիմացիաներ, ստեղծել ցանակացած ուղղությամբ անիմացիոն շարժում, տեղադրել գործողության (Action Buttons) կոճակներ
2.3	Էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում Գործնական աշխատանք Ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր, պատասխանել նամակին, վերահասցեավորել նամակը, գտնել նամակը փոստի մեջ, գտնել ուղարկած նամակը,	4	1	3	• Ծանոթացնել էլեկտրոնային փոստերի տեսակների հետ • Ծանոթացնել էլեկտրոնային փոստի ստեղծմանը • ուսումնասիրել էլեկտրոնային փոստերի ֆունկցիոնալ հնարավորությունները, գործիքակազմը • ուսումնասիրել էլեկտրոնային փոստի մեջ նամակների որոնումը, վերահասցեավորումը,	Մասնակիցները կիմանան տարբեր տեսակի էլեկտրոնային փոստերի ստեղծումը և վարումը, Մասնակիցները կտիրապետեն՝ էլեկտրոնային փոստերի ֆունկցիոնալ հնարավորություններին և գործիքակազմին Մասնակիցները կկարողանան՝ ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր, պատասխանել նամակին, վերահասցեավորել նամակը, գտնել նամակը փոստի մեջ, գտնել ուղարկած նամակը,



2.4	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային մատյան Գործնական աշխատանք Ուսումնասիրել կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, մուտք գործել էլեկտրոնային մատյան, ծանոթանալ գործիքակազմին, կատարել գնահատում:	5	2	3	Ծանոթացնել կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և էլեկտրոնային մատյանի հետ:	Մասնակիցները կիմանան՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի և էլեկտրոնային մատյանի հետ աշխատանքի սկզբունքները Մասնակիցները կտիրապետեն՝ էլեկտրոնային մատյանում գնահատման ձևերին, սկզբունքներին, գործիքակազմին, Մասնակիցները կկարողանան՝ Կատարել գնահատում էլեկտրոնային մատյանում:
2.4	Կրթական կայքերի էությունը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները Գործնական աշխատանք Առցանց կրթական կայքերի գործիքներ միջոցով կազմակերպել ուսումնական գործընթացը, ստեղծել թվային առցանց առաջադրանքներ,	2	1	1	Ծանոթացնել ՀՀ-ում պաշտոնական կրթական կայքերին և դրանց ընձեռած հնարավորություններին	Մասնակիցները կիմանան՝ կրթական կայքերը և կկարողանան օգտվել նշված կայքերի ընձեռած հնարավորություններից: Մասնակիցները կկարողանան՝ օգտվել «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքից, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, գրանցվել հայկական կրթական ֆորումում, վերբեռնել ֆայլեր



	շնորհադեսներ, տեսանյութեր, խմբագրել, կիսվել և համոզագործել դրանք:					
2.5	«Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացումն բաժնի ամփոփում և ամփոփիչ գնահատում	1		1	- Գնահատել մասնակիցների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները թեստային աշխատանքի միջոցով: - Կազմել հաշվետվություն թեստային աշխատանքի արդյունքների վերաբերյալ:	Մասնակիցները ձեռք կբերեն համապատասխան կրեդիտ:



ԲԱԺԻՆ 6

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

(10 կրեդիտ - 40 ժամ՝ լսարանային, 260 ժամ՝ ինքնուրույն և արտալսարանային)

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(40 ժամ)

Թեմա 1-2

Ներածություն: «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի նպատակները և խնդիրները (2 ժամ):

Հայոց լեզվի և գրականության դասընթացի տեղն ու դերը հանրակրթության մեջ: «Հայոց լեզուն և «Գրականությունն առարկաների դերը հայեցի կրթության և դաստիարակության կարևորագույն միջոց: «Մայրենին, «Հայոց լեզուն, «Գրականությունն և ավագ դպրոցի «Հայոց լեզուն, «Հայ գրականությունն առարկաների բովանդակության ձևավորումը (չափորոշիչ, ծրագիր) և բովանդակային բաղադրիչները: Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները ուսումնական առարկայի համատեքստում:

Գործնական աշխատանք

Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի համատեքստում (2 ժամ):

Սահմանել առարկայական չափորոշիչը՝ ըստ եռամակարդակայնության, ուսումնասիրել և քննարկել ծրագրերի ու դասագրքերի համապատասխանությունը, գնահատել գործող դասագրքերի համապատասխանությունը ծրագրերին:

Թեմա 3-4

Խմբային աշխատանքի իրականացումը «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում (3 ժամ):



Խմբային աշխատանքի իրականացումը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում: 5-6-րդ դասարաններում մայրենի լեզվի ուսուցման սկզբունքները: Ժամանակակից մեթոդներով ընթերցանության կազմակերպումը: Բնագրի և լեզվական նյութի գործնական ուսուցման և դասի թեմատիկ պլանավորման առանձնահատկությունները: Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը:

Գործնական աշխատանք

Լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի դասերին (2 ժամ):

Համեմատել ընթերցանության ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, ընդհանրացնել լեզվական նյութի ուսուցման արդյունավետ մեթոդները, տարբերակել ուսուցանվող բնագրերի թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները, վերլուծել տեքստում հանդիպող խնդրահարույց հարցերը:

Թեմա 5-6

Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը (6 ժամ):

Լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը ուսումնական առարկայի դասերին: Հայոց լեզվի և գրականության ուսուցիչը և ժամանակակից դասը: Ուսուցման դիդակտիկական սկզբունքները: Դասին ներկայացվող ժամանակակից պահանջները: Դասի պլանավորումը: Ուսուցման ժամանակակից ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները (պրոբլեմային, մոդուլային, նախագծային, հետազոտական, խաղային և այլն), դրանց նպատակային կիրառությունը դասին: Գործնական աշխատանքի ժամանակակից տեսակները: Սկզբնաղբյուրների և փաստաթղթերի ուսումնասիրման հուշաթերթիկներ: Ուսումնական գծակարգերի (աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, գծապատկերներ, հատակագծեր և այլն) և ցուցապաստառների ստեղծում:

Գործնական աշխատանք

ՏՀՏ օգտագործումը «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ (5 ժամ):



Ուսուցման որևէ տեխնոլոգիայով դասի ներկայացում: Ներառական դասի նմուշների կազմում: Ներառական երեխաների համար ուսումնական նյութերի կազմում. վարժություններ, թեստեր:

Թեմա 7-8

«Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը (3 ժամ):

ՏՀՏ-ների օգտագործումը ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ: Որոնողական-հետազոտական գործունեության զարգացումը ուսուցման գործընթացում: Տեքստային աշխատանքը որպես հաղորդակցական, իրադրական խոսքի զարգացման միջոց: Հայոց լեզվի և գրականության ուսուցման ժամանակակից միջոցները, դրանց դասակարգումը: Ուսուցման տպագիր-տեղեկատվական, զննական, էկրանային և էլեկտրոնային միջոցները (համակարգիչ, համացանցային կայքեր, էլեկտրոնային դասագիրք, էլեկտրոնային գրադարան և նյութեր, տեսադասեր, հեռավար ուսուցում):

Գործնական աշխատանք

Սովորողների գնահատումը որպես «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի ուսուցման բարելավման միջոց (2 ժամ):

Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ բնագրային որևէ նյութի (ցուցապաստառի, տեսանյութի ստեղծում): «Բայե խոսքի մասի ուսուցման ցուցապաստառի ստեղծում:

Թեմա 9. Սովորողների գնահատումը՝ որպես «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի ուսուցման բարելավման միջոց: Դասընթացի ամփոփում, արդյունքների ընդհանրացում և գնահատում (1 ժամ):

Ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը: Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը: Գնահատման նյութերի մշակում. թելադրության, փոխադրության նյութերի կազմման, անցկացման ժամանակակից սկզբունքներ գնահատման սանդղակների կազմում: Գրավոր խոսքի՝ առարկայական չափորոշչով առաջարկվող տեսակների գնահատման սկզբունքներն ու եղանակները: Թեստ, թեստի տեսակները, կառուցվածքը, հատկորոշիչների կազմման սկզբունքները: Շարադրության գնահատման սանդղակի ստեղծում: Թելադրության գնահատման սանդղակի ստեղծում: Ձևավորող



գնահատման մատյանի ստեղծում: Ուսումնամեթոդական նյութերի ստեղծում (մեթոդական խորհուրդների, հանձնարարականների, հարցարանների, թեստերի թղթային և էլեկտրոնային տարբերակների մշակում, մեթոդական, դիդակտիկական բաշխիչ և ինքնաշեն նյութերի պատրաստում և այլն):

Գործնական աշխատանք

Առաջիկա աշխատանքների պլանավորում (1 ժամ):

Շարադրության և փոխադրության գնահատման սանդղակի ստեղծում: Ամփոփիչ թեստերի կազմում: Հայտորոշիչ թեստերի կազմում:

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Հայոց լեզու և գրականություն թեմատիկ պլանը լիովին համապատասխանում է այդ առարկայի վերապատրաստման ծրագրին: Թեմատիկ պլանավորման մեջ ծրագիրը բաշխված է ըստ դասաժամերի: Նրանում նշված են տեսական և գործնական ժամերը, ինչպես նաև յուրաքանչյուր դասի նպատակը և վերջնարդյունքները: Թեմատիկ պլանում տրված են դասին կատարվող գործնական աշխատանքի թեմաները, դրանց կատարման ձևը, ընթացքը և արդյունքները: Վերջում տրվում է ամփոփիչ ստուգման և գնահատման ժամաքանակը ու ձևը:

	ԹԵՄԱ	ԺԱՄԱՔԱՆԱԿ			ՆՊԱՏԱԿԸ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Ստուգման ձև
		Ընդհ.	Տես.	Գործն.			
3.6.1	Ներածություն: «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի նպատակները և խնդիրները:	2	1	1	Զարգացնել ուսուցչի մասնագիտական հմտությունները, ինքնուսուցման և	Մասնակիցները կիմանան՝ սահմանել առարկայական չափորոշիչը՝ ըստ եռամսկարդականության, ուսումնասիրել և քննարկել ծրագրերի ու	Նախաթեստ



	«Հայոց լեզու և գրականություն», «Մայրենի առարկաների բարելավված ծրագրերը և դրանց կառուցվածքային և բովանդակային փոփոխությունները, նորացումները:				ինքնադրսևորման կարողությունները:	դասագրքերի համապատասխանությունը: Մասնակիցները կկարողանան Գնահատել գործող դասագրքերի համապատասխանությունը ծրագրերին	
3.6.2.	Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները «Հայոց լեզու և գրականություն» ուսումնական առարկայի համատեքստում: Ծրագրի կառուցվածքը: Թեմատիկ պլանավորում: Դասի պլանի օրինակ:	2	1	1	Զարգացնել պլանավորելու մեթոդամանկավարժական գործունեությունը և առաջադրել նպատակներ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները:	ա) հիմնավորել ուսումնական առարկայի ուսուցման նպատակները, կիրառական և գործնական նշանակությունը, բ) հստակ ձևակերպել դասի նպատակները, գ) ընտրել տվյալ թեմայի ուսուցման և ուսումնառության արդյունավետ մեթոդներ, դ) կազմակերպել արտադասարանային աշխատանքներ, ե) իրականացնել լաբորատոր, գործնական, նախագծային հետազոտական աշխատանքներ, զ) ապահովել միջառարկայական և ներառարկայական կապերը, է) օգտագործել լաբորատոր սարքավորումները նպատակային:	Ամփոփիչ թեստ
3.6.3.	Խմբային աշխատանքի իրականացումը «Հայոց լեզու և գրականություն» ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում:	3	1 1	1	Նպաստել մայրենիի դասավանդման արդյունավետությանը, ապահովել տարբերակված	Մասնակիցները կհիմանան • Կսովորեն խմբային աշխատանքի իրականացման առանձնահատկությունները: • Ինտեգրված դասի կազմակերպման	



	Սովորողների կարդալու լեզվական, հաղորդակցական, ստեղծարարական կարողությունների զարգացումը և մեթոդների ընտրությունը առարկան ուսուցանելիս: Լեզվական նյութի գործնական կիրառումը բնագրով: Գրավոր և բանավոր կապակցված խոսքի զարգացումն ըստ լեզվական նյութի:				ուսուցման կազմակերպում՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ տեխնոլոգիաներ, հետերոգեն խմբերի առկայության պայմաններում	հիմնական սկզբունքները: Մասնակիցները կկարողանան • մեկնաբանել 5-6-րդ դասարաններում մայրենիի ուսուցման սկզբունքները, • համեմատել ընթերցանության ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, • ընդհանրացնել լեզվական նյութի ուսուցման արդյունավետ մեթոդները, • տարբերակել ուսուցանվող բնագրերի թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները:	
3.6.4.	Լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը՝ «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի դասերին Առարկայի թեմատիկ պլանավորում, պլանավորել և վարել ընթերցանության դաս. ինտեգրված դաս (ինքնուրույն աշխատանք): Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ բնագրային որևէ թեմայի (ինքնուրույն աշխատանք՝ ցուցապաստառի, տեսանյութի ստեղծում): Միասնացված դասի պլանների կազմում:	2	1	1	Զարգացնել լեզվական նյութի գործնական կիրառման հմտությունները, խթանել սովորողների ինքնուրույն գործնական ինքնակառավարման, ինքնավերահսկման և նախաձեռնողական կարողությունների զարգացումը:	Մասնակիցները կիմանան • Միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծել բնագրի վերլուծության միջոցով: Մասնակիցները կկարողանան՝ • վերլուծել տեքստում հանդիպող խնդրահարույց հարցերը, • պլանավորել և վարել ընթերցանության դաս, • պլանավորել և վարել լեզվական նյութի ուսուցման դաս, պլանավորել և վարել ինտեգրված դաս:	



	Որևէ թեմայից տեսանյութի կամ սահիլկաշարի պատրաստում:						
3.6.5.	Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը Միասնացված ուսուցումից տարբերակված ուսուցման անցնելու դժվարությունները հաղթահարելու միջոցներն ու մեթոդները: Չափորոշահեն կրթության ապահովումը: Քերականական նյութի ուսուցումը՝ որպես աշակերտների իրադրական խոսքի զարգացման միջոց: Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությունը առարկան դասավանդելիս: Գործնական աշխատանքների ուսուցման առանձնահատկությունները: Գրական երկի ուսուցման առանձնահատկությունները: Սովորողների երևակայության, ստեղծագործական մտածողության, խոսքի զարգացումը՝ ըստ գրական ստեղծագործության:	5	1 1	2 1	Զարգացնել ներառված սովորողի դիտարկման և ուսումնական ունակությունների բացահայտման գործընթացում մասնակցությունը և դիտարկման հմտությունները:	Մասնակիցները կիմանան՝ • լեզվի և գրականության իմացությունը ծառայեցնել սովորողների իրադրական խոսքի զարգացմանը, • գրական երկի ուսուցման և խոսքի զարգացման կապը, Մասնակիները կկարողանան՝ • պլանավորել և կազմակերպել լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքներ. • գրական երկի և ցանկացած ոճով գրված տեքստերի լեզվաոճական վերլուծություն իրականացնել, Մասնակիցները կզարգացնեն՝ միջառարկայական կապերի օգտագործման և ինտեգրված դասերի կազմակերպման սկզբունքները:	



3.6.6.	SՀՏ օգտագործումը «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ Սովորողների հաղորդակցական, վերլուծական կարողությունների և իրադրական խոսքի զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման գործընթացում: Գրական երկերի ուսուցման աշխատանքների կազմակերպումը բնագրերի շուրջ: Սովորողների հետազոտական գործունեության կազմակերպումը հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման գործընթացում: Բնագրային աշխատանքի կազմակերպումը սկզբնաղբյուրների հետ. սկզբունքները, եղանակները: SՀՏ գործիքների կիրառությունը: Որևէ արձակ երկի ուսուցումը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Գեղարվեստական շարադրանքի ստեղծման կամ խմբագրման	9	1 1 1 1	3	2	Զարգացնել ուսուցման ժամանակակից մեթոդների տիրապետման և կիրառման կարողությունները: Նպաստել սովորողների հաղորդակցական, վերլուծական կարողությունների և խոսքի զարգացմանը հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման գործընթացում: Նպաստել սովորողների հետազոտական գործունեության կազմակերպմանը հայոց լեզվի և հայ գրականության ուսուցման գործընթացում:	Մասնակիցները կիմանան՝ • ըստ գրական երկի, նկարի, երաժշտության շարադրանքներ կառուցելու սկզբունքները: • սովորողների հետազոտական գործունեության կազմակերպման սկզբունքները, • տեքստային աշխատանքի կազմակերպման սկզբունքները, եղանակները: Մասնակիները կկարողանան՝ • պլանավորել և անցկացնել գրավոր խոսքի ուսուցման դասեր, • ստեղծել դերային իրավիճակներ՝ ըստ ուսումնասիրված երկի դիպաշարի: • օգտագործել SՀՏ-ներ ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ, • կազմակերպել և ղեկավարել սովորողների որոնողական-հետազոտական գործունեությունը, • տեքստային աշխատանքի միջոցով զարգացնել սովորողների կապակցված խոսքը: Մասնակիցները կզարգացնեն՝ միջառարկայական կապերի օգտագործման և ինտեգրված դասերի կազմակերպման սկզբունքները:
--------	--	---	-------------------------------------	---	---	--	---



	ուսուցման կազմակերպումը: Լեզվական որևէ թեմայի էլեկտրոնային դասի պլանի կազմում, տեսանյութի ստեղծում: Գրավոր և բանավոր խոսքի ուսուցում. շարադրանք և կապակցված խոսք՝ ըստ նկարի, երաժշտության, տեսաֆիլմի, գեղարվեստական կինոնկար ների և անիմացիաների: Առարկայի թեմատիկ պլանա վորման սկզբունքները (ինքնուրույն աշխատանք): Գրողի կենսագրական տվյալ ների ուսուցման արդյունավետ մեթոդներ: Ուսուցման որևէ տեխնոլո գիայով դասի ներկայացում: Ներառական դասի նմուշների կազմում: Ներառական երեխաների համար ուսումնական նյութերի կազմում. վարժություններ, թեստեր:						
3.6.7.	«Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի	3	1 1	1	Զարգացնել էլեկտրո- նային դասի պլանների կազմման, տեսանյութերի	Մասնակիցները կիմանան՝ • սովորողների հաղորդակցական կարողությունների և իրադրական խոսքի զարգացման ուղղությամբ տարվող	



	ձևավորումը Լեզվական որևէ թեմայի վերաբերյալ ուսումնական նյութի ստեղծում (ինքնուրույն աշխատանք): Գործնական աշխատանքի ստեղծում՝ ըստ բնագրային որևէ նյութի (ցուցապաստառի, տեսանյութի ստեղծում): «Բայե խոսքի մասի ուսուցման ցուցապաստառի ստեղծում:				ստեղծման հմտությունները, նախապատրաստել սովորողներին պետական ավարտական և միասնական քննություններին, հմտանալ տարաբնույթ ուսումնական նյութերի ստեղծման մեջ:	աշխատանքների տեսակները: Մասնակիները կկարողանան՝ • զարգացնել և արժևորել սովորողների հաղորդակցական կարողությունները և իրադրական խոսքի զարգացումը, • զուգադրել դասագրքերի և շտեմարանների բովանդակությունը, • դիտարկել ավագ դպրոցի տարբեր հոսքերի հայոց լեզվի և հայ գրականության դասագրքերի տարբերությունները:	
3.6.8.	Սովորողների գնահատումը որպես «Հայոց լեզու և գրականությունն ուսումնական առարկայի բարելավման միջոց Գնահատման նյութերի մշակում. թելադրության, փոխադրության նյութերի անցկացման ժամանակակից սկզբունքներով գնահատման սանդղակների կազմում: Գրավոր խոսքի՝ առարկայական չափորոշչով առաջարկվող տեսակների գնահատման սկզբունքներն ու եղանակները: Թեստ, թեստի տեսակները, կառուցվածքը, հատկորոշիչների կազմման սկզբունքները:	2	1	1	Նպաստել գնահատման նյութերի մշակման և կազմման գործընթացին: Ստեղծել գնահատման գործիքներ:	Մասնակիցները կիմանան՝ • գնահատման նյութերի մշակման սկզբունքները, • գնահատման սանդղակներ կազմել, • թելադրության, փոխադրության նյութերի կազմման, անցկացման ժամանակակից սկզբունքները: Մասնակիցները կկարողանան՝ • Ուսումնասիրել և հանդիպադրել գնահատման սանդղակները: • Գրավոր խոսքի՝ առարկայական չափորոշչով առաջարկվող տեսակների գնահատման սկզբունքներն ու եղանակները կիրառել ուսուցման գործընթացում:	



	Շարադրության գնահատման սանդղակի ստեղծում: Փոխադրության, թելադրության գնահատման սանդղակի ստեղծում: Ձևավորող գնահատման մատյանի ստեղծում: Ռուբրիկների ստեղծում: Շարադրության և փոխադրության գնահատման սանդղակի ստեղծում Ամփոփիչ թեստերի կազմում: Հայտորոշիչ թեստերի կազմում:						
3.6.9.	Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը	1	1	1	Գնահատի դասընթացը՝ զարգացնելով հմտությունները		Թեստային աշխատանք
Ընդհանուր՝		40	15	25			



«ԱՆԳԼԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(40 ժամ)

Թեմա 1. Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները ուսումնական առարկայի համատեքստում

ա. Ուսուցման նոր հայեցակարգի սկզբունքները, ուսուցման մեթոդները:

բ. Guided Discovery Approach.

Թեմա 2: Ուսումնական առարկայի ուսուցման նպատակները և խնդիրները

ա. Օտար լեզուներ առարկայի հանրակրթական նշանակությունը, նպատակները և խնդիրները հանրակրթության տարբեր աստիճաններում /տարրական, միջին, ավագ /

բ. Modern teaching vs Traditional teaching.

Թեմա 3: Խմբային աշխատանքի իրականացումը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում

Համագործակցային ուսումնառությունը դասարանում

ա. Քննարկում: Բանավոր հարց ու պատասխանների և քննարկումների վարում:

բ. Պրոբլեմային ուսուցում, ուսումնառությունը

Թեմա 4: Լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը ուսումնական առարկայի դասերին

ա. Դպրոցում, ուսումնական հաստատություններում կիրառվող աշխատանքների տեսակները

բ. Աշխատանքների առանձնահատկությունները, կիրառման սկզբունքները

Թեմա 5: S2S օգտագործումը ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ

ա. առցանց/հեռավար ուսուցման առավելությունները և թերությունները

բ. ուսուցման կազմակերպման սկզբունքները առցանց հարթակում

Թեմա 6: Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը

ա. Դասի տեսակները



բ. Միավորների ուղղում:

Թեմա 7. Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը

ա. Ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների համակարգումը, առաջադրանքների դասակարգումը ըստ տարիքային խմբերի

բ. Կրթական տարբերակված կարիքներ ունեցող սովորողների համար լրացուցիչ ուսումնական նյութերի մշակում:

Թեմա 8: Գրավոր խոսքի հմտությունների զարգացում ավագ դպրոցում (Պարբերություն գրելու հմտություններ)

ա. Սեփական կարծիքը արտահայտելու, փաստարկելու և հիմնավորելու կարողություններ

բ. Ակադեմիական հմտությունները զարգացնելու դասավանդման ունկնդրել-գրել, կարդալ-ունկնդրել-գրել նմուշ-մոդելներ

գ. Պարբերությունների տեսակները

Թեմա 9: Գրավոր խոսքի հմտությունների զարգացումը ավագ դպրոցում (Շաբաղություն գրելու հմտությունները և դրանց կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները)

ա.. Շաբաղությունների տեսակները (independent essays)

բ. Շաբաղությունների տեսակները (integrated essays)

Թեմա 10: Ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը

ա «Արժեհամակարգե հասկացությունը մանկավարժական գիտության

բ «Դաստիարակությունե, «կրթությունե, «ազգային գիտակցությունե, «համամարդկային արժեքներե, «դաստիարակչական համակարգե, «տարիքային գործոնե, «միջանձնային հարաբերություններե, «ուսուցիչե, «դասուղեկե հասկացությունների ուսումնասիրությունը, քննարկումը

Թեմա 11: . Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը

ա Գնահատման տեսակները, ընդունված չափորոշիչները

բ Ուսումնական թղթապանակի բովանդակությունը, տեսակները



«ԱՆԳԼԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Անգլերենի թեմատիկ պլանը լիովին համապատասխանում է այդ առարկայի վերապատրաստման ծրագրին: Թեմատիկ պլանավորման մեջ ծրագիրը բաշխված է ըստ դասաժամերի: Նրանում նշված են տեսական և գործնական ժամերը, ինչպես նաև յուրաքանչյուր դասի նպատակը և վերջնարդյունքները: Թեմատիկ պլանում տրված են դասին կատարվող գործնական աշխատանքի թեմաները, դրանց կատարման ձևը, ընթացքը և արդյունքները: Վերջում տրվում է ամփոփիչ ստուգման և գնահատման ժամաքանակը ու ձևը:

Հ/հ	Թեմաներ	ԺԱՄԱՔԱՆԱԿ		Նպատակը	Վերջնարդյունք	Գործնական աշխատանքի թեմա
		Տես.	Գործն.			
		19	21			
1	Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները ուսումնական առարկայի համատեքստում Ուսուցման նոր հայեցակարգի սկզբունքները, ուսուցման մեթոդները: Guided Discovery Approach.	1	1	Ուսումնասիրել օտար լեզուների ուսուցման նոր հայեցակարգը, ներկայացնել դասավանդման գործընթացում կիրառվող մեթոդների համակարգը, նպատակը, ուսուցչի և սովորողների դերը տվյալ գործընթացում	Կիմանա՝ ➤ ուսուցման նոր հայեցակարգի սկզբունքները ➤ ուսուցման ժամանակակից մեթոդները Կկարողանա՝ ➤ ճիշտ կազմակերպել առաջադրանքի վրա հիմնված ուսուցման փուլերը ➤ ճիշտ կիրառել ուսումնասիրվող մեթոդները դասապրոցեստում	Կոնկրետ դասի օրինակով ներկայացնել առաջադրանքի վրա հիմնված ուսուցման փուլերը, յուրաքանչյուր փուլին բնորոշ առաջադրանքները
2.	Ուսումնական առարկայի			Ուսումնասիրել օտար	Կիմանա՝	Կոնկրետ դասի



	ուսուցման նպատակները և խնդիրները: Օտար լեզուներ առարկայի հանրակրթական նշանակությունը, նպատակները և խնդիրները հանրակրթության տարբեր աստիճաններում /տարրական, միջին, ավագ / Task-based teaching vs Traditional teaching.	1	2	լեզուների ուսուցման նոր հայեցակարգը, ներկայացնել Task-based teaching մոտեցման սկզբունքները, նպատակը, ուսուցչի և սովորողների դերը տվյալ գործընթացում	➤ ուսուցման նոր հայեցակարգի սկզբունքները ➤ ուսուցման ժամանակակից մեթոդները ➤ Վկարողանա՝ ➤ Ճիշտ կազմակերպել առաջադրանքի վրա հիմնված ուսուցման փուլերը ➤ Կտիրապետի՝ ընթերցանության/ գրելու /խոսելու/լսելու դասավանդման սկզբունքներին առաջադրանքի վրա հիմնված ուսումնամ պայմաններում	օրինակով ներկայացնել առաջադրանքի վրա հիմնված ուսուցման փուլերը, յուրաքանչյուր փուլին բնորոշ առաջադրանքները
3.	Խմբային աշխատանքի իրականացումը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում: Համագործակցային ուսումնառությունը դասարանում Քննարկում: Բանավոր հարց ու պատասխանների և քննարկումների վարում: Պրոբլեմային ուսուցում, ուսումնառությունը	1	1	Ձեռք բերել համագործակցային և փոխներգործուն մեթոդներով աշխատելու կարողություն՝ կիրառելով դրանք դասի տարբեր փուլերում:	Կիմանա և կկարողանա դասերի տարբեր փուլերում կիրառել համագործակցային և փոխներգործուն մեթոդներ, խմբային աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները	Կազմել դասի պլան՝ հիմնվելով առաջարկված դասի փուլերի, սկզբունքների, դրանց նպատակների վրա և օգտագործելով համապատասխան մեթոդներ:
4	Լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը ուսումնական առարկայի	1	1	Ծանոթացնել դպրոցում, ուսումնական հաստատություններում կիրառվող աշխատանքների	Կիմանա՝ լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպման հիմնական սկզբունքները ուսումնական առարկայի դասերին	Դասագրքերի, ուսուցչի ձեռնարկների օգնությամբ ուսումնասիրել



	դասերին			տեսակներին, աշխատանքների առանձնահատկություն ներին կիրառման սկզբունքներին	Կկարողանա՝ ճիշտ կազմակերպել լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կիրառումը ուսումնական առարկայի դասերին	լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների համար նախատեսված տեքստերը, մշակել առավել արդյունավետ մեթոդներ առաջադրանքնե րի կատարման համար:
5	S2S օգտագործումը ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ	1	1	Ծանոթացնել առցանց/հեռավար ուսուցման սկզբունքներին, որոշակի գործիքներին, որոնք կարելի կիրառել կրթական նպատակներով	Գիմանա՝ ➤ առցանց/հեռավար ուսուցման առավելությունները և թերությունները ➤ ուսուցման կազմակերպման սկզբունքները առցանց հարթակում Կկարողանա՝ ➤ կազմակերպել դասապրոցեսը առցանց/հեռավար հարթակում ➤ Կտիրապետի՝ որոշակի գործիքների՝ անհրաժեշտության դեպքում դասապրոցեսը կազմակերպել առցանց հարթակում	Կազմակերպել որնե դաս առցանց հարթակում, քննարկել առավելություններ ը և թերությունները
6	Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը	1	2	Ծանոթացնել դասի տեսակներին, հիմնական	Գիմանա՝ ➤ դասի տեսակները ➤ մեթոդների և սկզբունքների	Ներկայացնել տարբեր դասեր՝ կիրառելով



	Օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի հարցեր: Դասի տեսակները: Միավորների ուղղում:			սզբունքներին, սխալների ուղղման փուլերին և տեսակներին՝ կախված սխալների հաճախականությունից:	ընտրությունը ըստ դասի տեսակների Կկարողանա՝ ➤ կազմակերպել ճիշտ դասապրոցեսը ➤ Կտիրապետի՝ որոշակի թեմային առնչվող որոշակի գիտելիքի	ստացված գիտելիքները
7	Ուսումնական նյութի պլանավորում: Դասի պլանավորում: Առարկայի թեմատիկ պլանավորման մեթոդական ցուցումներ:	2	2	Ծանոթացնել ուսումնական նյութի պլանավորման գործընթացին, տարեկան պլան գրաֆիկի կազմման, թեմատիկ կամ կիսամյակային պլանավորման, գործնական և տեսական դասի պլանավորման, կրթական տարբերակված կարիքներ ունեցող սովորողների համար առանձին դասերի պլանների մշակման գործընթացին:	Դիմանա՝ Կազմել ուսումնական նյութի պլանավորումը, տարեկան պլան գրաֆիկի կազմումը, թեմատիկ կամ կիսամյակային պլանավորումը, գործնական և տեսական դասի պլանավորում, կրթական տարբերակված կարիքներ ունեցող սովորողների համար առանձին դասերի պլանների մշակումը::	Կազմել տարեկան պլան գրաֆիկ, թեմատիկ կամ կիսամյակային պլան, դասի պլան հիմնվելով առաջարկված դասի փուլերի, սկզբունքների, դրանց նպատակների վրա և օգտագործելով համապատասխան մեթոդներ:
8	Գրավոր խոսքի հմտությունների զարգացումը ավագ դպրոցում (պարբերությունների կառուցվածքային	2	2	Զարգացնել սեփական կարծիքը արտահայտելու, փաստարկելու և հիմնավորելու	Դիմանա՝ ➤ գրավոր խոսքի ուսուցման հիմնական սկզբունքներն ու մոտեցումները, Կկարողանա՝	Ուսուցիչների հետ համատեղ մշակել պարբերություններ գրելու



	առանձնահատկությունները)			կարողությունները: Զարգացնել ակադեմիական հմտությունները զարգացնելու դասավանդման ունկնդրել-գրել, կարդալ-ունկնդրել- գրելնմուշ-մոդելները	➤ զարգացնել և ճիշտ օգտագործել պարբերության կառուցվածքի հիմնական կաղապարը, ➤ արտահայտել սեփական մտքերն ու գաղափարները համապատասխան տվյալ խոսքային իրավիճակին և ոճին, ➤ գնահատել պարբերությունը գնահատման վերլուծական սանդղակով, Կտիրապետի՝ գրավոր խոսքի այն հմտություններին և ռազմավարություններին, որոնք համապատասխանում են ժամանակակից լեզուների ընդհանուր եվրոպական համակարգի մակարդակին	հմտություններն ու կարողությունները գնահատողընդհանրական - holistic և վերլուծական - analytic սանդղակներ: Ստուգել և գնահատել պարբերությունները գնահատման վերլուծական սանդղակով:
սովորողների գործնական կարողությունների զարգացումը, - Ստեղծագործական մտածողության զարգացումը հասարակագիտության դասական դրժնթացում:				կարողությունների զարգացման մեթոդներն ու հնարները, նրանց ստեղծագործական մտածողության զարգացմանն ուղղված աշխատանքների առանձնահատկությունները:	կարողությունների և ստեղծագործական մտածողության զարգացման մեթոդիական: Կկարողանա՝ ➤ Դասավանդման ժամանակվ կիրառել սովորողների ճանաչողական հմտությունները զարգացնելու մեթոդներ և հնարներ, ➤ Կիրառել գործնական կարողությունը զարգացնող մանկավարժական տեխնոլոգիաներ: ➤ Նպաստել սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը: Կտիրապետի՝ ➤ Սովորողների ճանաչողական հմտությունների, գործնական կարողությունների, ձևավորող և ստեղծագործական մտածողության զարգացնող առաջադրանքների կատարմանը:
Թեմա 8 Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը: Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարություններն հասարակագիտության	3				



ուսումնական առարկայի համատեքստում:					
Միավորային գնահատման դերն ու նշանակությունը ուսումնական գործընթացում, Միավորային գնահատման գործառնությունները, Ձևավորող գնահատման գործիքները: - Հասարակագիտության ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, -Հասարակագիտության դասավանդման ժամանակակից մեթոդները, Հասարակագիտության դասավանդման ժամանակակից մոտեցումները:				Ներկայացնել միավորային դերն ու նշանակությունը ուսումնական գործընթացում, բացահայտել միավորային գնահատման գործառնությունները, ձևավորող գնահատման գործիքները՝ աշակերտների առաջընթացը չափորոշչային պահանջների համեմատ, աշակերտների առաջընթացը նախկին ձեռքբերումների համեմատ, աշակերտների առաջընթացը մյուս աշակերտների համեմատ: Ներկայացնել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, դրանց կիրառման առանձնահատկությունները, բացահայտել պասարակագիտության	Կիմանա՝ ➤ Միավորային գնահատման ձևերը, Կկարողանա՝ ➤ Միավորային և ձևավորող գնահատումը կիրառել դասավանդման գործընթացում: Կտիրապետի՝ Միավորային և ձևավորող գնահատման Կիմանա՝ ➤ Հասարակագիտության դասավանդման ժամանակակից մեթոդները, դրանց կիրառման առանձնահատկությունները, Կկարողանա՝ ➤ Հասարակագիտության դասավանդման ժամանակ կիրառել ժամանակակից տեխնոլոգիաները Կտիրապետի՝ Հասարակագիտության դասավանդման ժամանակակից մոտեցումներին:մեթոդներին



				ուսուցման ժամանակափյու մոտեցումները:	
Թեմա 9 Դասընթացի ամփոփում և գնահատում	1				

«ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ »
ԱՌԱՐԿԱՅԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ
(40 ժամ)

Թեմա 1. Դասընթացի նպատակներն ու խնդիրները: Դասընթացի ծրագրի ծանոթացում (1 ժամ):

- ՀՀ կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները (ՀՊԶ): Չափորոշչափեն առարկայական ծրագրեր:
- Առարկայի բովանդակությանը ներկայացվող ընդհանրական պահանջներ: : Նախնական զինվորական պատրաստության հիմնական ուղղությունների և տեսությունների ընդգրկվածությունը ծրագրային նյութում, պահանջների և խնդիրների փոխկապակցվածությունը::
- Հիմնական և ավագ դպրոցի ուսումնական ծրագրերի առանձնահատկությունները:

Թեմա 2. Խմբային աշխատանքի իրականացումը «ՆԶՊԵ ուսուցման գործընթացում (3 ժամ)

- Սովորողների ակտիվ մտածողության ապահովումը ինտերակտիվ և համագործակցային ուսուցման եղանակով:
- Խմբային աշխատանքի իրականացման ընդհանրական սխեման, պլանավորումը և անցկացումը:
- Խմբային աշխատանքի գնահատման ձևերը:

Թեմա 3. Գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը «ՆԶՊԵ դասերին (5 ժամ)



▪ Նախնական զինվորական պատրաստության դասերի գործնական ուղղվածությունը: Գործնական աշխատանքների տեսակները՝ ցուցադրական վարժություններ, գործնական պարապմունքներ, սովորողների շարժողական ընդունակությունների մշակման առանձնահատկությունները:

▪ Գործնական պարապմունքների իրականացման ընդհանրական սխեման, պլանավորումը և անցկացումը, նաև հեռավար ուսուցման պայմաններում:

▪ Գործնական աշխատանքների գնահատման թեստերը և սանդղակը:

▪ Նախագծային աշխատանքների տեսակները:

▪ Նախագծային աշխատանքների իրականացման ընդհանրական սխեման, պլանավորումը և անցկացումը:

▪ Նախագծային աշխատանքների գնահատման ձևերը:

Թեմա 4. Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը «ՆԶՊ» առարկայի դասավանդման գործընթացում (2 ժամ)

- Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դասարանային և արտադասարանային պարապմունքների կազմակերպման և իրականացման ձևերը:

Թեմա 5 Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը (2 ժամ)

▪ Միջառարկայական կապերը որպես գիտելիքների յուրացման արդյունավետության պայման

▪ Միջառարկայական կապերի իրականացումը նախնական զինվորական պատրաստության ուսուցման գործընթացում

▪ Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց

▪ Դասի տիպերը, կազմակերպման ձևերն ու վերլուծությունը: Ինտեգրված դասեր:

▪ Ինտեգրված դասի պլանավորումը և անցկացումը:

Թեմա 6. Դասավանդման ժամանակակից մոտեցումները, ուսուցման ավանդական և համագործակցային մեթոդների կիրառումը և ռազմավարությունը «ՆԶՊ» առարկայի դասավանդման գործընթացում: (6 ժամ)

- Ուսուցման սկզբունքները, մեթոդ, մեթոդների դասակարգումը: Ուսուցման մեթոդների երեք հիմնական խմբերը:

- Սովորողների ակտիվ մտածողության ապահովումը ինտերակտիվ և համագործակցային ուսուցման եղանակով:

Թեմա 7. «ՆԶՊ» ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը (4 ժամ) :



- Նախնական զինվորական պատրաստության առարկայի դերը սովորողների աշխարհայացքի ձևավորման գործում,
- Հայրենասիրական դաստիարակությունը նախնական զինվորական պատրաստության ուսուցման ընթացքում,
- Ազգային և համամարդկային արեքների ուսումնասիրությունը նախնական զինվորական պատրաստության դասավանդման ժամանակ:

Թեմա 8. Սովորողների գնահատումը «ՆԶՊ» առարկայից: Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը(4 ժամ)

- Միավորային գնահատում
- Ձևավորող գնահատում, ձևավորող գնահատման գործիքներ
- Թեստ, նպատակը և հատկորոշիչները
- Հայտորոշիչ թեստ, նպատակը և հատկորոշիչները
- Բանավոր հարցման գնահատման ռուբրիկներ
- Սովորողների հմտությունների և վերաբերմունքի գնահատում

Ընթացիկ և ամփոփիչ գնահատման առաջադրանքներ:

Թեմա 9. Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողությունների ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը (2 ժամ)

- Ճանաչողական հետաքրքրությունների և մտավոր ունակությունների զարգացում
- Նախագծային և անհատական աշխատանքները որպես սովորողների գործնական կարողությունները ձևավորող և ստեղծագործական մտածողության զարգացման միջոց
- Արտադասարանական միջոցառումները: Սպորտային մրցումների անցկացման համակարգերը, միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ ցուցումները և խորհուրդները:
- Դասընթացի ամփոփում և գնահատում /1 ժամ/



«ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ՆԶՊ առարկայական ծրագրի նպատակն է՝ զինվորական պատրաստության հիմունքներից նվազագույն գիտելիքներ տիրապետող, արդիական գիտելիքների, գործնական կարողությունների ու հմտությունների միջոցով՝ արտակարգ իրավիճակներում կենսապահովում իրականացնող, հասարակական բարձր գիտակցություն, բարոյահոգեբանական որակներ և վարքային դրսևորումներ ունեցող անձի ձևավորումը:

Հիմնական (միջին) դպրոցում «նախնական զինվորական պատրաստությունն առարկայի ուսուցման նպատակն է՝

- զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ տեսական գիտելիքների հաղորդումը,
- շարժողական ընդունակությունների (արագաշարժության, ուժի, դիմացկունության, ճկունության, հավասարակշռության և շարժումների կոորդինացիայի) սկզբնական դետալների զարգացումը,
- մտային (մտածողության ակտիվություն, վերլուծականություն, տրամաբանություն, մտքի ճկնություն, քննադատողականություն, ուշադրության կենտրոնացում և տեղափոխում), ֆիզիոլոգիական (ուղեղիկի, ներքին ականջի, շնչառության կանոնավորում), հոգեբանական (կամք, նպատակասլացություն, գիտակցված կարգապահություն, ինքնուրույնություն, ինքնավստահություն, հոգեբանական կայունություն, ինքնակատարելագործում) որակների ձևավորումը,
- հասարակական բարձր գիտակցության, ներքին արժեհամակարգի, վարքային նորմերի, հասարակական դիրքորոշումների և համապատասխան վարքագծի ձևավորումը,
- սովորողների մեջ բարոյական բարձր հատկությունների՝ պատասխանատվության, հաստատակամության, ընկերասիրության, փոխօգնության, հանդուրժողականության և այլ հատկանիշների ձևավորումը,
- առողջ ապրելակերպի կանոնների պահպանման գիտակցության ձևավորումը,

Միջնակարգ (ավագ) դպրոցում «նախնական զինվորական պատրաստությունն առարկայի ուսուցման նպատակն է՝

- զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ գիտելիքների խորացումն ու համակարգումը,



- մարտական և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կարողությունների ձեռքբերում և հմտությունների զարգացում, գիտելիքների յուրացում և ոլորտի տարբեր կողմերի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում,
- հայրենիքի պաշտպանության գործին անվերապահ պատրաստակամության ձևավորում,
- հայրենիքի պաշտպանությանը միտված՝ սովորողների մասնագիտական կողմնորոշում (ռազմական, ռազմատեխնիկական, ռազմաարդյունաբերական, տեղեկատվական անվտանգության, ռազմական բժշկության, արտակարգ իրավիճակներ):
- լեռնային պատրաստության հիմունքների ծանոթացում
- ստեղծագործական ունակությունների, ռազմագիտական երևույթները բացատրելու և տարբեր բնագավառներում կիրառելու, սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողությունների և հմտությունների զարգացումը,
- կրթությունը ռազմական ուղղությամբ շարունակելու համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը

ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություններ, որպես առարկա մեր իրականության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարի սկզբներին: «Նախնական զինվորական պատրաստություններ առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

Հանրակրթական դպրոցում «Նախնական զինվորական պատրաստություններ առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցում սատացած գիտելիքները ընդլայնվում և խորացվում է ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ «Նախնական զինվորական պատրաստություններ առարկայի ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով զինվորական պատրաստության, առաջին օգնության և անվտանգ կենսագործունեության հիմունքների վերաբերյալ համակարգային պատկերացումների ձևավորմանը:



Հ/հ	Թեմա	Տես.	Գործ.	Նպատակ	Վերջնարդյունք
		20	20		
1.	Դասընթացի նպատակներն ու խնդիրները: Դասընթացի ծրագրի ծանոթացում: ▪ ՀՀ կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները (ՀՊԶ): Չափորոշահեն առարկայական ծրագրեր: ▪ Առարկայի բովանդակությանը ներկայացվող ընդհանրական պահանջներ: Նզգալ հիմնական ուղղությունների և տեսությունների ընդգրկվածությունը ծրագրային նյութում, պահանջների և խնդիրների փոխկապակցվածությունը ▪ Հիմնական և ավագ դպրոցի ուսումնական ծրագրերի առանձնահատկությունները:	1		Ներկայացնել նզգալ ժամանակակից նպատակներն ու խնդիրները, հասնել այն գաղափարին, որ աշակերտին ոչ թե պետք է սովորոցնել մտքեր, այլ մտածել: Ներկայացնել նզգալ առարկայի ծրագրերի և դասագրքերի յուրահատկությունները,	Ներկայացնել նզգալ ժամանակակից նպատակներն ու խնդիրները, հասնել այն գաղափարին, որ աշակերտին ոչ թե պետք է սովորոցնել մտքեր, այլ մտածել: Ներկայացնել նզգալ առարկայի ծրագրերի և դասագրքերի յուրահատկությունները,
2.	Խմբային աշխատանքի իրականացումը «ՆԶՊԵ ուսուցման գործընթացում»	1	2	Իրագեղել հանրակրթական չափորոշչի և առարկայի չափորոշչի միջև	Գիտենան հանրակրթական պետական չափորոշչի և առարկայի չափորոշչի բովանդակությունը, կառուցվածքը և մասերը



	▪ Սովորողների ակտիվ մտածողության ապահովումը ինտերակտիվ և համագործակցային ուսուցման եղանակով: ▪ Խմբային աշխատանքի իրականացման ընդհանրական սխեման, պլանավորումը և անցկացումը: ▪ Խմբային աշխատանքի գնահատման ձևերը:			փոխկապակցվածության մասին:	
3.	Գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը հասարակագիտություն առարկայի ուսուցման գործընթացում:	2	3	Ներկայացնել գործնական աշխատանքի մեթոդիկան, ձևավորել քննադատական մոտեցում: Ներկայացնել նախագծային աշխատանքի տեսակները, ձևավորել նախագծային աշխատանք կատարելու որոշակի հմտություններ և կարողություններ:	Կիմանա՝ ➤ Գործնական աշխատանքների տեսակները: ➤ Նախագծային աշխատանքների տեսակները Կլարոդանա՝ ➤ Աշխատել սկզբաղբյուրների, փաստաթղթերի, աղյուսակների, ցուցապաստառների հետ: ➤ Կազմել և իրականացնել ինքնուրույն նախագծեր Կտիրապետի՝ ➤ Ձեռք կբերի իի կողմից ձեռք բերված տեղեկատվական նյութերով աշխատելու հմտություններին: Նախագծային աշխատանքների հմտություններին և կարողություններին:
4.	Ռազմարվեստի պատմություն: ՀՀ Զինված ուժեր: ուսուցուման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը:	2	2	Պատկերացում ունենալ զենքի, զինամթերքի ստեղծման և զարգացման վերաբերյալ: Ձևավորել պատկերացումներ՝ ռազմարվեստ հասկացության	Պատկերացում ունեն «Ռազմարվեստ հասկացության մասին: Գիտեն հին դարերում հայկական բանակի կառուցվածք, հայկական և հին աշխարհի հայտնի զորավարների կիրառած մարտավարական հնարքները: Կարող են նկարագրել ՀՀ ԶՈՒ հիմնական



				որպես մարդկային կարևոր գործունեության մասին պատմականորեն ձևավորված և գիտականորեն հիմնավորված գիտելիքների համակարգի մասին: Ընդլայնել գիտելիքները ՀՀ ԶՈՒ, դրա ստեղծման և անցած ուղու մասին: Ձևավորել դրական վերաբերմունք ՀՀ ԶՈՒ և զինծառայության վերաբերյալ:	գործառույթները, նրա առանձին գորատեսակները և դրանց ստորաբաժանումները: Ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացու ձևավորում
5.	Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը «ՆԶՊեռարկայի դասական դրաման գործընթացում	1	1	Ծանոթացնել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեթոդաբանությանը	Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դասարանային և արտադասարանային պարապմունքների կազմակերպման և իրականացման տիրապետում
6.	Միջառարկայան կապերի օգտագործմամբ ինտեգրված դասերի կազմակերպման առանձնահատկությունները	1	1	Ծանոթացնել միջառարկայան կապերի օգտագործմամբ ինտեգրված դասերի կազմակերպման մեթոդներին և միջոցներին	Գիտենա միջառարկայան կապերի օգտագործմամբ ինտեգրված դասերի կազմակերպման ձևերը
7.	Դասավանդման ժամանակակից մոտեցումները, ուսուցման ավանդական և համագործակցային մեթոդների կիրառումը «ՆԶՊեռարկայի դասավանդման գործընթացում:	3	3	Ծանոթացնել դասավանդման ավանդական, համագործակցային և ժամանակակից մեթոդներին:	Ուսուցման ավանդական և համագործակցային, ժամանակակից մեթոդների (բացատրման, զննական, պատմման մեթոդներ, խմբային, հերթափոխային, շրջանաձև, խճանկարի և այլ մեթոդների) տիրապետում և կիրառում:
8.	Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ, ձևավորող և	1	1	Ներկայացնել նզպ դասավանդման ընթացքում սովորողների ճանաչողական հմտությունների,	Կիմանա՝ ➤ Նզպ ուսուցման ընթացքում սովորողների ճանաչողական հմտությունների ձևավորման



	ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կատարումը;			գործնական կարողությունների զարգացման մեթոդներն ու հնարները, նրանց ստեղծագործական մտածողության զարգացմանն ուղղված աշխատանքների առանձնահատկությունները:	առանձնահատկությունները, ➤ Նզպ ուսուցման ընթացքում սովորողների գործնական կարողությունների և ստեղծագործական մտածողության զարգացման մեթոդիական: Կկարողանա՝ ➤ Դասավանդման ժամանակվ կիրառել սովորողների ճանաչողական հմտությունները զարգացնելու մեթոդներ և հնարներ, ➤ Կիրառել գործնական կարողությունը զարգացնող մանկավարժական տեխնոլոգիաներ: ➤ Նպաստել սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը: Կտիրապետի՝ ➤ Սովորողների ճանաչողական հմտությունների, գործնական կարողությունների, ձևավորող և ստեղծագործական մտածողության զարգացնող առաջադրանքների կատարմանը;
9.	Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը: Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարություններն հասարակագիտության ուսումնական առարկայի համատեքստում:	2	2	Ներկայացնել միավորային դերն ու նշանակությունը ուսումնական գործընթացում, բացահայտել միավորային գնահատման գործառնությունները, ձևավորող գնահատման գործիքները՝ աշակերտների առաջընթացը չափորոշչային պահանջների համեմատ, աշակերտների առաջընթացը նախկին ձեռքբերումների համեմատ, աշակերտների առաջընթացը մյուս	Կիմանա՝ ➤ Միավորային գնահատման ձևերը, Կկարողանա ➤ Միավորային և ձևավորող գնահատումը կիրառել դասավանդման գործընթացում: Կտիրապետի՝ Միավորային և ձևավորող գնահատման Կիմանա՝ ➤ Նզպ դասավանդման ժամանակակից մեթոդները, դրանց կիրառման առանձնահատկությունները, Կկարողանա՝ ➤ Նզպ դասավանդման ժամանակ կիրառել ժամանակակից տեխնոլոգիաները



				աշակերտների համեմատ: Ներկայացնել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, դրանց կիրառման առանձնահատկությունները, բացահայտել նզպ ուսուցման ժամանակակից մոտեցումները:	Կտիրապետի՝ Նզպ դասավանդման ժամանակակից մոտեցումներին:մեթոդներին
	Դասընթացի գնահատում և ամփոփում	1		Պարզել դասընթացի արդյունավետությունը	Ուսուցիչների ձեռքբերած գիտելիքներ, ձևավորված կարողություն- հմտություններ, դիրքորոշում

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ (40 ԺԱՄ)

Թեմա 1. «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը և խնդիրները: (1 ժամ):

- «Տեխնոլոգիան ուսումնական առարկայի նպատակը:
- Առարկայի խնդիրները:
- «Տեխնոլոգիան ուսումնական առարկայի հայեցակարգ:

Թեմա 2. Խմբային աշխատանքի իրականացումը «Տեխնոլոգիան առարկայի ուսուցման գործընթացում (3 ժամ)

- «Տեխնոլոգիան առարկայի ուսուցման գործընթացում աշխատանքի կազմակերպման ձևերը:
- Խմբային աշխատանքի առանձնահատկությունները:
- Խմբային, համագործակցային առաջադրանքներ.

/Խմբային, համագործակցային աշխատանքները կարող են լինել շատ տարբեր տիպերի՝ թեմաների, իրավիճակների, առաջադրանքների, խնդիրների լուծման շուրջ: Այստեղ առաջնային նպատակ է դառնում ոչ միայն առաջադրանքի կատարումը, այլև



խմբում համագործակցելով, միմյանց կարծիքներն ու կարողությունները համադրելով՝ լուծումներ գտնելն ու իրականացնելը: Համագործակցային առաջադրանքներն ավելի նպատակային և համակարգված անցկացնելու համար պետք է հետևել համագործակցային ուսուցման կառուցատարրերին տարրերին, որոնք վեցն են.

1. *Դրական փոխկախվածություն,*
2. *Դեմ առ դեմ, իրթանող փոխազդեցություն,*
3. *Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, հմտություններ,*
4. *Սոցիալական հմտություններ,*
5. *Խմբային գործընթաց,*
6. *Փոխներգործուն (ինտերակտիվ) առաջադրանք:*

Թեմա 3. Գործնական և նախագծային աշխատանքների կազմակերպումը «Տեխնոլոգիան առարկայի դասերին: (5 ժամ)

- ՆՈԻ «Տեխնոլոգիան առարկայի տիրույթում:
- Ուսումնական նախագծերի դասակարգումը:
- Նախագծային աշխատանքի փուլերը:
- Գործնական աշխատանքների կարևորությունը առանցքային կոմպետենցիաների ձևավորման գործընթացում:
- Կոմպետենցիայի «հմտությունն բաղադրիչը:
- Գործնական աշխատանքի փուլերը «Կոնստրուկտիվորումե թեմայի դասավանդման օրինակով:

Թեմա 4. Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը: (6 ժամ)

- Ինտեգրման գործընթացի վերլուծությունը հիմնական դպրոցում:
- Ինտեգրված ուսուցում «Տեխնոլոգիան առարկայի տիրույթում:
- Միջառարկայական կապերի ապահովումը որպես գիտելիքների ինտեգրման մանկավարժական պայման:
- Ինտեգրված դասերի կազմակերպում/ինտեգրված թեմատիկ միավորների ստեղծում:

Թեմա 5. ՏՀՏ ներքի օգտագործումը «Տեխնոլոգիա» առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ: (1 ժամ)



- «Տեխնոլոգիան առարկայի դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման նպատակահարմարությունը:
- ՏՀՏ-ների կիրառումը որպես կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացի ակտիվացման միջոց:
- Էլեկտրոնային ուսումնական պաշարներ:

Թեմա 6. «Տեխնոլոգիան առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը: (1 ժամ)

- Արժեքներ, որոնք ձևավորվում են «Տեխնոլոգիան առարկայի դասավանդման գործընթացում:
- Մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը «Տեխնոլոգիան առարկայի տիրույթում:

Թեմա 7. Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը: (4 ժամ)

- Ճանաչողական հմտությունների զարգացումը «Տեխնոլոգիան առարկայի դասերին:
- Գործնական կարողությունների ձևավորումն իբրև «Տեխնոլոգիան առարկայի դասի կարևոր բաղադրիչ:
- Տրամաբանական և ստեղծագործական առաջադրանքներ զարգացումը «Տեխնոլոգիան առարկայի դասերին /կոնկրետ առաջադրանքների օրինակներով:

Թեմա 8. Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը: (2 ժամ)

- Սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները:
- Գնահատման տեսակներն ու ձևերը:
- Միավորային գնահատում:
- Ձևավորող (ուսուցանող) գնահատում:
- «Տեխնոլոգիան առարկայի կիսամյակային ամփոփիչ բնութագրի ձևանմուշ

Թեմա 9. Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները «Տեխնոլոգիան առարկայի դասերին: (6 ժամ)

- Ուսուցման ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաներ:



- Ակտիվ ուսուցման մեթոդներ, դրանց կիրառումը «Տեխնոլոգիա» առարկայի դասերին:
- Ուսուցման հնարներ, վարժություններ:
- Հեռավար ուսուցում:

Դասընթացի գնահատում և ամփոփում 1 ժամ

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի վերապատրաստման դասընթացի թեմատիկ պլանավորումը համապատասխանում է առարկայական ծրագրին:

N	Թեմա	Ժամաքանակ			Նպատակ	Վերջնարդյունք	Ստուգման ձևը
		Ընդ.	Տես.	Գործ			
1.	«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը և խնդիրները:	1	1		Մասնակիցներին ծանոթացնել «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակին, խնդիրներին, հայեցակարգին:	Ուսուցիչը կկարողանա՝ Հիմնավորել «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման նպատակները, կիրառական և գործնական նշանակությունը:	Բանավոր հարցում
2.	Խմբային աշխատանքի իրականացումը «Տեխնոլոգիա»	3		1	Ծանոթացնել ուսուցման գործընթացում աշխատանքի կազմակերպման ձևերին, մասնավորապես խմբային	Տիրապետել սովորողների խմբային աշխատանքը ճիշտ կառավարելու հնարներին:	Խ/ա



	առարկայի ուսուցման գործընթացում:				աշխատանքին որպես «Տեխնոլոգիան առարկայի դասերին սովորողների ակտիվությունը խթանելու ձև:		
3.	Գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը «Տեխնոլոգիան առարկայի դասերին:	5	1	4	Մասնակիցների օգնությամբ բացահայտել ՆՈԻ-ն գործնական աշխատանքների արդյունավետությունը «Տեխնոլոգիան առարկայի դասերին:	Իրականացնել գործնական, նախագծային հետազոտական աշխատանքներ:	Նախագիծ
4.	Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը:	6	4	2	Ծանոթացնել ինտեգրված ուսուցման ընձեռնած հնարավորություններին, նաև՝ միջառարկայական կապերը դիտարկել իբրև ինտեգրված ուսուցման հենք:	- Ապահովել միջառարկայական և ներառարկայական կապերը: - Պլանավորել և կազմակերպել ինտեգրված դասեր	Ինտ. Թեմ. Միավ. խ/ա
5.	ՏՀՏ ներքին օգտագործումը «Տեխնոլոգիան առարկայի դասարանային և արտադասարանային պարամունքների ժամանակ:	1		1	Մասնակիցներին ծանոթացնել ՏՀՏ-ների կիրառման նոր հնարավորություններին, դրանք ծառայեցնել ուսուցման և դաստիարակության գործընթացներին:	«Տեխնոլոգիան առարկայի դասերին արդյունավետ օգտագործել ՏՀՏ-ների ընձեռնած հնարավորությունները:	Թեստ
6.	«Տեխնոլոգիան առարկայի ուսուցման գործընթացում	1	1		Մեկնաբանել կոմպետենցիայի «արժեհամակարգե կառուցատարրի	Ուսուցիչը կիմանա՝ «Տեխնոլոգիան առարկայի չափորոշչով սահմանված	Բ/հ



	սովորողների արժեհամակարգի ձևավորումը:				կարևորությունը, այն դիտարկել իբրև կրթության հիմք և վերջնարդյունք:	սովորողների արժեհամակարգի ձևավորմանն ուղղված վերջնարդյունքները և կարողանա ձևավորել դրանք:	
7.	Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը:	4	1	3	Բացատրել ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորելու, ստեղծագործական մտածողությունը զարգացնելու ուղիները /առաջադրանքներ, խաղեր են/:	Ուսուցիչը կկարողանա՝ ստեղծել և կիրառել գործնական առաջադրանքներ, որոնք դասերին կձևավորեն ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ, ինչպես նաև կզարգացնեն ստեղծագործական մտածողությունը:	Գ/աշխ
8.	Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը:	2	1	1	Ծանոթացնել գնահատման ձևերին, տեսակներին, գնահատման հարցաշարերի կազմման սկզբունքներին:	- Ուսուցիչը կիմանա ուսումնական գործունեության գնահատման ձևերն ու տեսակները, - Կկարողանա կազմել ձևավորող գնահատման ստուգաթերթ, - Կկարողանա միավորային ճիշտ գնահատում	թեատ



						իրականացնել:	
9.	Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները «Տեխնոլոգիա» առարկայի դասերին:	6	2	4	▪ Ձևավորել, ընդլայնել և զարգացնել ուսուցման և դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդները արդյունավետ կիրառելու հմտություններ:	• Ուսուցիչը կկարողանա ընտրել տվյալ թեմայի ուսուցման և դասավանդման արդյունավետ տեխնոլոգիաներ, մեթոդներ: • Կտիրապետի «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման տեխնոլոգիաներին, մեթոդներին: • Կկիրառի դասավանդման արդյունավետ տեխնոլոգիաներ, մեթոդներ՝ ապահովելով տարբերակված ուսուցում յուրաքանչյուր սովորողի /այդ թվում ԿԱՊԿՈՒ/ համար:	Գ/ա
	Դասընթացի գնահատում և ամփոփում	1			Պարզել դասընթացի արդյունավետությունը	Ուսուցիչների ձեռքբերած գիտելիքներ, ձևավորված կարողություն- հմտություններ, դիրքորոշում-արժեքներ:	Թեստ

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, որն արհեստին ու արվեստին հաղորդակցվելու, աշխատանքի ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային



կարիքներին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այս առարկան տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է:

«Տեխնոլոգիա» առարկան շուկայական տնտեսության պայմաններում նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքի: Հանրակրթության պետական չափորոշչով «Տեխնոլոգիանե՝ որպես ԲՏՀՄ ոլորտի պարտադիր առարկա, ուսումնասիրվում է 1-6-րդ դասարաններում, իսկ 7-12-րդ դասարաններում՝ «Արվեստ և արհեստե ոլորտի մեկ ինտեգրված առարկայով: Առարկայի բովանդակությունը կառուցվում է 5 հիմնական գաղափարների վրա՝ գծային սկզբունքով:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը **տարրական** դպրոցում նպատակաուղղված է նյութերի, դրանց հատկությունների, մշակման եղանակների, մարդու կյանքում աշխատանքի դերի կարևորության, մասնագիտությունների մասին գիտելիքների ձեռքբերմանն ու ընդլայնմանը, նախնական աշխատանքային հմտությունների, աշխատանքային գործիքների գործառույթների, կենցաղային սարքերն ու գործիքներն անվտանգ կիրառելու, նյութերը մշակելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Կրտսեր դպրոցականը նյութերն ուսումնասիրելու, համեմատելու, համադրելու, մշակելու, պարզ դիտարկումներ կատարելու, պրակտիկ աշխատանքի բազմազան ձևերին, ձեռարվեստի տարբեր տեսակներին տիրապետելու շնորհիվ կկարողանա նախապատրաստվել հետագա աշխատանքին:

Տարրական դասարաններում ուսումնասիրության առանցքում նյութերն են, դրանց հատկությունների ուսումնասիրությունը, մշակման եղանակների տիրապետումը (պարզից բարդ սկզբունքով): Առաջին և երկրորդ դասարաններում աշխատանքի հիմքը թուղթն է, բնական և արհեստական նյութերը: Մանածագործական նյութերով աշխատանքը սկսվում է երրորդ դասարանից, երբ երեխաներն արդեն նյութերով աշխատելու բավականաչափ փորձ կունենան և կկարողանան անվտանգ աշխատել տարբեր տեսակի ասեղներով, մկրատներով: Աշխատանքի տեսակների ընտրությունն էլ, ըստ դասարանների, նույն սկզբունքով է կատարվում. ապլիկացիա, խճանկար, օրիգամի (հարթ, ապա տարածական), մոդուլային օրիգամի, թելանկար, կոմպոզիցիա և այլն: Չորրորդ դասարանից սկսվում է ծանոթացում գծագրական պարզ գործիքներին, ձեռարվեստի տարբեր տեսակներին, դեկորատիվ-



կիրառական արվեստին, հայկական զարդանախշերի իմաստային ու գաղափարական բովանդակությանը, գեղարվեստական շինվածքներ նախագծելու պարզագույն տեխնիկաներին:

Տարրական դպրոցում առարկայի ուսուցումը նպատակաուղղված է «Հանրակրթության պետական չափորոշիչն փաստաթղթով սահմանված հետևյալ վերջնարդյունքների ձևավորմանը:

Տարրական դպրոցում սովորողը պետք է՝

- 1) հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար,
- 2) դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- 3) համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ ուսումնասիրություններ, կատարի առաջադրանքներ, անի պարզ եզրակացություններ և ներկայացնի ստացված արդյունքները,
- 4) տարբերակի և կիրառի բնական ռեսուրսները խնայելու, շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու եղանակները, մասնակցի բնապահպանական պարզ միջոցառումների,
- 5) իմանա, որ շրջակա աշխարհի ճանաչողության եղանակներից մեկը գիտությունն է, ներկայացնի մարդու և բնության վրա գիտության որոշ ձեռքբերումների ազդեցությունը,
- 6) ունենա գիտելիքներ և հմտություններ օբյեկտները չափելու, հաշվելու, համեմատելու, նկարագրելու, դրանց քանակական, որակական և տարածական պարզ հարաբերակցությունները գնահատելու համար,
- 7) ճանաչի և պատկերի որոշ երկրաչափական պատկերներ, ունենա պարզ տարածական պատկերացում,
- 8) պատկերացում ունենա ձեռնարկատիրական գործունեության կարևորության մասին, բերի պարզ օրինակներ,
- 9) դրսևորի տարրական աշխատանքային հմտություններ, անվտանգ օգտվի կենցաղային սարքերից, աշխատանքային որոշ գործիքներից և նյութերից,
- 10) գտնի իր սխալները և ձգտի դրանք ուղղել ինքնուրույն կամ աջակցությամբ,
- 11) գիտակցի իր ընտանեկան, ազգային, քաղաքացիական պատկանելությունը,
- 12) ճանաչի իր հայրենիքը, նախնական գիտելիքներ ունենա Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին,



- 13) ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք,
- 14) պահպանի սեփական մարմնի խնամքի, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնները, գիտակցի առողջ սնվելու անհրաժեշտությունը,
- 15) ծանոթ լինի տարբեր մասնագիտությունների և զբաղմունքների, ըստ մասնագիտության՝ աշխատանքային գործիքներին և գործառույթներին,
- 16) իմանա մասնագիտությունների կարևորության, մարդու կյանքում աշխատանքի դերի մասին:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը **միջին** դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, տեխնոլոգիական գիտելիքների և կենցաղային հմտությունների ձեռքբերում: Դասավանդումը նպատակաուղղված է տարրական աշխատանքային հմտությունների ձևավորմանը, գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության և ձեռնարկատիրության մասին սովորողի գիտելիքների ընդլայնմանը, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորմանը: «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ արհեստներին ծանոթանալու միջոցով:

Միջին դպրոցում սովորողը պետք է՝

- 1) իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ.
- 2) կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս.
- 3) վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից.
- 4) ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա.



- 5) տարբերի ձեռնարկատիրական գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ.
- 6) ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակը արդյունավետ տնօրինելու կարողություններ.
- 7) դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.
- 8) ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.
- 9) գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս հղումներ անի.
- 10) արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.
- 11) արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքները՝ առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.
- 12) ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ.
- 13) դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր.
- 14) կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:



«ՖԻԶԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(40 ԺԱՄ)

1. Բաժնի ուսումնասիրության նպատակը և բովանդակությունը

Բաժնի ուսումնասիրության նպատակը

Բաժնի ուսումնասիրության նպատակն է ֆիզիկայի ուսուցիչներին ծանոթացնել «Հանրակրթության պետական չափորոշիչ և ծրագրերն նոր փաստաթղթի, ինչպես նաև «Ֆիզիկա առարկայի չափորոշչային պահանջներին, ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ժամանակակից տեխնոլոգիաներին, ուսուցման մեթոդներին, նախագծային մեթոդների իրականացման հիմունքներին, ֆիզիկայից խնդիրների լուծման մեթոդաբանությանը, ինչպես նաև լաբորատոր և գործնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ձևերին՝ ՏՀՏ -ի գործիքների կիրառմամբ:

1.1 Բաժնի ուսումնասիրության բովանդակությունը

1. Թեմա 1 - Ուսումնական առարկայի ուսուցման նպատակները և խնդիրները

1.1. Ենթաթեմա 1 - Կրթության բովանդակության նորացման հիմնախնդիրները ժամանակակից փուլում:
Չափորոշչահենային կրթության էությունը և կարևորությունը

1.2. Ենթաթեմա 2 - Հանրակրթական պետական չափորոշիչ:

1.3. Ենթաթեմա 3 - Հանրակրթական դպրոցում «Ֆիզիկա առարկայի հիմնական և ավագ դպրոցի չափորոշիչների ու ծրագրերի վերլուծություն

1.4. Ենթաթեմա 4 -»Ֆիզիկա առարկայի բովանդակության կառուցման սկզբունք ները և առարկայի հիմնական գաղափարները

1.5. Ենթաթեմա 5 -»Ֆիզիկա առարկայի նպատակների և վերջնարդյունքների կառուցման սկզբունքները:

2. Թեմա 2 - Խմբային աշխատանքի իրականացումը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում

2.1. Ենթաթեմա 1 - Խմբային գործընթացը որպես համագործակցային ուսուցման տարր: Խմբային աշխատանքի կազմակերպման մշակույթի ձևավորումը դասարանում: Խմբային աշխատանքի իրականացման մանկավարժահոգեբանական նպատակահարմարությունը և իրականացման առանձնահատկությունները ֆիզիկայի ուսուցման գործընթացում



2.2. Ենթաթեմա 2 - Դասերի պլանավորում խմբային աշխատանքի կիրառմամբ

2.2.1-Խմբերի ձևավորման սկզբունքները, եղանակները:

2.2.2-Խմբային աշխատանքի առանձնահատկությունները ֆիզիկայի ուսուցման գործընթացում:

3. Թեմա 3 - Լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը ուսումնական առարկայի դասերին

3.1-Ենթաթեմա 1 - Գիտական մեթոդի էությունը

3.2-Ենթաթեմա 2- Լաբորատոր, գործնական / նախագծային աշխատանքների դերն ու նշանակությունը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում

3.3-Ենթաթեմա 3 - Լաբորատոր , գործնական աշխատանքների կազմակերպումը ֆիզիկայի դասերին: Ֆիզիկական մոդելավորումը

3.4-Ենթաթեմա 4 - Ֆիզիկայից նախագծային աշխատանքների կազմակերպումը և իրականացման հիմնական ուղղությունները:

4. Թեմա 4 - Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը

4.1-Ենթաթեմա 1 - Ֆիզիկայի հիմնարար գաղափարները, չափորոշիչներում միջառարկայական կապերի շեշտադրումը:

4.2-Ենթաթեմա 2 - Միջառարկայական կապերի դերը ինտեգրված դասերի կազմակերպման գործընթացում և համապիտանի օրենքները որպես բնագիտական առարկաների ուսուցման ինտեգրման հիմք:

4.3-Ենթաթեմա 3 - Ինտեգրված ուսուցման սկզբունքներ: Մաթեմատիկական մեթոդները ֆիզիկայի ուսուցման ժամանակ:

4.4-Ենթաթեմա 4 - Ինտեգրման անհրաժեշտությունը նախագծային աշխատանքների կազմակերպման ընթացքում:

5. Թեմա 5 - ՏՀՏ օգտագործումը ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ

5.1- Ենթաթեմա 1 - ՏՀՏ գործիքների օգտագործումը ուսումնական առարկայի դասարանային պարապմունքների ժամանակ: «Ֆիզիկա առարկայից էլեկտրոնային նյութերի բազայի առկայության կարևորությունը և դիդակտիկական նշանակությունը:

5.2-Ենթաթեմա 2 - Ֆիզիկայից նախագծային աշխատանքների կատարման ժամանակ ՏՀՏ գործիքների կիրառմամբ հնարավոր ձևերը



5.3-Ենթաթեմա 3 - ՏՀՏ գործիքների օգտագործումը ֆիզիկայի արտադասարանային պարապմունքների ժամանակ:

- Դասի պլանավորման գործիքներ
- Համագործակցային հարթակներ
- Ներկայացվող ուսումնական նյութի հարստացման ՏՀՏ գործիքներ
- Գնահատման ՏՀՏ գործիքներ

6. Թեմա 6 - Ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը

6.1-Ենթաթեմա 1 - Ֆիզիկայի դերը և նշանակությունը անձի ձևավորման, մարդկության հասարակության զարգացման և տեխնիկայի առաջընթացի գործում : Սովորողների արժեհամակարգի ձևավորումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում

6.2-Ենթաթեմա 2 - Ֆիզիկայի առանձնահատուկ դերը բնապահպանական խնդիրների առաջացման և դրանց լուծման գործընթացում

7. Թեմա 7 - Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը

7.1-Ենթաթեմա 1 - Ֆիզիկայի ուսուցման ժամանակ գիտական ճանաչելիության համընդհանուր մեթոդների կիրառման անհրաժեշտությունը և կարևորությունը : Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող ռազմավարությունների ներկայացում:

7.2-Ենթաթեմա 2- Քննադատական մտածողությունը որպես սովորողների կարողունակությունները և ստեղծագործական մտածողությունը զարգացնող միջոց:

7.3-Ենթաթեմա 3 - Սովորողի ինքնությունն աշխատելու կարողությունները զարգացնող մեթոդների նկարագրություն և կիրառում գործնականում: Սովորողների կողմից ֆիզիկայից ինքնաշեն հավաքածուների, լաբորատոր սարքերի և այլ գործնական հանձնարարությունների կատարումը, որպես ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքներ

8. Թեմա 8 - Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը



8.1-Ենթաթեմա 1 - Ֆիզիկայի ուսուցման գործընթացում բովանդակային նյութի հենքի վրա ձևավորող գնահատման չափորոշային պահանջների վերլուծությունը : Ձևավորող գնահատման կարևորումը որպես ուսուցման և ուսումնառության խթանման միջոց:

8.2-Ենթաթեմա 2 - «Ֆիզիկա առարկայից ձևավորող գնահատման առաջադրանքների կազման մեթոդաբանությունը:

8.3-Ենթաթեմա 3 - Ֆիզիկայի ուսուցման գործընթացում բովանդակային նյութի հենքի վրա միավորային գնահատման չափորոշային պահանջների վերլուծությունը: միավորային գնահատման առաջադրանքների կազման մեթոդաբանությունը:

9. Թեմա 9 - Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները ուսումնական առարկայի համատեքստում

9.1-Ենթաթեմա 1 - Ավանդական, ակտիվ և փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունները, ուժեղ և թույլ կողմերը: Ուսուցման արդյունավետ հնարներ:

9.2-Ենթաթեմա 2 - Ֆիզիկայի ուսուցման որակական մեթոդները: Մոլորոդների ուսուցման արդյունավետությանը նպաստող մեթոդների և ռազմավարությունների կիրառումը ֆիզիկայի դասավանդման գործում:

- Ուսումնառության համընդհանուր ձևավորում
- Համագործակցային ուսուցման մեթոդներ
- Հիբրիդ ուսուցում
- Շրջված դասարան դասավանդման մոդելը
- Կենտրոնների տեղափոխման մոդելը
- Պրոբլեմային ուսուցում
- Տարբերակված ուսուցում

9.3-Ենթաթեմա 3 - Գաղափար ֆիզիկայի մեթոդաբանական սկզբունքների մասին (հարաբերականության, սիմետրիայի, սուպերպոզիցիայի և այլն):

9.4-Ենթաթեմա 4 - Փուլային հարթության մեթոդը ֆիզիկայում: Գաղափար աղիաբատ ինվարիանտի մասին



9.5-Ենթաթեմա 5 - Ֆիզիկայի խնդիրների լուծման մեթոդաբանությունը: Ֆիզիկական խնդիրների լուծման որակական մեթոդները: Գաղափար խնդիրների լուծման մակարդակների մասին:

9.6-Ենթաթեմա 6- Ֆիզիկայի ուսուցմանն արդյունավետության բարձրացումը՝ առաջանցիկ ուսուցման տարրերի կիրառմամբ

9.7-Ենթաթեմա 7- ֆիզիկայից ընդհանրացնող կրկնությունների կազմակերպման ուսումնամեթոդական համակարգը

1.2. Բաժնի ուսումնառության վերջնարդյունքները

1) Ուսուցիչը կկարողանա՝

ա) հիմնավորել ուսումնական առարկայի ուսուցման նպատակները, կիրառական և գործնական նշանակությունը,

բ) հստակ ձևակերպել դասի նպատակները,

գ) ընտրել տվյալ թեմայի ուսուցման և ուսումնառության արդյունավետ մեթոդներ,

դ) կազմակերպել արտադասարանային աշխատանքներ,

ե) իրականացնել լաբորատոր, գործնական, նախագծային հետազոտական աշխատանքներ,

զ) ապահովել միջառարկայական և ներառարկայական կապերը,

է) օգտագործել լաբորատոր սարքավորումները նպատակային,

«ՖԻԶԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

N	Թեմա, ենթաթեմա	Ժամաքանակ /ժամ/		Թեմայի ուսումնառության վերջնարդյունք	Գործնական աշխատանքի նկարագրություն
		Տես	Գործն		
	Գիտելիքների ստուգման նախնական թեստ		0.5		
1.	Ուսումնական առարկայի ուսուցման նպատակները և խնդիրները 1.1 Կրթության բովանդակության նորացման հիմնախնդիրները ժամանակակից փուլում:	1	1	Կիմանա՝ այն խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել ֆիզիկայի ուսուցման ժամանակ Կկարողանա ներկայացնել	Քննարկում՝ «Հանրակրթական դպրոցի Ֆիզիկա առարկայի չափորոշիչն ու օրինակելի



	Չափորոշչափենային կրթության էությունը և կարևորությունը 1.2. Հանրակրթական պետական չափորոշիչ: 1.3. Հանրակրթական դպրոցում «Ֆիզիկա առարկայի հիմնական և ավագ դպրոցի չափորոշիչների ու ծրագրերի վերլուծություն 1.4. »Ֆիզիկա առարկայի բովանդակության կառուցման սկզբունք ները և առարկայի հիմնական գաղափարները 1. 5. «Ֆիզիկա առարկայի նպատակների և վերջնարդյունքների կառուցման սկզբունքները:			«Ֆիզիկա առարկայի ուսուցման նպատակն ու խնդիրները՝ Կկարողանա ներկայացնել՝ հանրակրթության պետական չափորոշիչ կառուցվածքը, կրթական բնագավառները, սովորողներին ներկայացվող պահանջները: Կկարողանա՝ ձևակերպել ֆիզիկայի տարբեր բաժինների և դասաթեմաների ուսուցման նպատակները Կտիրապետի՝ հիմնական և ավագ դպրոցի ֆիզիկայի չափորոշիչներին և ծրագրերին	ծրագիրը թեմայով: «Ֆիզիկա առարկայի հիմնական և ավագ դպրոցների նպատակի, խնդիրների բովանդակության վերլուծություն
2.	Խմբային աշխատանքի իրականացումը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում 2.1. Խմբային գործընթացը որպես համագործակցային ուսուցման տարր: Խմբային աշխատանքի կազմակերպման մշակույթի ձևավորումը դասարանում: Խմբային աշխատանքի իրականացման մանկավարժահոգեբանական նպատակահարմարությունը և իրականացման առանձնահատկությունները ֆիզիկայի ուսուցման գործընթացում 2.2. Դասերի պլանավորում խմբային աշխատանքի կիրառմամբ	1	1	Կծանոթանա տարբերակված ուսուցման կազմակերպման մանկավարժահոգեբանական նպատակահարմարությանը Կգնահատի խմբային աշխատանքի դերը նախագծային ուսուցման ժամանակ	Տարբերակված ուսուցման առանձնահատկությունների քննարկում: Նախատեսված է խմբային աշխատանք: Հանձնարարություն՝ տրված թեմայի շրջանակներում տարբերակված ուսուցման կիսաոմամբ դասի պլանի, ընթացքի ներկայացում:



	2.2.1 Խմբերի ձևավորման սկզբունքները, եղանակները: 2.2.2 Խմբային աշխատանքի առանձնահատկությունները ֆիզիկայի ուսուցման գործընթացում:				
3.	Լաբորատոր և/կամ գործնական, նախագծային աշխատանքների կազմակերպումը ուսումնական առարկայի դասերին 3.1. Գիտական մեթոդի էությունը 3.2 . Լաբորատոր, գործնական / նախագծային աշխատանքների դերն ու նշանակությունը ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում 3.3. Լաբորատոր , գործնական աշխատանքների կազմակերպումը ֆիզիկայի դասերին: ֆիզիկական մոդելավորումը 3.4. Ֆիզիկայից նախագծային աշխատանքների կազմակերպումը և իրականացման հիմնական ուղղությունները:	2	2	Կիմանա լաբորատոր աշխատանքների կատարման ժամանակ ֆիզիկական մոդելավորման դերի մասին Կիմանա նախագծային աշխատանքների իրականացման փուլերը Կծանոթանա ֆիզիկայից նախագծային աշխատանքների իրականացման հիմնական ուղղություններին	Ֆրոնտալ լաբորատոր աշխատանքի կատարման մեթոդիկայի քննարկում, որի հիմքում ընկած է խմբային աշխատանքը: Խմբային աշխատանք Ֆիզիկայի դասընթացում կիրառվող մոդելների և նրանց առանձնահատկությունների քննարկում: Ֆիզիկական մոդելների օգտագործմամբ խնդիրների լուծումների վերլուծություն
4.	Միջառարկայական կապերի օգտագործումը և ինտեգրված դասերի կազմակերպումը 4. 1. Ֆիզիկայի հիմնարար գաղափարները, չափորոշիչներում միջառարկայական կապերի շեշտադրումը: 4.2. Միջառարկայական կապերի դերը ինտեգրված դասերի կազմակերպման գործընթացում և	2	2	Կիմանա ինտեգրված դասերի կազմակերպման ուսումնամեթոդական համակարգի մասին Կգնահատի միջառարկայական կապերի դերը ինտեգրված դասերին կազմակերպման գործընթացում Կծանոթանա ֆիզիկայի ուսուցման	Ֆիզիկայի տարբեր թեմաներում առկա միջառարկայական կապերի քննարկում (հայոց լեզու, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն): Խմբային աշխատանք:



	համապիտանի օրենքները որպես բնագիտական առարկաների ուսուցման ինտեգրման հիմք: 4.3. Ինտեգրված ուսուցման սկզբունքներ: Մաթեմատիկական մեթոդները ֆիզիկայի ուսուցման ժամանակ: 4.4. Ինտեգրման անհրաժեշտությունը նախագծային աշխատանքների կազմակերպման ընթացքում:			Ժամանակ մաթեմատիկական մեթոդների կիրառմանը	Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է հանձնարարված թեմայում առկա միջառարկայական կապերը:
5.	SՀS օգտագործումը ուսումնական առարկայի դասարանային և արտադասարանային պարապմունքների ժամանակ 5.1. SՀS գործիքների օգտագործումը ուսումնական առարկայի դասարանային պարապմունքների ժամանակ: «Ֆիզիկա առարկայից էլեկտրոնային նյութերի բազայի առկայության կարևորությունը և դիդակտիկական նշանակությունը: 5.2. Ֆիզիկայից նախագծային աշխատանքների կատարման ժամանակ SՀS գործիքների կիրառմամբ հնարավոր ձևերը 5.3. SՀS գործիքների օգտագործումը ֆիզիկայի արտադասարանային պարապմունքների ժամանակ: • Դասի պլանավորման գործիքներ • Համագործակցային հարթակներ • Ներկայացվող ուսումնական նյութի հարստացման SՀS գործիքներ • Գնահատման SՀS գործիքներ	1	1	Կլարոդանա կիրառել տեղեկատվական և թվային սարքերը որպես ժամանակակից աշխատանքային գործիք, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ ֆիզիկայի դասապրոցեսին լրացուցիչ էլեկտրոնային նյութերը և վիրտուալ ցուցադրական, լաբորատոր աշխատանքների կատարելու համար ստեղծել դասավադման համար ուսումնա-օժանդակ էլեկտրոնային նյութեր ներկայացնել նախագծային աշխատանքներում SՀS միջոցներ	Ֆիզիկայի էլեկտրոնային ուսումնա-օժանդակ, դիդակտիկ նյութերի, վիրտուալ ցուցադրությունների, լաբորատոր աշխատանքների, դասագրքերի դիտարկում: Դասավադման մեջ տարբեր տեղեկատվական և թվային սարքերի կիրառությունների օրինակների քննարկում: Ֆիզիկական խնդիրների ներկայացում, որոնց լուծումը կարող է կատարվել SՀS միջոցների կիրառմամբ: Հանձնարարություն: Տրված թեմայի վերաբերյալ էլեկտրոնային նյութերի, SՀS միջոցների կիրառմամբ դիդակտիկ նյութերի ստեղծում և ներկայացում



6.	Ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը 6.1. Ֆիզիկայի դերը և նշանակությունը անձի ձևավորման, մարդկության հասարակության զարգացման և տեխնիկայի առաջընթացի գործում : Սովորողների արժեհամակարգի ձևավորումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում 6.2. Ֆիզիկայի առանձնահատուկ դերը բնապահպանական խնդիրների առաջացման և դրանց լուծման գործընթացում	1	1	Կկարողանա • ներկայացնել հայտնագործությունների, գյուտերի օրինակներ, որոնք ցույց են տալիս ֆիզիկայի ազդեցությունը հասարակության ու տեխնիկայի զարգացման մեջ • քննարկել գիտատեխնիկական զարգացմանն առնչվող էթիկական հարցերը գնահատել համաշխարհային և ՀՀ-ում առկա բնապահպանական խնդիրներն ու ռիսկերը, ֆիզիկայի նվաճումների դերը բնապահպանական խնդիրների լուծման գործում, սովորողների մոտ զարգանել բնապահպանական միջոցառումներին մասնակցելու, նախաձեռնելու, պլանավորելու կարողություններ	Հանձնարարություն: Տեղեկատվության ներկայացում • ֆիզիկայի ազդեցությունը հասարակության ու տեխնիկայի զարգացման մեջ ցուցադրող գյուտերի, հայտնագործությունների օրինակներ • համաշխարհային և ՀՀ-ում առկա բնապահպանական խնդիրներն ու ռիսկերը, ֆիզիկայի նվաճումների դերը բնապահպանական խնդիրների լուծման գործում:
7.	Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը 7.1. Ֆիզիկայի ուսուցման ժամանակ գիտական ճանաչելիության համընդհանուր մեթոդների կիրառման անհրաժեշտությունը և կարևորությունը : Սովորողների ճանաչողական հմտություններ,	2	2	Կկարողանա սովորողների մոտ խնդիրների արդյունավետ լուծումներ մշակելու, տարբեր բարդության ալգորիթմներ, տրամաբանական դատողություններ և ֆիզիկական մոդելներ կազմելու, կիրառելու, ինքնաշեն սարքավորումներ	Հետաքրքրաշարժ, ոչ ստանդարտ, որակական խնդիրների քննարկում: Հետազոտական աշխատանքների կատարման ուղեցույցի ներկայացում



	գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող ռազմավարությունների ներկայացում: 7.2. Քննադատական մտածողությունը որպես սովորողների կարողունակությունները և ստեղծագործական մտածողությունը զարգացնող միջոց: 7.3. Սովորողի ինքնուրույն աշխատելու կարողությունները զարգացնող մեթոդների նկարագրություն և կիրառում գործնականում: Սովորողների կողմից Ֆիզիկայից ինքնաշեն հավաքածուների, լաբորատոր սարքերի և այլ գործնական հանձնարարությունների կատարումը, որպես ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքներ			պատրաստելու կարողություններ:	
8.	Սովորողների ուսումնական գործունեության միավորային և ձևավորող գնահատումը 8.1. Ֆիզիկայի ուսուցման գործընթացում բովանդակային նյութի հենքի վրա ձևավորող գնահատման չափորոշչային պահանջների վերլուծությունը : Ձևավորող գնահատման կարևորումը որպես ուսուցման և ուսումնառության խթանման միջոց: 8.2. «Ֆիզիկա առարկայից ձևավորող գնահատման առաջադրանքների կազման մեթոդաբանությունը: 8.3. Ֆիզիկայի ուսուցման գործընթացում	1	1	Կկարողանա • վերլուծել միավորային ամփոփիչ հատկորոշիչները, գնահատել նրանց համապատասխանությունը չափորոշչային պահանջներին • կազմել թեմատիկ վերջնարդյունքների ամբողջական ստուգումն ապահովող ձևավորող առաջադրանքների, միավորային ամփոփիչ թեստերի նմուշներ:	Ֆիզիկայի չափորոշիչներին համապատասխանող վերջնարդյունքների ստուգումն ապահովող հատկորոշիչների ներկայացում, ձևավորող առաջադրանքների, միավորային ամփոփիչ աշխատանքների նմուշների վերլուծություն: Հանձնարարություն՝ կազմել



	բովանդակային նյութի հենքի վրա միավորային գնահատման չափորոշչային պահանջների վերլուծությունը: միավորային գնահատման առաջադրանքների կազման մեթոդաբանությունը:				միավորային ամփոփիչ թեստերի նմուշներ:
9.	Դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդները և ռազմավարությունները ուսումնական առարկայի համատեքստում 9.1. Ավանդական, ակտիվ և փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունները, ուժեղ և թույլ կողմերը: Ուսուցման արդյունավետ հնարներ: 9.2. Ֆիզիկայի ուսուցման որակական մեթոդները: Սովորողների ուսուցման արդյունավետությանը նպաստող մեթոդների և ռազմավարությունների կիրառումը ֆիզիկայի դասավանդման գործում: • Ուսումնառության համընդհանուր ձևավորում • Համագործակցային ուսուցման մեթոդներ • Հիբրիդ ուսուցում • Շրջված դասարան դասավանդման մոդելը • Կենտրոնների տեղափոխման մոդելը • Պրոբլեմային ուսուցում • Տարբերակված ուսուցում 9.3. Գաղափար ֆիզիկայի մեթոդաբանական սկզբունքների մասին (հարաբերականության, սիմետրիայի, սուպերպոզիցիայի և այլն): 9.4. Փուլային հարթության մեթոդը ֆիզիկայում: Գաղափար աղիաբատ ինվարիանտի մասին 9.5. Ֆիզիկայի խնդիրների լուծման	4	3	Կլարոդանա կիրառել ժամանակակից դասավանդման մեթոդները ֆիզիկայի ուսուցման մեջ, որը միտված է բնագիտամաթեմատիկական գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը, ինչպես նաև հետազոտական, դիտարկման և վերլուծական հմտությունների, խնդիրների լուծման, տրամաբանական, քննադատական և ստեղծագործական մտածողության, նախաձեռնողականության, հաղորդակցության և թվային գրագիտության հմտությունների զարգացմանը: Կծանոթանա ֆիզիկայի խնդիրների լուծման մեթոդաբանությանը: Կիմանա ֆիզիկական խնդիրների լուծման մակարդակներին Կծանոթանա առաջանցիկ ուսուցման էությանը և մոդելներին: Կգնահատի առաջանցիկ ուսուցման	Հետաքրքրաշարժ, ոչ ստանդարտ, որակական խնդիրների քննարկում: Ֆիզիկայի մեթոդաբանական սկզբունքի կիրառմամբ խնդիրների քննարկում, վերլուծություն: Փուլային հարթության մեթոդի կիրառում և աղիաբատ ինվարիանտի քննարկում այլ ֆիզիկական երևույթներում և պրոցեսներում: Որակական մեթոդներով ֆիզիկական խնդիրների քննարկում և լուծում: Ֆիզիկական խնդիր լուծման քննարկում տարբեր մակարդակներում: Տարբեր դասաթեմաների ուսուցման ժամանակ առաջանցիկ ուսուցման իրականացման օրինակների քննարկում: Առաջանցիկ ուսուցման



	մեթոդաբանությունը: Ֆիզիկական խնդիրների լուծման որակական մեթոդները: Գաղափար խնդիրների լուծման մակարդակների մասին: 9.6. Ֆիզիկայի ուսուցմանն արդյունավետության բարձրացումը՝ առաջանցիկ ուսուցման տարրերի կիրառմամբ 9.7. Ֆիզիկայից ընդհանրացնող կրկնությունների կազմակերպման ուսումնամեթոդական համակարգը			կիրառման դիդակտիկական նպատակահարմարությանը: Կկարողանա դասավանդման գործընթացում կիրառել առաջանցիկ ուսուցման տարրեր: Կիմանա ասոցիատիվ-առաջանցիկ կապերի և գիտական իմացության մեթոդների մասին Կձանոթանա ընդհանրացնող կրկնությունների կազմակերպման ուսումնամեթոդական համակարգին: Կկարողա նա սովորողների գիտելիքները համակարգել և կարևորել ֆիզիկայի դասընթացի առանցքային գաղափարները:	իրականացման ժամանակ գիտական իմացության տարբեր մեթոդների կիրառման օրինակների քննարկում: Տարբեր դասաթեմաներից տեսական նյութի վերլուծություն՝ այդ թեմայի վերաբերյալ խնդիրների լուծման նախապատրաստման տեսանկյունից: Ֆիզիկայի տարբեր բաժիններից կրկնությունների կազմակերպման քննարկում: Գործնական աշխատանքների կազմակերպում «Ֆիզիկա-12 (II կիսամյակ) ուսումնական ձեռնարկի շրջանակում:
	Գիտելիքների ստուգման վերջնական թեստ		0.5		
	Ընդամենը՝	40 ժամ			



«ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ (40 ԺԱՄ)

Թեմա 1. Չափորոշչահեն կրթություն (1 ժամ)

- ՀՀ կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները, (ՀՊԶ): Չափորոշչահեն առարկայական ծրագրեր:
- Առարկայի բովանդակությանը ներկայացվող ընդհանրական պահանջներ: Մաթեմատիկայի հիմնական ուղղությունների և տեսությունների ընդգրկվածությունը ծրագրային նյութում:
- Ավագ դպրոցի ուսումնական ծրագրերի առանձնահատկությունները:

